Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
1313

1999

50

# ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

## ԽՕՍՔ ԱՌՈՂՋԱԿԱՆ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի. ՏՊԱՐԱՆԻ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1873

Լեռ
1313


ԼԻՕՆ

ՙԱՄԷՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

ԽՕՍՔ

ԱՌՈՂՋԱԿԱՆ

# ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

# ԽՕՍՔ

# ԱՌՈՂՋԱԿԱՆ

ԳՐԵՑ

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՄԻԱԲԱՆ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

-1873-

Հր 1316

41313-ա

## ԱՌ ԲԱՐԵՍԷՐ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Երբ փոքրիկ ուսուցակիս ճակատը կարդաս, ինչ մեծամեծ ակնկալութիւններ չունենաս. քանզի այդ յոյսերդ պսակելու չափ մտաւոր ոչ ճոխութիւն ունիմ և ոչ զօրութիւն, բայց որովհետեւ բարոյական օրէնքը ինձ կուսուցանէ որ "Եթէ ուզածդ չես կարող ընել, պարտաւոր ես կրցածդ ընել", մանաւանդ իմ Տէրս ալ հրամայած է ինձ ձեր սիրոյն ու փրկութեան համար զոհել իմ ջանքս և խօսիլ՝ի վերայ ուսմանց ձեր փրկութեան համար, ուստի Աստուծոյ ինձ յանձնած փոքրիկ տաղանդին և իմ տկար կարողութեանս համեմատ՝ ձեր անմահ հոգւոյ և մանկանացու մարմնոյն փրկութիւնն ու առողջութիւնը նպատակ դրի և այս խօսքերս ամենաքաղցր սիրով գրեցի։

Դուն ալ Ազնիւ ընթերցող, ակնկալածդ չգտնելուդ համար մ՝արհամարհեր իմ խօսքերս. այլ ինչ հասակի և վիճակի մէջ ալ ըլլաս՝ կարդա զանոնք, և մտիկ ըրէ. վնաս չես ըներ, անշուշտ օգուտ պիտի քաղես անոնցմէ. վասն զի բարեկամական անկեղծ զգացմամբ է որ կը խօսի և ոչ ուրիշ բան։

Արդ եթէ սիրով և խոնարհութեամբ կարդալով օգուտ մի քաղես, փառք տուր ամենաբարի Աստուծոյն՝ ուրկէ ամէն բարի ու կատարեալ պարգեւները կիջնան. իսկ ինչ թերութիւն և անօգտակարութիւն որ գտնես, այն ամէնը իմս են, որոյ համար ներող լինելդ խնդրելով կը մնամ քեզ, Հայ ազգիս բարւոյն ցանկացող անձնուէր.

Մ. Վ. Մ.



Թո՛ղ տուէք մանկտւոյդ՝ և մի՛ արգելուք զդոսա գալ առ իս․ զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից ։ Մատ․ ԺԹ․ 14։

# ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

ԽՕՍՔ

## ԱՌՈՂՋԱԿԱՆ

Մարդկային կենաց երջանկութեան ամենակարեւոր պայմաններէն մին է ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ․ որուն նկատմամբ դժբաղդաբար խիստ անտարբեր են մարդիկ․ քանի որ զայն կը փճացնեն․ բազմաթիւ պատճառներով, անհոգութեամբ, անզգուշութեամբ, կամապաշտութեամբ, անհնազանդութեամբ և զանազան հաճոյից մէջ զեղծանելով կը կորսնցնեն իրենց առողջութիւնը․ և երբ ձեռքէ հանեն զայն՝ յայնժամ նորա յարգը կը զգան, կորսնելուն վերայ կ՚ափսոսան և շուարած ու շփոթած՝ կ՚բախեն դարման որոնել․ այլ ցաւալի ճշմարտութիւն մի է խոստովանիլը թէ այնու-

հետեւ նոյն բնութեան ու ընդունած դարմանը գրեթէ շարունակ երկրորդական է. որով յիրաւի բազմիցս կըգտանան առողջութիւն, բայց ոչ իրենց նախկին ունեցածը. եւ շատ անգամ իսկ վնասակար կը լինի այս երկրորդ առողջութիւնը։ Քանզի անով նորէն կը սկսին իրենց կամահաճութիւնը գործածել, որով կանկանին առաւել եւս տկարութեան մէջ և առողջութիւնն յայնժամ կը լինի աւելի դժուարագիւտ։ Վասն զի ոչ այնչափ ստանալը՝ որչափ զայն պահպանելն է քաջութիւն։

Մարդիկ՝ Աստուծոյ իմաստութեան օրէնքէն խոտորած օրէն կորուսին իրենց առողջութիւնը և խիստ հին ատենէ սկսեալ մինչեւ մեր օրերը զայն կը փնտռեն։ Քրիստոնէութիւնը իւր մարդասէր օրէնքներովը պարգեւեց զայն վերստին, բայց մարդիկ անոր ալ [illegible] չեն հնազանդիր։

Այս նիւթը բազմաց ուշադրութիւնը գրաւած լինելով հին ատենէ ՚ի վեր՝ շատերը մարդասիրական փութով շատ բան գրեցին ու խօսեցան



և տակաւին կը գրեն ու կը խօսին յագուտ այն թշուառ ու կարեկցութեան արժանի մարդկային խմբին, որք թէ իրենց անձին և թէ իւրեանց ապագայ սերնդոց գերեզմանն իրենց ձեռօքը կը փորեն, եւ խաղալով ու խայտալով, խնդալով ու ցնծալով մահուան գիրկը կը վազեն։

Մեք կը հաւատամք որ այն գըրուածներն անօգուտ չեն եղած ամեն անոնց՝ որք հնազանդութեամբ լսած և սրտով կատարած են նոյն տուած խրատներն ու խորհուրդները. քանզի Ճշմարիտ է սա առածը թէ «Օգտակար խրատուց լաւ ունկնդրութիւն ընելու յօժարութիւնը աղէկ կեանք անցնելու սկզբնաւորութիւնն է»։ Եւ արդարեւ այսպիսի դիպուց մէջ յօժարական ունկնդրութեամբ եւ հնազանդութեամբ միայն կարող է մարդ մեծամեծ օգուտներ քաղել. իսկ առանց անոր անհնար է ուրիշ միջոցաւ փափաքածը ձեռք ձգել, քանզի միայն լսելն ու գիտնալը հերիք չէ այլ հնազանդութեամբ գործադրել պէտք է։

Շատ անգամ՝ լսելով՝ եւ մեր իսկ աչաց առջեւ տեսնելով տգիտութեան ողորմելի զոհերը , ցաւելով նոցա վըտանգաւոր վիճակին վերայ եւ չը համարձակելով ու անհնար լինելով իւրաքանչիւրին յանկանէ խօսիլ , 'ի կարեկցութենէ շարժեալ կը համարձակիմ հրապարակաւ եւ ընդհանուր կերպիւ այս յօդուածս գրել . " Ականջ ունեցողը թող լսէ " :

Իմ ազնիւ եղբարքս եթէ սիրով ընդունին իմ խօսքերս եւ անոնց կամովին հնազանդելու յօժարին , այժմէն կը վստահացնեմ զիրենք որ մեծամեծ օգուտներ կարող են քաղել . եւ ես ալ նոցա սիրոյն եւ օգտին համար պիտի ջանամ դիւրիմաց գրելով մեծաց եւ փոքունց համար ալ հասկնալի եւ նըպաստաւոր ըլլալ :

Իմ՝ խօսքերուս ապացուցութիւնը ընտրած եմ Աստուծոյ եւ իմաստնոց պատուէրները , խօսքերը , խրատներն ու օրէնքները . փորձառու մարդկան եւ բժշկաց վկայութիւնները եւ բնութեան օրէնքը . այս պատճառաւ ալ



կարող է ամեն ոք վստահութեան որժանի համարելով ընդունիլ եւ օգուտ քաղել :

## Ա.

Ի՞նչ է Առողջութիւնը :

— Ներհական նիւթոց կամ մարմնոց բարեխառն զուգակշռութիւնը :

— Եւ ի՞նչ է հիւանդութիւնը :

— Հիւանդութիւնն է այն հաւասարակշռութեան խանգարումը , ներքին կենդանական ոգեաց նուազումը կամ առաւելութիւնը . հիւթոց անոնց գրգռիլը , պակսիլը եւ անոնց ապականիլը :

Աստուածային բարեխնամ նախախնամութիւնը բնութեան մէջ դըրած է ներհական նիւթոց բարեխառնութիւնը եւ արարածոց ամեն մէկուն իրենց պիտոյից համեմատ բաժնած է , որով արարածք կազմին եւ իրենց տեսակն յառաջացնելով կը յարատեւեն :

Մարդը՝ որ արարածոց գերագոյն ու կատարեալն է եւ բովանդակութիւն

տխեղերաց, ըստ խուրում պայմանի ու-
նի 'ի բնուստ կրակու ներհակ նիւթոց
այս զքանչելի համաձայնութիւնը. հե-
տեւաբար ունի նա և առողջութիւն.
որ իւր միակ գանձն է, որուն տեղն
ուրիշ ոչ ինչ չէ կրող լեցնել եթէ
դժբաղդաբար մի անգամ կորսուի։
Առողջութիւնը շնորհուած է մարդուս
իւր այս կեանքը քաղցր և բերկրալի
ընելու և յաւիտենական կեանքը ժա-
ռանգելու. ուրեմն մարդուս առող-
ջութիւնը թէ այս և թէ հանդերձեալ
կենաց երանութիւնը վայելելու կարե-
ւոր մէկ գործիքն է. և այս կարեւո-
րութիւնն լի ու լի ունի մարդը, ինչ-
պէս իւր ամենակատար կազմութենէն
յայտնի է։ Արդ ինչո՞ւ ուրեմն մարդիկ
մեծաւ մասամբ կորուսած են իրենց
այս ամենամեծ գանձը, այս պատուա-
կան առողջութիւնը որ իրենց կենաց
պիտոյից ամենակարեւորն է և առանց
անոր թշուառ կը լինին։

Մարդիկ մեծաւ մասամբ, և հա-
մարեա թէ ամեն պարագայի մէջ իրենց
յաճախ եւ լի ու լի վայելած բանին



յարգը չը ճանաչելով՝ անհոգ կը մնան.
այս անհոգութիւնը մինչեւ չմարու-
թեան կը տանի զիրենք. քանզի մտաւր
հաճոյքէ մի գրգռուած՝ առերեւոյթ
ու սուտ բարիք մի ձեռք ձգելու հա-
մար արդէն ձեռքերնին եղած ճշմարիտ
բարիքը կը կորսուսանեն։ Նա եւս օ-
տարին սեփհականութեանց վերայ
մարդկան տածած ցանկութեան կիրքը
և անկարեւոր պիտոյից արտաքոյ կար-
գի փափաքը կորսուսանել կու տայ իրենց
բուն սեպհականութիւնները, հարըս-
տութիւնը առողջութիւնը. հոգեկան
կարողութեանց մէկ մասը, յիշողու-
թիւնը, ըմբռնումը երեւակայութիւ-
նը և ուղիղ դատումը, վերջապէս շատ
անգամ կեանքն իսկ կ'կորսուսանէ. ուստի
և ամեն բարիքէ կողոպտուած կը մնայ
մարդը. որում խիստ յարմար կը գայ
այն առակը որ կ'ասէ. «Շունը գետէն
անցած ատեն իւր բերանն եղած հա-
ցին շուքը կամ պատկերը ջուրին մէջ
տեսնելով՝ բերնինը թողուց, ջուրին մէջ
երեւցածը առնելու համար, և ահա
երկուսն ալ կորսնցուց»։ Յիմարու-

թիւն չէ՞ արդեօք վայրկենական հեշտութեան համար մէկ տեւական ու կարի կարեւոր բարիքը կորսնցնել։

Մեր կիրքերն առանց կանոնաւորելու այնչափ գրգռած, շոյած ու սնուցած ենք որ բազմաթիւ վնասակար բաներ իբրեւ պիտոյք հնարած, զբօսանաց տեղ անհամեստ հաճոյք ստեղծած և իբրեւ բերկրանք չար յօժարութիւններ գտած՝ խնամով կը պահպանեմք եւ կը գործածեմք, որք աճելով 'ի մեզ կը վանեն զերկիւղածութիւնն և բոլոր առաքինութիւնները, կարտաքսեն սուրբ զգացումներն ու բարի յօժարութիւնները և կը խանգարեն մեր առողջութիւնը. այսու ամենայնիւ տակաւին չեմք ուզեր հրաժարիլ այն ոխերիմ թշնամիներէն որ զմեզ կը կեղեքեն ու թէ մեր անձին և թէ Աստուծոյ առջեւ կընեն. քանզի "Մեղք գործողը իւր անձը կ'ատէ". Սողոմոն, այն մեծ իմաստունն ու հանճարեղ փիլիսոփայն "Թիւր խորհուրդները, կըսէ, մարդն Աստուծմէ կը բաժնեն . . . ամբարիշտը և իւր ամ-



բարշտութիւնը Աստուծոյ առջեւ են։

Եւ յիրաւի, ո՞նչպէս կրնայ մարդ սիրած լինել իւր անձը, երբ կիրքերը չը չափաւորելով բուն իւր ձեռօքը կամօքն ու յօժարութեամբը իւր անձին չարիք կը հասցնէ եւ իւր կենաց քաղցրութիւնը կը դառնացնէ։ Ի՞նչպէս կրնայ սիրած լինել զԱստուած. երբ չը սովրիր ու պահեր նորա յաւիտենական օրէնքներն, որք իւր օգտին համար շնորհուած են։ Իսկ երբ մէկը չը սիրեր ոչ զԱստուած և ոչ ալ իւր անձը, նա զո՞վ պիտի կրնայ սիրել. Իմաստնոյն ըսածին պէս թէ "Այն որ իւր անձին չար է, ալ ուրիշ որո՞ւ բարի պիտի լինի. նա իւր բարեաց մէջ չը պիտի զուարճանայ"։

Յաճախ կրկնուած՝ բայց անլսելի մնացած է սա դարերու փորձովն ու աստուածային յայտնութեամբն ստուգուած ճշմարտութիւնը թէ — բնութեան օրէնք կայ. թէ այս օրինաց դէմ մեղանչողը անպատիժ չը մնար. և թէ ամեն մեղաց պատուհասն իւր մէջն է —։

Աստուած ամենաբարին իր անհուն իմաստութեամբը տիեզերքն ըստեղծելով բոլոր արարածոց հաստատութիւնը, տեւողութիւնը, շարժումն և տեսակի փոփոխութիւնն անշեղն օրինաց վերայ խարսխեց․ որ կըսուի բնութեան օրէնք․ այս բնութեան օրէնքը անողոքելի է, կոյր է նա՝ և խուլ․ իր տրամադրութեան դէմ մեղանչողին հետ խիստ արդարութեամբ կը վարուի և ներել չ'գիտեր։ Բնութեան օրինաց մէջ ամէն մեղք կամ յանցանք իր պատիժն ունի, զոր մեքենաբար կը գործադրէ ամէն անոնց վերայ, որք նորա օրինաց դէմ մեղանչելու հաճոյքը կընան․ և պատճառ այս գործադրութիւնը թէ արդարութիւն է և թէ գթութիւն․ արդարութիւն է, որով ուղղութիւն կը պահուի․ գթութիւն է որով կը կամի որ մարդիկ բարի լինին և առաջ երջանկութիւն վայելեն։ Տես ինչպէս կը բացատրէ իմաստունը․ «Ով Տէր որքան բարի և անոյշ է քու հոգիդ ամենուն վերայ, որ յանցաւորները քիչ-քիչ կը յանդիմանես և



ինչ բանով որ կը մեղանչեն, անոնցմով ազդարարութիւն ընելով կը խրատես որպէս զի չարիքէ ազատելով հաւատան քեզ Տէր․ քանզի ինչ բանով որ մեղանչէ մէկը, անով ալ պիտի տանջըւի»։ Այս խօսքերուն ճշմարտութեան այն ատեն հասու կը լինիմք, երբ քննող ուշադրութիւն մի դարձնեմք բոլոր մոլիներու վրայ, որք իրենց անսանձ կիրքերն իբրեւ սիրելի առարկաներ կը գգուեն և իբրեւ մէն մի կուռքեր կը պաշտեն զանոնք, այն ատեն պիտի տեսնեմք որ նոյն սիրած առարկաներուն իսկ կը տանջուին հանապազ․ և այս տանջանքը հեշտալի կը թուի իրենց, քանզի կաթոգինս կը սիրեն իրենց անոյշիկ կենաց անգութ դահիճը և չեն ուզեր բաժնուիլ անկէ։

Ագահը ինչք դիզելու ցանկութեամբ կը կորսնցնէ հաւատարմութիւնը․ ճշմարտախօսութիւնը և արդարութիւնը (քանզի մէկ մոլութեան հետ արդէն ընդդրուած կը լինին ուրիշ շատ մի մոլութիւնք)․ և այս ամենուն տեղ տալու ներհակները գալով

կը փանեն նորա մէջէն սրտի և մտաց խաղաղութիւնը, խղճի հանդարտութիւնը եւ հանդիստ քունը. որոմելին ոչ միայն չարաչար կը տանջուի իւր փափաքը լեցնելու, որ լինալիք չունի, այլ նաև առաւել եւս կը տանջուի կը մտածէ և անհանգիստ կը լինի գիշեր և ցերեկ իւր դիպած ձախութիւնն անկորուստ պահելու համար, զոր և չէ կարող վայելել։ Իսկ եթէ գիտուածս կամ անզգուշութեամբ իւր անօգուտ չեզքակայէն բան մի կորուսի, այլ աննկարագրելի է յայնժամ իւր վիշտն ու տրտմութիւնը, հոգն ու ցաւը, որք երբեմն այնքան կը զօրանան որ յիմար, ցնորած և կատաղի կ՚լինեն։ Այսպէս են ահա ամէն մոլութիւնք զորս կը պաշտեն մարդիկ և կը հեշտանան 'ի նոսին 'ի չարաչար տանջանս անձին և 'ի ցաւ։ Ինչպէս որ կ՚ասէ Սենեկայ, «Գործուած չարիքներուն ամենամեծ պատիժը նոյն իսկ չարագործութիւնն է. և խղճմտանքէն տանջուողը ամէնէն ծանր պատուհասը կը քաշէ»։



Ցիմարութեան պտուղ են մոլութիւնք, որ քիչէն սկսելով կամաց ու կը բազմանան յաճախ կրկնութեամբ և ունակութեամբ. որք չեն կարող ուրիշ բան մի տալ, բայց 'ի մեծամեծ վնասներէ։ Ուրեմն կրից անկարգութիւնն է մարդուս առողջութեան թշնամին, զոր հաստատելու համար կարծեմ երկար փաստերու եւ պատճառաբանութեանց կարօտ չեմք. քանզի ով որ մարդուս բնական կազմութեան որպիսութեանը հասու է, նա գիտէ անշուշտ թէ իւր գործարանները ինչ բանով կրնան չփթիլ և իւր ներքին հիւթոց հաւասարակշռութիւնը գլխաւորապէս ինչով կրնայ կորսուիլ։

Կան արդարեւ հիւանդութեանց արտաքին շատ պատճառներ որք կարող են մեծամեծ վնասներ տալ. ինչպէս ցուրտը, տաքը, ապականած օդը, կերակրոց անյարմարութիւնը եւ ուրիշ շատ անզգուշութիւններ. բայց երբ կիրքերը կանոնաւորուած ու չափաւորուած են, երբ մարդ բարեխառն

ու ժուժկալ կեանք վարելու սովորած
է ՚ի մանկութենէ, այն արտաքին պատ-
ճառները շատ անգամ մեծ ներգոր-
ծութիւն մի չեն կարող ընել, և կամ
պարզ ու դիւրին դարմաններով նոցա
պատճառած վնասները փութով կը
հեռանան, իսկ բարոյական պատճառ-
ներու, կրից եւ մոլութեանց ազդե-
ցութիւնը խիստ դժնդակ է ։ Կրից
պտուղն եղող ախտերը դժուարաբոյժ
են և երբեմն իսկ անդարմանելի․ և
այս առհասարակ ամեն կիրքերու և
մոլութեանց բնութիւնն է ։

Ծուլութիւնը, արբեցութիւնը,
շռայլութիւնը, փափկութիւնը, մանա-
ւանդ ճեշտախտութիւնք և այլն մա-
հաբեր ժանտախտներ են, այլ և այն-
պիսի կուռքեր են որ իրենց անձնա-
տուր եղող և զիրենք պաշտող ողորմե-
լի յիմարները բերկրութեան և երջան-
կութեան խոստումով կը խաբեն եւ
ծաղկափթիթ զուարճալի ճանապարհ-
ներ ցոյց տալով մացառներու և տառա-
պարներու մէջ կը ձգեն․ և ամեն կող-
մերնին չարաչար կը վիրաւորեն, որոց



սպին անջնջելի կը մնայ մինչև ցմահ ։

Մարդուս կենաց ոխերիմ թշնամի,
նորա կազմութեան գեղեցիկ շէնքը քան-
դարող, նորա կենաց քաղցրութիւ-
նը անչափ դառնացնող ուրիշ բան չը
կայ, բայց միայն իւր անսանձ թողած
կիրքերը և զգայական բերկրութեանց
անձնատուր լինելը ։

Եթէ գիտնային մարդիկ թէ բըղ-
ջախոհութիւն կամ վաւաշ ցանկու-
թիւնք ինչ կոտորածներ ըրած է և
տակաւին ամեն օր կընէ, պիտի սա-
կային անկէ․ եթէ տեսնէին այն խեղճ
զոհերը որք իբրև ողջակէզներ կենդան-
ւոյն կը տոչորին ցանկութեան կրա-
կին մէջ և հոգւով ու մարմնով չարա-
չար կը զոհուին զազիր Ափրոդիտէին,
այն ատեն զզուանօք պիտի հեռանայ-
ին անկէ․ եթէ գիտնային, մանաւանդ
մանկունք, պատանիք և երիտասարդք
թէ իրենց փափուկ մարմինը փճացը-
նող և իբր խորշակահար խամրող և ի-
րենց սիրուն գեղեցկութիւնն ու կայ-
տառութիւնը եղծանող և իրենց կո-
րովն ու զօրութիւնը ջնջող եւ ըն-

դարմանողն է այդ անգութ հեշտախ-
տութիւնը կամ բղջախոհութիւնը ,
այն ամեն թունաւոր օձէ փախչելու-
պէս սկիզբէն սարսափով պիտի հեռա-
նայիս անկէ , որուն ազխտութեամբ
իրենց անձը կ՚ընծայեն նախ իբր ս-
րուն բարեկամի , յետոյ կը լինին յօժա-
րակամ պաշտօնեայ եւ անձնանուէր
ծառայ , կարծելով որ ուզած ատեննին
կրնան քաշուիլ զերծանիլ . հուսկ այս
շղթայակապ գերի կը դառնան որ և-
ոչ չեն կարող դիւրութեամբ ձերբա-
րիլ նորա անգութ ճիրաններէն :

— Ո՞վ կրնայ ուրանալ զայս :

— Գիտեմ , անփորձ պատանի ,
դու յանձնապաստանութեամբ կու-
րանաս . քանզի տակաւին նորա կե-
ղեքումը չես զգացած , բայց մին-
չեւ զգուշդ կորուստ մեծ պիտի լը-
նի . խղճութիւնը եւ բազմաց վերայ
տեսնուած ամեն օրեայ փորձերը եւ
անժխտելի նշանները կը հաստատեն
այս ամենուն ճշմարտութիւնը , ուստի
այլոց օրինակը թող քեզ խրատ լինի
մի համարձակիր աղաչեմ դառն փորձ



մի քու վերայդ ալ տեսնել . « Խելացի
մարդը ուրիշին կրած վնասէն խրատ
կ՚առնու . իսկ անխելքը իւր շատ ան-
գամ կրած վնասովն ալ չը խրատուիր »
կ՚ըսէ իմաստասէր մի : Ուրեմն անխելք
մի ըլլար . կանուխէն , քու խիստ փոքր
հասակէդ անձդ միշտ բարութեան ու
սրբութեան մէջ վարժեցնելու ջանայ .
Սենեկայ կ՚ըսէ , « Խիստ օգտակար է
մանկանց որ շատ կանուխ բարիին մէջ
կրթուին » : Նոյն հեղինակը ուրիշ տեղ
մ՚ ալ այսպէս կը խօսի . « Աւելի հա-
մարձակ կ՚ըսեմ ու կը վկայեմ , որ ա-
ռաքինութիւն չունեցողը չէ կարող
բերկրալի կենաց հասնելու յաջողու-
թիւն գտնել » :

Ալ ուրեմն , ձեր հասակն այնպիսի
հասակ մ՚ է , որ մարդ կը շուարի ձեզ
հետ խօսած ատեն : Դուք չէք ուզեր
համոզուիլ , որ արդէն գերի եղած էք
ձեր մէկ մոլութեան և գարշելի սովո-
րութեան որ ձեզ կը մահացնէ : Դուք
ձեզ ազատ կը կարծէք , եղբարք իմ և
որդեակք . և տակաւին կը համարձակիք
պարկեշտ ձեւանալով ձեզ խրատող

զըն անարգել. նորա դէմ ելլել արդա-
րացնելու համար փառասիրութիւն-
ները. և ձեր խորամիտն անհամեստ հա-
մարել կամ ասոր հանելու աշխատիլ :
Սակայն այդ եւս նոյն ախտին բնու-
թիւնն է. այդ այնպիսի ծիրգ մի է, ո-
րով, խեղճ գերի. արդարանալ ուզած
ատենդ կը մատնուիս. ողորմելի՛, ամէն
որ կը ճանաչէ զքեզ և կը տեսնէ ակնե-
րեւ քու թշուառութիւնդ, բայց մի-
այն դու ես որ զքեզ և քու աղէտալի
վիճակդ չես տեսներ. քանզի արդէն
դու քու տէրդ չես. յանձնած ես քու
սիրտդ կամքդ ու միտքդ այն բանին
որ քու բերկրանքդ ու տեւական եր-
ջանկութիւնդ կը համարիս և ահա այս
է քու ցնորեալ յիմարութեանդ առա-
ջին կէտը :

— Ո՛չ, ես յիմար չեմ, շատ բան
գիտեմ, շատ բանի խելք կը հասցնեմ,
ես խելացի եմ :

— Իրաւունք ունիս գիտեմ՝ շատ
բան ուսած ես. բայց լսէ Յիսուս
Քրիստոսին. «Ի՞նչ օգուտ է բոլոր
աշխարհը շահիլ եւ իւր անձը տու-



մել» . Մտիկ ըրէ իմաստասէրին ալ .
«Ի՞նչ պարծանք է, կ՚ըսէ, բոլոր ար-
տաքին ու երկնային բաները գիտնալ
եւ իւր անձը չը ճանչնալ, ի՞նչ պա-
տիւ կրնայ համարուիլ գիտութիւն-
ներով լեցուիլ եւ առաքինութեամբ
դատարկ մնալ, ի՞նչ է մոլի գիտունը,
եթէ ոչ գիրք շալկող էշ» : Հապա Սե-
նեկային ի՞նչ ըսիր ըսես, երբ համար-
ձակ երեսդ զարնէ յիմարութիւնդ ը-
սելով, «Ես բնաւ իմաստուն չեմ ըսեր
անոր, որուն բան մի կ՚իշխէ. ուր մնաց
որ հեշտախտութիւնն իշխէ» : Այս
խոհական իմաստասէրը ուրիշ տեղ մի
եւս այս իմաստալից խօսքը կ՚ընէ.
«Տռփանքը խելագարութիւն մ՚է,
կ՚ըսէ, որ ծածկէն լալով կ՚անցնի, որ-
մանկանց շատերը կը նեղքեմացնէ, և
որով կինը մահն արհամարհելով իւր
ամուսնոյն արեան դէմ զէնքը կը յան-
դգնի» : Այսպիսի կերպեր փարախուսու-
մի կը նշանակէ որ մոլք ալ առողջ չէ.
քանզի բնաւորութիւնն ու զգայարանք
խանգարուած է. «Առանց առողջու-
թեան երջանիկ չէ մէկը, և առողջ չէ

ույն մարդը, որուն կարի վնասակար բաները՝ խիստ լաւ և օգտակար բաներու պէս ցանկալի են »:

Արդ՝ ինչ և իցէ կերպով՝ մանաւանդ փափաքոտ ցանկութեամբ և անհամեստ խորհրդով վարակեալ անձը ճիշդ այսպէս է: Հիւանդ է բայց առողջ կը կարծէ. դէմքը խամրած, թօշնած ու դեղնած է, սակայն ինք զինք գեղադէմ կը սեպէ և երբեմն այտերը բուքով կաւեցնէ, իւր ձեռօք կը շպէ և ինքզինք գեր համարելով կը խրախուսի. և իւր ցանկալույն սիրելի լինել երեւակայելով կը բերկրի. և ահա այս բերկրութիւնն է իւր բովանդակ երջանկութիւնը և այս ծայրայեղ յիմարութիւնն է իւր իմաստութիւնը: Սաստիկ ցանկութեամբ մոլեալ է նա, և սակայն իւր անձն ուղիղ աչքերը կուզէ խաբել թէ ինք ընաւ սիրոյ կամ հեշտախտութեան անձնատուր եղած չէ: Դու որչափ ճըշգրիտ նկարագրես եւ ապացուցանես իւր ախտին վատթարութիւնը և վնասակարութիւնը նա ինքզինք առաւ կը համարի անկէ և ինքն այլ քեզ հետ կը



նախատէ զայն և կ՚անարգէ. բայց ՚ի ծածուկ մոլեգնութեամբ կը սիրէ անոր և յամենայն սրտէ կը պաշտէ զայն, որով որ յուսոր կը հալի ու կը մաշի, զանազան հիւանդութեանց կենթարկի. ստամոքսի տկարութենէն կամ ողնաշարի նեխութենէն շունչը այնպէս կը գարշահոտի, որ մարդ կը զզուի մօտը կենալու. ողորմելին տակաւին կենաց քաղցրութիւնը չը վայելած՝ մահուան ուռկանին մէջ կը բռնուի և անոր դառնութիւնները սակաւ առ սակաւ ըզգալ կը սկսի:

Յայտնի է ուրեմն որ մոլին, մանաւանդ հեշտասէր փափաքոտը որ և իցէ կերպիւ առողջ չէ. խիստ հիւանդ է նա մտօք, հոգւով և մարմնով. հետեւաբար ապերջանիկ: Քանզի ինչպէս ըսինք, իւր բովանդակ երանութիւնը կը կայանայ իւր մոլութիւնն հաճեցնելուն, և իւր մեղսակցուոյն սիրելի լինելուն մէջ զոր օր մի չարաչար պիտի ատէ: Այսպիսին անմիջական եւ խիստ դարմաններու կարօտ է, ոչ միայն նիւթական, այլ աւելի բարոյական խնամոց և դար-

մաններուն պէտք ունի․ քանզի իւր բոլոր հիւանդութեանց պատճառը բարոյական է․ այլ ասամ, որ շատ անգամ՝ ողորմելի Թշուառը կը զրկուի բարոյական խնամատարութենէ և միմիայն նիւթական դեղերով կը դարմանուի․ և այն ուրիշ բանի համար չէ, եթէ ոչ մը աւելի մոլութեանց մէջ ընկղմելով հեշտանալու համար, որով հուսկ ուրեմն այնպիսի ժամանակ՝ այնպէս հիւանդութեան մի կենթարկի, որոյ առողջութիւնը դրեթէ անհնար կը լինի։ Այնուհետև այսպիսիները կսկսին զանազան ախտից, խթից և մարմանջմանց մէջ տանջուիլ ու տագնապիլ․ բայց դժբաղդաբար չեն համարձակիր իրենց ցաւոց պատճառն իւրեանց մոլութիւնը համարել, այլ ընդհակառակն Թիւր ու ցաւալի դատողութեամբ իրենք զիրենք այն փառքը կրելու անարժան կը համարին, իբր Թէ բնաւ իրենք պատճառ չեն անոնց։ Մերթ օդերն ու կլիմայն առիթ կը գտնեն մերթ սնունդըն ու կերակուրը․ երբեմն զբաղմունքը կամ՝ ուսումնասիրական աշ-



խատանքը, (որ շատ անգամ՝ պէտք եղածին չափ ալ չեն աշխատիր)․ և երբեմն իրենց հաճոյքներէն զրկուիլը, և այլ ասոնց նման շատ մի արտաքին, երկրորդական և խիստ հեռաւոր պատճառներ կը հայթայթեն, որպէս զի իրենց յանցաւոր լինելը չը խոստովանին․ բնաւ չեն ուզեր մտենալ իրենց ցաւոց և հիւանդութեանց իսկական պատճառին, որպէս զի չըստիպուին հրաժարիլ անկէ։ Մինչեւ անգամ՝ զայն իրենց ցոյց տուող եւ այն աղէտալի Թշուառութեանց պատճառն 'ի յայտ անող բարեկամի մը դէմ՝ ատելութէ կը փարուին․ իսկոյն կը խռովին, լսել անգամ չեն ուզեր, կը ժխտեն ու կուրանան․ և զրպարտութիւն համարելով կը մեղադրեն խրատիչը, Թէ ինչու արդեօք այնպիսի բերկրանքէ մի զրկել կուզէ զիրենք․ բերկրա՜նք մի, յորում՝ որչափ յաճախեն, այնչափ կը վատթարանան, կը լքանին, կը Թուլանան, կը յուսահատին և այս յուսահատութիւնը շատ անգամ կատարելութեան կը տանի զիրենք, որով կըսկսին

արհամարհել ամէն նուիրական զգացումն ու պարտաւորութիւնքը ։

Կանխանին նոքա այնու հետեւ ընարկութեան տակ և իրենց գերութեան շղթայն ամէնօրեայ կրկնութեամբ, ունակութեան կռանով կամապաշտութեան սալին վերայ դարբնելով կրաւարացնեն եւ անլուծանելի կ՚ընեն ։ « Անսանձ հեշտասիրութեան պէս աւողջութեան վնասող բան չը կայ . . . . և որ և իցէ հեշտութիւն մարդուս միտքն ու մարմինը կը տկարացնէ », ըսաւ իմաստուն մի ։ Այդ աղխեայց 'ի խրատ Սողոմոնի սա խօսքերը կը յիշեցնեմ . « Յանդիմանութիւն առողջ մեղաւորաց ճամբուն մէջ է . իսկ Աստուծմէ վախցողը իւր սրտովը կը դառնայ ։ Օձին երեսէն փախչելու պէս մեղքերէն փախիր . թէ որ անոնց մօտենաս, քեզ կը բռնեն ։ »

Բայց ինչ հարկ ասկէ անկէ փաստ ու վկայութիւն մուրալու . դուք ձեր վերայ նայեցէք, եղբայրք իմ և որդեակունք . զձեզ անաչառ քննեցէք . ձեր ճշմարիտ բարիքն ուզող բարեկամնիդ



ճանչցէ՛ք և անոր անսացէ՛ք, անկեղծ եղէք, ուղիղը խոստովանեցէք . բարի խրատներն ու յանդիմանութիւններն սիրով ընդունելով երկիւղածութեամբ հնազանդեցէք անոնց և արիութեամբ կատարեցէք զանոնք . որոց արդիւնքը պիտի համոզէ զձեզ որ ձեր մեծամեծ թշուառութեան առիթը ձեր մոլութիւններն ու ձեր կիրքերը փայփայող անմիտ ու չար ընկերներն են, որոցմէ փախչիլն ալ մեծ արիութիւն է ։ Լսէ իմաստունի մը սա անման խրատին . « Դուն քեզի բարեկամ ընտրէ այն մեծապատիւ անձինքը, որ ամենեւին քու մոլութիւններդ փայփայել չը նային . բոլորովին վռնտէ քովէդ չնչին ու թուլամորթ շողոքորթը որ քեզի հաճոյանալու համար խունկ կը ծխէ, (կը գովէ) քու մտացածին անարժան խորհուրդներդ » ։

Զձեզ քննեցէ՛ք կ՚ըսեմ, քանզի ահա տեսէ՛ք որ դուք դեռ մանուկ էք, և ինչո՞ւ թօշներ էք . ինչո՞ւ խորշոմած է ձեր դէմքերը . ինչո՞ւ անժամանակ ձեր նուրբ և փափուկ ձայները

այլանդակեր ու կոշտացեր են. ինչու յաճախակի հիւանդութեանց կ'ենթարկիք։

— Ինչու որ բարի վարք չունիք. «Քանզի բարի վարուց հետեւութիւնն է առողջութիւնը»։

— Ինչու առողջութիւն գտնելու համար կարօտ կը լինիք դառն և զզուելի դեղերու։ Քանզի այդ անմեղութեան հասակէն սկսած էք մեղանչել. և կ'երեւի թէ մեղաւոր ժողովրդեան համար Աստուծոյ սպառնացած դատանութեան ջուր խմելը ձեր վերայ ալ կը կատարուի։ Ձեր հասակը առողջութեան, զօրաւոր աճման և գեղեցկութեան հասակ է, ինչու այդպէս եղծուած ու ակարացած էք։

— Մեղաց հետեւութիւնն է այդ. «Մեղաց վարձքը մահն է». կ'ըսէ Առաքեալը, և հիւանդութիւնք մահուան առաջնորդներն են, որ առ սակաւ սակաւ մաշելով կը հասցնեն հոն, ուր ոչ դեղ կայ և ոչ ալ անկէ դառնալ կարելի է. Ուրեմն քաջ եղիք, հիմակուանէ դարձէք որ գոնէ գալիք վնասերէն ազատիք։



Եղբարք իմ դուք պատանի էք, դուք երիտասարդ էք, քաղցր պէտք է լինի ձեր կեանքը, ինչու տարաժամ դառնացուցած էք զայն. ինչու այդ կենդանութիւն ցայտող ձեր սիրուն աչքերը մարմրած եւ խոռոչացած են. այդ ինչ արտաքոյ կարգի նիհարութիւն է. զառամած ծերերու պէս ինչու կը դողդողիք և ձեր անդամները կը դողան. ո՞ւր է ձեր բնական կորովը, (մի խաբուիք կատաղութիւնը կորով կամ զօրութիւն չէ). ո՜հ, ափսոս, ինչու այդպէս շուտով և անօգուտ կը կորուսանէք այդ անդուդական պարգեւները որ ձեր շնորհքն ու փառքն են, որ ձեր կենաց պահպանութեան գործիքն ու պարծանքն են։

Անշուշտ դուք յանցաւորներ էք, ոչ այլ և այլ խօսքերով, ոչ պատճառաբանութեամբ, ոչ փախչելով եւ ոչ թաքչելով կրնաք արդարանալ ու ազատիլ։ Դուք յանցաւոր էք ձեր անձին դէմ, որոյ կարողութիւնները փոխանակ զարգացնելու ու զօրացնելով ձեզ և ազգի մարդկան օգուտ գործելու,

յանպէտս վատնած փճացուցած եւ ձեր զգայարանքներն անպիտանացուցած էք։

Դուք յանցաւոր էք Աստուծոյ Նախախնամութեան դէմ, որ ձեր ճշմարիտ երջանկութեան համար ամեն բան պարգեւած է, բայց դուք զանոնք առանց օրէնքի, առանց ժամանակի, առանց կարեւորութեան, անխտիր եւ անօգուտ կը վատնէք, չարաչար գործածելով նորա անփոխարինելի պարգեւները. արհամարհելով ոտքի տակ կառնուք նորա կենսաւէտ պատուէրները. և փոխանակ կեանք ստանալու համար նմա ծառայելու, ձեր մոլար հաճոյից համար կանարգէք ու կը թօթափէք նորա քաղցր լուծը՝ որ զձեզ կուղղէ դէպ 'ի ճշմարիտ ազատութիւն եւ յերջանկութիւն. ու կը ծառայէք մեղաց և մոլութեանց որք կ'առաջնորդեն յեղծումն և յապականութիւն։

Դուք յանցաւոր էք նաև բնութեան օրինաց դէմ, յոր չէ սահմանած ձեզ համար հիւանդութիւն, խեղութիւն, կուրութիւն, խլութիւն, դողդոջու-



տութիւն և ոչ իսկ մահ. այլ այս ամենը նորա օրինաց զանցառութեան և ընդդէմ գործելուն հետեւութիւնն է որով մարդկան ազգը Պրոպատիկէ աւազանի հինգ սրահներուն նմանած է . . . ։

Դուք յանցաւոր էք բովանդակ մարդկութեան դէմ ալ, որոյ մէկ մի անդամները կը կազմէք և որ ձեր գործունէութեան կարօտ է և ձեզմէ մեծամեծ օգնութիւններ կը սպասէ. իսկ դուք այժմէն ապիկար, ձեր անձին իսկ անօգուտ և բեռն էք աշխարհի և տաղտկութիւն պիտի լինիք մարդկութեան։

Աւելի ցաւալին ըսեմ, դուք յանցաւոր էք և եւս ձեր ապագայ սերընդոյ, ձեր զաւակներուն դէմ, որոց թշուառութիւնը այժմէն դուք ինքնին կը պատրաստէք, և որոց գալիք ցաւոց և աղէտից վերայ ձեր սիրտն ալ պիտի մորմոքի. թէ ձեր և թէ ձեր սերընդոց, որդւոց և թոռանց կեանքը պիտի դառնանայ, և ընտանեկան կենաց քաղցրիկ խաղաղութիւնը պիտի վըրդովի։ Հապա ո՞ւր թողումք աստուա-

ծայրն փառաց զրկումը և յաւիտենական դատապարտութիւնը, որ Աստուծոյ օրինաց չը հնազանդողներուն բաժինն է. ա՜հ, ինչ ազդու է Առաքելոյն սա խօսքը թէ, " Ցանկութիւնը կանցնի բայց որդը չը մեռնիր և կրակը չը մարիր »: Արդարեւ մարմնոյ բոլոր ցանկութիւններն ու բաղձանքները օր մի կը գայ որ կ՚անցնին, կիրքերը կը թուլանան ու կը վերջանին, հաճոյքները կը փոխուին ու կ՚անարգուին, օր կը գայ, որ պիտի ըսեն թէ՝ " Ոչ են կամք իմ ՚ի դոսա ». բայց օրինաց և բարոյական խօսքերու ազդեցութիւնը, աստուածային յայտնութեան ճըշմարտութիւնները և խղճմտանաց վըկայութիւնը մէն մի անմահ որդեր անդադար պիտի կեղեքեն եւ անսպառ պիտի կրծեն. ապաշաւանաց զգացման բոցը և անցեալ չարեաց անդուլ յիշատակութեան անշէջ հուրը շարունակ պիտի տոչորէ թշուառ հոգին. քանզի մարդուս կենաց օրերուն մէջ յիշողութեան մէջ մնացած բան մի չի կայ որ մոռցէն խապառ եղնէ. պիտի գայ օր



մի որ խիստ յստակ ու պայծառ ամէն բան պիտի յիշէ. ուրեմն մարդ փոքր հասակէն մեծ ջանքով վարժելու է իւր յիշողութիւնը սուրբ, ընտիր, բարի և աստուածային տեսիլներով, խորհուրդներով եւ գործքերով լեցնել. քան թէ զազիր ու աղտեղի յիշատակներով. ապա մարդ ինչով կրնայ զայս ընել. եթէ ոչ գիշեր ու ցերեկ Աստուծոյ օրինաց վերայ խորհելով, զանոնք քննելով և նոյա հնազանդելով: Պէտք չէ բնաւ ներել որ մեր քով մեղանչական խօսքեր ըլլին, և անսուրբ խորհրդոց պէտք չէ երբէք տեղի տալ որ մեր մտաց մէջ մուտ գտնեն ու մեր խորհուրդները գրաւեն. քանզի եթէ անգամ մի թոյլ տամք մէկ մոլեկան խորհրդոյ որ սրտի ներս մտնէ, անկէ վերջ հազարաւորներն ներս կը թափին ու կ՚առաջնորդեն գործնական մոլութեանց եւ արդեւք կը դառնան բարութեան օթեւան ըլլալու, վասն զի " Թիւր խորհուրդներն զմարդ Աստուծմէ կը զատեն . . . և չար անձին մէջ ու մեղքով վարուող մարմնոյ մէջ

խմաստութիւն չը մնար ու չը բնակէր »։

Հայոց մատաղատունկ սերունդ, ազգին ապագայ յոյսեր, ինչ է այդ ձեր արմատը կրծող և կենսական հիւթը ծծող որդը, որ ձեր ազատ ու կանոնաւոր աճումը եւ անարատ ու յուշիկ զարգացումը կ'արգիլէ և կը շփոթէ. որ ձեր սիրուն վայելչութիւնը կ'եղծանէ եւ ձեր սիրոյ պտուղները վաղաժամ կը թօթափէ, որ ձեր պտղատու զօրութիւնը կլապուէ և զձեզ յամենայնի անպիտան կ'ընէ։

— Այդ ձեր կիրքերն ու մոլութիւններն են, այդ ձեր հեշտախտութիւնն ու փափաշ ցանկութիւններն են, որոց վերայ խորհիլն անգամ հալ ու մաշ կ'ընէ, կը չորցնէ ու կըմախք կը դարձնէ ձեր հրաշակերտ կազմութիւնը և հիւանդութեանց բընակարան կ'ընէ, ուր մնաց հապա որ այդ կրից թելադրութեանց գործով ալ հետեւիք ինչ և իցէ միջոցներով՝ զորս ձեր յիմարութիւնը, ցնորքը և չար ընկերներու խորհուրդները ձեզ



կը թելադրեն։ Սիրուն որդեակք, կատաղած գազանէ փախչելու պէս խոյս տուէք ատոնցմէ, դոքա ձեր բարեկամները չեն, « Բարեկամ մի, կ'ըսէ իմաստասէրը, շատ աղէկ կուզէ մեր առաքինութիւններուն օգնել բայց ոչ թէ մեր մոլութիւններուն. զմեզ ետ կը կեցնէ նաև այն ամեն բաներէն որ վայելուչ եղածին հակառակն են, և թէ որ չի կրնայ զմեզ համոզել, կ'ըսէ, դու չես կարող զիս միանգամայն շողոքորթ ու բարեկամ ունենալ. պէտք է օգնել բարեկամին անոր գործքերուն մէջ, բայց ոչ թէ անոր յանցանքներուն մէջ ալ »։

Ուրեմն ոչ թէ ամեն երեսնիդ խընդացող և ձեզ հաճելի լինել ջանացողն է ձեր բարեկամը. այլ զձեզ յանդիմանող՝ խրատող և անկարգ ու անպատեհ բաներէ ետ կեցնողն է ձեր ճըշմարիտ բարեկամը։

## Բ.

Իմ ամենէ բարեկամներս, սիրուն զաւակներս մէկ իմ քաղցրիկ եղբայրներս, սիրտս որչափ կը մորմոքի ձեր ողորմելի վիճակին վերայ. չը գիտեմ ինչ խանդաղատական անուն տամ ձեզ: Սրտիս ցաւը և ձեր թշուառութեան վերայ զգացած կարեկցութիւնս այնչափ զօրացած են, որ կարծես ինչ ալ խօսիմ՝ չը պիտի յագենամ. ինչ անուն ալ տամ՝ հերիք չը պիտի սեպեմ. ձեր փրկութեան մեծ պարտքը և ծանր հոգը և ձեր բարօրութեան համար ունեցած սաստիկ բաղձանքս կ'ըստիպեն զիս առաւելին խօսիլ: Ձեզ խաբող պատրուակը վերցնելով և զձեզ բուն իսկ ձեր կերպարանօքը ցոյց տալով՝ ըզձեզ հասկցնելու համար հարկ է խօսիլ դեռ ևս:

Նախորդ խօսքերս հասկցողի համար ամեն բան կը պարունակէին, բայց որովհետև այնպէս կը կարծեմ որ ղանիք գլխաւորապէս քիչ հասկցողներ ալ պիտի կարդան, ուստի աւելի պարզել անհրաժեշտ պարտք կը համարիմ. մանաւանդ գիտեմ, որ ձեր ինքնասիրութիւնը և յանձնապաստանութիւնը իմ ասածներուս առաւելին չը համոզուեցաւ ըսելին թէ՝ արդարև այդչափ աղէտներ կարող են յառաջ գալ զգայական բերկրութենէ կամ հեշտախտութենէ, ուստի պիտի փութամ ուրիշ օրինակներով և օրէնքներով զձեզ համոզել, որուն եթէ հաւանիլ յաջողիմ, և եթէ դուք ալ խոնարհութեամբ և հնազանդութեամբ օգնէք այս յաջողութեան, այն ատեն ո՛հ, աննկարագրելի է իմ ուրախութիւնս և մխիթարութիւնս: Շնորհեցէք ինձ որդեակք իմ, այս մխիթարութիւնը. իբրև շընորհք, իբրև առջին նուէր կը խընդրեմ ձեզմէ, շնորհեցէք ինձ այս իմ ցանկալի բերկրութիւնս ու երջանկաւէտ մխիթարութիւնս:

—Բայց ի՞նչ կ'ըսեմ. միթէ ինձ միայն շնորհած պիտի ըլլաք:

—Ո՛չ, այլ նաև բոլոր զձեզ անձով և ձեր ընկերութիւնը փրկելով և ձեզի

պէտք ունեցող մարդկան․ ձեր անձին՝ ձեր ծնողաց, դերդաստանին, բոլոր բարեկամաց, ամբողջ ազգին և նաև բովանդակ մարդկութեան շնորհած պիտի ըլլաք, քանզի նորա անդամն էք։ Այն ատեն՝ ձեր այժմեան բուռն եռանդեամբ որոնած և ձեռք չը ձգած երջանկութիւնը և խաղաղութիւնը ձեր շուրջը պատած պիտի տեսնէք․ այնուհետեւ կեանքը իւր սահմանին և իւր օրինաց մէջ վայելելով՝ պիտի զգայք նորա մեծ պիտանութիւնն ու անպատում քաղցրութիւնը․ այն ատեն հաճոյից շաւիղը պիտի ճանչնաք, այն շաւիղը միայն պիտի վայելէք, որ բնական է, որ օրինաւոր է և որ օգտակար է․ և այնչափով գոհ պիտի ըլլաք առանց աւելորդին, ապօրինին և անբնականին ցանկանալով միշտ կարօտ, անյագ և ուժասպառ մնալու․ առանց ամենայն զօրութեամբ երջանկութեան ետեւէն վազելու և շարունակ անկէ հեռանալու․ այլ զայն ձեր մօտը, բուն իսկ ձեր մէջը տեսնելով պիտի վայելէք ու բերկրիք։ Սակայն այս զմայլելի վախճանին,



այս համեստ ու երջանկաւէտ բերկրանաց հասնելու համար ինչպէս ըսինք, ձեր կողմէն ալ ջանք պէտք է, պարտաւոր էք հասկանալ այս խօսքերու ոգին, հնազանդիլ ցոյց տրուած կանոններուն և ձեր կամաց ու կրից յաղթելու համար ամեն արիական ջանք չը խնայել․ այն ատեն միայն՝ թէ դուք և թէ ես մեր աշխատութեանց պտուղը վայելելով կը մխիթարուինք։

Կը յիշէք դուք անշուշտ առաջին յօդուածով խօսածս թէ՝ «Բնութիւնը յԱստուածուստ անոր ընդունած օրէնք ունի»։ Այո, ամեն արարած սահմանի մի մէջ փակուած են․ և այն տեղն է միայն իրենց ապահովութիւնը․ այն օրէնքէն ու սահմանէն դուրս բիւրաւոր վտանգներ իրենց դարանակալ են որք միշտ կը յաջողին զիրենք որոգայթի մէջ ձգել։ Սորա ապացոյց քանի մի պարզ օրինակներ պիտի տամ ձեզ, մտիկ ըրէք։

Ծառ մի, բոյս մի երբ որ իրեն յարմար պէտք եղած սնունդէն և աճման հիւթերէն զրկուի, կը թօշնի կը թառամի և վերջապէս կը չորանայ․ նոյն

պէս եթէ արագ աճեցնելու և չափէ դուրս սնուցանելու համար բռնական միջոցներ գործածուին, այսինքն չափազանց ջերմութիւն կամ պարարտութիւն տրուի, շուտ կը սնանի արագ կ'աճի, շուտով պտուղ տալէ կը դադրի և ինքը կը չորանայ․ եթէ տասը տարի պիտի տեւէր, հինգ կամ վեց տարի կը տեւէ․ քանզի սահմանէն դուրս ելած է․ ուստի իրաւամբ ըսուած է սա առածը թէ՝ «Հանդարտ գացողը առաջ կ'երթայ, առաջ գընացողը միշտ կ'երթայ»։

Ուրիշ օրինակ․ Ձուկը օրէնք ունի որ ջրին մէջ ապրի․ ջրէն դուրս ելածին պէս չապրիր․ նոյնպէս կենդանին օդէն զրկուածին պէս ապրելէ կը դադարի։ Ասոնք դարձեալ իրենց սնանելու և ապրելու ընթացքին մէջ շատ մի կարգեր ու կանոններ ունին, զորս անբան և անզգայ արարածք հարկաւ կը կատարեն, որոց վերայ այս տեղ մանրամասն խօսիլ աւելորդ է առ այժմ, ջանացէք որ կատարեալ ուսմամբ զանոնք սորվիք և իմաստասիրութեամբ



ձեր կեանքը կանոնաւորէք։

Որդեակք իմ, աւելի պարզ օրինակ մի տամ։ Այն խաղալիկները որով դուք կը զբօսնուք չինուած են, որ դուք երբեմն անոնցմով ձեր ձանձրութիւնը փարատէք։ Բայց դուք զանոնք լաւ գործածելով երկար ատեն վայելելու տեղ՝ վայրկենական հաճոյից համար եթէ քարէ քար զարնէք, կը կոտրին և դուք զանոնք երկար ատեն վայելելու հաճոյքէն կը զրկուիք․ ատանկ ալ ձեր կեանքը։ Եթէ ձեր կարողութիւնները և կիրքերը բնութեան և բանականութեան օրէնքներուն համեմատ չը գործածէք, անշուշտ պիտի կորսնցնէք։

Նոր հանդերձնիդ եթէ մաքրութեամբ և զգուշութեամբ գործածէք ու պահպանէք, երկար ատեն նոր հանդերձ կը վայելէք և ձեր մարմինը լաւ կը պաշտպանուի․ բայց եթէ անզգոյշ գտնուիք և մաքրութեան հոգ չը տանիք, կը պատռի ու կ'աղտոտի, որով ձեր առողջութիւնը կը վնասուի եւ դուք զձուձ ու կեղտոտ շրջելով՝ անարգ ու զզուելի կը լինիք ամենուն․ իսկ եթէ

շարունակ նոր հանդերձ շինել ուզէք , ծախքը կը շատնայ , զանոնք հոգալու համար տառապանքներու կը մեծնան , դրամնիդ բոլորովին զուր տեղը վատնած պիտի լինիք և շատ պիտի համարուիք ։

Ձեռքերնիդ գտնուած դասագիրքը , թուղթը , գրիչը , կաղամարը և ուրիշ պիտոյք եթէ օրինաւոր և պէտք եղածին պէս գործածէք , անոնք երկար ատեն կը տեւեն , թէ դուք և թէ ձեր պատճառաւ ուրիշները օգուտ կը քաղէք և թէ շուտ հիննալով նորոգելու համար աւելորդ ծախքեր ընելու փորձին չէք հանդիպիր ։ Ահա ասանկ են իրենց կեանքը լաւ պահողները , որ առողջութիւնը գտնելու համար աւելորդ հոգերէ և ծախքերէ ազատ կը լինին ։ Բայց եթէ դուք անկրթութեամբ եւ տղայական յիմարութեամբ ձեզ յանձնուած բաները չարաչար գործածէք , անոնք ձեզ համար անօգուտ կը լինին , այլոց զրկանք , և դուք ձեզ խնամողներուն և ձեր ծնողաց վերայ աւելորդ ծախքերու դուռ կը բանաք , որ



վնաս լինելէ զատ մեղք ալ է ։ Այսպէս ալ եթէ ձեր առողջութիւնը լաւ չպահպանէք , ձեզ տրուած խրատներն ու հրամանները մտիկ չընէք , այն ատեն ձեր առողջութիւնը կը կորուսանէք ։ և զայն նորէն ձեռք ձգելու համար հազար վընասներու կ'ենթարկիք ։ այնու ամենայնիւ առաջին առողջութիւնը միշտ կորսուած պիտի լինի , ինչպէս կորսըւած կը լինի նորոգուած հանդերձին կամ գրքին նորութիւնը և գեղեցկութիւնը ։

Ինչո՞ւ համար հացը , կամ ուրիշ ամէն բան մի չի ծամած կուլ չէք տար , վասն զի թէ ձեր կոկորդը կը քերթէ կը վիրաւորէ և թէ ձեր ստամոքսին վերայ ծանրանալով զայն կը հոգնեցնէ և ուրիշ զանազան հիւանդութիւններ կ'առթէ ։

Ահա այս ամէն պարզ ու դիւրիմաց օրինակներէն կ'երեւի որ ամէն բան երկարատեւ , լաւ եւ օգտակար լինելու համար կարգ ու կանոն ունին . առանց կարգի ու կանոնի դիւրեղծանելի , վնասակար և գէշ կը լինին ։

—Եւ միթէ ձեր սնունդն ու աճումը կամ ձեր տղոցը օգտակար, բարի և առողջ լինելու համար կանոն և օրէնք չունի՞. միթէ ձեր անձնիշխանութեան վերայ հաստատուած կուզէք որ զայն 'ի չարն գործածելով հանդերձ բաւ լինիք:

—Ո՛չ, սիրուն որդեակք. ո՛չ. այդ բնութեան օրինաց հակառակ է, այդպէս չէ սահմանած Աստուած. ձեր անձնիշխանութիւնը այն ատեն պիտի յայտնէք կամ գործածած պիտի ըլլիք. երբ որ վատ, անպիտան և անօգուտ բաները մերժելու և ձեր հաճոյից ու կրից յաղթելու քաջութիւնն ունենաք. ապա թէ ոչ ձեր անձնիշխանութիւնը եթէ ողջամտնուն պէս գործածէք, չողջամտնուն պէս ալ նորա հետեւանքը չարաչար պիտի կրէք:

Քանզի ձեր կեանքն ալ օրէնքներ ունի և առանց այն օրէնքներուն միշտ վտանգի մէջ էք. պէտք է խիստ զգուշաւոր լինիք, պէտք է այդ օրէնքները սորվելու ամէն փոյթ, ջանք և աշխատութիւն չըխնայէք. այդ օրէնքները



չըգիտնալէն է որ ձեր առողջութիւնը կը խանգարի և երջանկութիւնը թշուառութեան կը փոխուի, Աստուծոյ օրինաց դէմ մեղանչելէն է որ ապրելու համար շարունակ բժշկի կարօտ կը լինիք. Սիրաքայ բանին պէս, թէ «Իւր Արարչին առջեւ մեղանչողը բժշկաց ձեռքը կ'անկանի»:

Այս տեղ պիտի ստիպուիմ ձեր մանկութեան նկատմամբ ձեր մէջ կատարուած մէկ քանի օրէնքներուն վերայ խիստ կարճ կերպիւ մը խօսիլ. որպէս զի գէթ անով կարողանամ հասկացունել ձեզ, թէ ձեր առողջութիւնն ու երջանկութիւնը ձեր ձեռքն է և ձեր կիրքերը սանձելով՝ բնական ու բարոյական օրինաց հնազանդելով պիտի կրնաք ստանալ:

---

## Գ.

Պէտք է գիտնաք, որ մեր սնունդն ու կենաց պահպանութիւնը օդէն ջրէն և կերակուրէն է. ուստի առանց պար-

դութեանը , չափին , ու մաքրութեան համեմատ առողջ կը լինի մեր կեանքը ։ Բայց նայեցէք մեր բարերար Արարչին ամենիմաստ կարգադրութեան , և տեսէք թէ այս սնունդը մեր մէջ ինչ զարմանալի օրէնքներով կը կատարուին ։

Օդը շնչափողէն ներս մտնելով կ'երթայ թոքոց մէջ կըլլայ ու ապականուած ածխածինը դուրս կ'ելնէ և հոն գըտնուած շնչերակներուն միջոցաւ թըթուածին լուծուած մասը կը ծաւալի , արիւնը կը զովացնէ և իր կենդանական զօրութեամբը կը կազդուրէ և կը սընուցանէ բոլոր մարմինը ։ Օդը երկար ատեն փակուած մնացած տեղ մը կամ շատ հոտեր գտնուած տեղերու մէջ օդային ածխածին մասը շատ կը գըտնուի . ասոր համար այսպիսի տեղեր մնալ կամ ննջել խիստ վնասակար է . քանզի ապականուած և մեզի սնունդը տուող օդը շնչելով մեր կեանքը կը վտանգուի և մինչև իսկ մահ կը պատճառէ ։ Այսպէս ալ ջուրը և ուտելիքները ։

Մեր բնութիւնը իր մէջ ընդու-



նած սննդական նիւթերը ( ուտելիք և խմելիքները ) ծամելով , հալելով և մարսելով ներքին զանազան հիւթերու կը փոխէ , որոց ոմանք մեզ կը սնուցանեն և կեանք կը տան , ոմանք մեր առողջութիւնը կը պահպանեն և չեն թողուր որ արտաքին ազդեցութիւններէն դիւրաւ վնասուինք , և ոմանք ալ որ մեզ համար աւելորդ են , դուրս կ'ելնեն ։

Ազնիւ որդեակք , դուք կը կարծէք որ կերակուրը անմիջապէս ձեր փորը կ'իջնայ , կամ թերևս բնաւ չէք գիտեր թէ ինչ մեծ գործողութիւններ կը կատարուին ձեր ներքին կողմը՝ մինչև որ այն կերակուրները ձեզի սնունդ տան . և այս չը գիտնալով է որ դուք խիստ մեծ վնասներու տակ կընկնիք ։

Կերակուրը կ'երթայ նախ ձեր ստամոքսին մէջ , այն տեղ յատուկ պահուած կծու հիւթի մը և տաքութեան միջոցաւ կեփի և կը մանրի և այսպէս կը կատարուի առաջին անգամ մարսելու գործողութիւնը ։ ( Բայց հարկ կը համարեմ ըսել ձեզ , որ կերակուրը ակռաներով որչափ աղէկ մանրէք , այն-

չափ ալ շուտով և դիւրաւ կը կատարւուի մարսողութեան այս գործողութիւնը, և դուք լաւ սնունդ կ'առնուք. իսկ թէ որ հոգ չընէք և խոշոր ծամելով կուլ տաք, ձեր ստամոքսը մարսելու համար մեծ աշխատութիւն կը կրէ կը հոգնի, կը տկարանայ, և լաւ չի կըրնալով մարսել՝ ձեզի սնունդ չը տար, այս պատճառաւ ալ շատ հիւանդութիւններ յառաջ կուգան ):

Այս ստամոքսին մէջ լաւ մարսուած կերակուրը կը թափի ուրիշ ամանի կամ աղիքի մէջ, ուր տեղ մաղձայինն և ուրիշ տեսակ հիւթով մը ալ աւելի կը հալի և նորէն կը մարսի, այն տեղ ալ ուրիշ տեսակ (մամոց) քամուած հեղուկի մը կը փոխուի. բայց դեռ սնունդ ալ չի ըլլար: Այս տեղ այս սննդաբար նիւթին ամենանուրբը աղիքէն մասերը ներքին ջերմութեամբ կը ցնդին կը սողան ու մանրիկ ծակտիկներէն մըտնելով կը տարածուին բոլոր մարմնոյն մէջ: Այս (մամոց) քամուած հիւթին աւելի յառաջ մասը երկու երակներու միջոցաւ կ'երթայ դէպ 'ի լեարդը և



ալ և այլ ճանապարհներով կընակէ ետևէն կ'անցնի և զանազան ճանապարհներէ սողալով ուրիշ երակներու մէջ կը հասնի և արեան հետ կը խառնուի: Իսկ այն աւելորդ մասերը որ մեր կենաց համար պիտանութիւն չունին, որ մեր կերածին ու խմածին անմաքուր մասունքն ու դիրտերն են, անոնք ալ աղիքներուն մէջէն անցնելով դուրս կ'ելնեն:

Արիւնին հետ խառնուած մամացային հիւթը բոլոր մարմնոյն երակներուն, ջիղերուն, ներդերուն կամ նուրբ մազմզուկներուն մէջէն կը շրջի ըղեղը և բոլոր գործարանքն ու մարմինը կը սնուցանէ և կը զօրացնէ. և այս շրջանառութեան մէջ ինքը վերստին կ'եփի և ալ աւելի կը զտուի ու սննդեան համար պէտք չեղած աւելորդները, դիրտերը և հոտ մասերը կը թափուի այնպիսի տեղեր, որոց մէջ կրնան հալիլ և սահմանուած ճանապարհով դուրս ձգուիլ. ինչպէս, լեարդին մէջ աւելորդ մաղձը կը թափուի, զոր որ մաղձին պարկին ընդունելով աղեաց մէջ կը

թափէ, որպէս զի նորէն ուրիշ մասա-
ցի հետ խառնուելով զայն հալեցնէ և լուծէ, և անոր հետ երակներուն մէջ շրջելով մտցանէ. այս մաղձը նաև աղիքները դրդելով կ՚լուծայէ որ աւելորդները դուրս տայ ։

Աւիշէ բռնած հիւթը իրեն սեպհական ամաններուն մէջ կը թողու, ուր կը զատուի ու կը պահուի արեան ցամաքութիւնը դրջելու և խոնաւորելու համար, այս ամաններուն ծայրերը մարմնոյ մորթին հետ հաղորդուած են, որպէս զի խիստ աւելցած ատեն աւելորդ աւելիը մորթին ծակտիկներէն դուրս տան. և ահա այս է քրտինքը ։ Այս աւիշեան անօթներուն առատ, անարգել, և ջրով լեցուն ըլլալէն է մանկանց պարարտութիւնը և անոնց դիմաց պահելի գեղեցկութիւնը. բայց օրէ օր հասակն աճելով մանաւանդ կերից հետեւելով այն երակները կը թաշնին կը ցամաքին պաւով երեսնին կը թառամի ու կը խորշոմի ։ Այս աւիշին աւելորդն ու գիրութիւն ալ տղային (պատղամ) կը լինի և



դուրս կը ձգուի ։

Երիկամանց մէջ ալ մամայը զանազան հում և թանձր հիւթեր կը թողու, ուր միշտ կը փոխուին եւ իրենց սեփհական ամանին մէջ պահուելով պէտք եղած ատեն դուրս կ՚ելլեն. և ոսկինաւ մէզը արեան երակներէն զատուելով եկած է, ասոր համար է որ բժիշկները միզին ուսկնութենէն աւելի լաւ կը ճանչնան արեան վիճակը և մարդուս ներքին առողջութեան աստիճանը ։

Ահա մամայը այսպէս զանազան եղանակներով զանազան տեղեր նորէն նորէն զատուելով ջղերուն, ուղեղին և բոլորովին մարմնոյն մէջ կը շրջի և ամենազօրաւոր երակներու և ներդերու միջոցաւ կը փոխուի մեր մարմնոյ բոլոր կողմերը եւ իր զատիկ նրբութեամբը անոր ամէն մասնիկներուն մէջ կը մտնէ կը զօրացնէ կը սնուցանէ եւ կենդանութիւն կը տայ ։

Այս նուրբ և մաքուր ալքնակ կամ ոգեղէն հիւթը ջղերուն և երակներուն մէջէն ուրիշ անօթի մը մէջ մտնելով

կը կազմուի բուն կենդանական ոգին , այն ազնիւ , ամբողջ և նուրբ հիւթը , այն բոլոր անձին կենդանական մասը որ ամենադալուս ոգիքն և մաքուր ծուծն է , որ խիստ պիտանի է թէ մեր կենդանութեան և առողջութեան համար և թէ Աստուծոյ ու բնութեան օրինական օրէնքով աճելու և բազմանալու համար :

Այս ամենամաքուր հիւթը հեղաշրջած արիւն է , սա ելած է երեւակայութենէն , հաղորդակից է ըղեղին հետեւաբար և բովանդակ ջղերուն . այս պատուական և խիստ զգուշութեան կարօտ կենդանի եւ ազնիւ հիւթը պէտք է մարմնոյն մէջ մնալով հաստատանայ եւ ամբողջանայ իւր կատարելութիւնն ստանալու համար :

Բայց թշուառութիւնը և ցանկութեան կիրքը զայն կը թողու ձեր մարմնոյն մէջ այլ կը փախնէ այլ և այլ միջոցներով : Բայց ասկէ որչափ բան պակսի , այնչափ բան կը պակսի ձեր կեանքէն . ձեր մարմնոյ հասակին աճման կարգը խանգարելով անկանոն



կերպիւ կ՚աճի ձեր մարմինը . ժամանակէ յառաջ կը չորանայ կը ցամքի , և դեռ առուգութիւն չի վայելած , տակաւին այրական վսեմութիւնը չը տեսած ծերութեան հիւծումը վերայ կը հասնի :

Հիմա , սիրուն որդեակք իմ , տեսէք թէ ձեր մարմնոյ սնունդը ինչպէս կը կատարի . բայց ինչպէս յառաջ ըսի, դարձեալ հարկ կը համարիմ ըսել , որ դուք անպատճառ պէտք էք ձեր ընդունած կերակուրը ակռաներով լաւ ծամել . քանզի օրէնք է բնութեան , որ ստամոքսը ակռայի գործ չը տեսնար , խոշոր կերակուրները ստամոքսը կը հոգնեցնեն և լաւ մարսողութիւն չը լինելով հում և անքուծանելի կը մնան . նոյս միջի սննդական մասը լաւ չը սրուշուիր եւ պէտք եղածին չափ զձեզ չը սնուցանէր , հետեւաբար դուք կը մնաք նիհար , անզօր , ստամոքսնիդ տըկար . ջղերնիդ թոյլ . ակռանիդ փտած և պառաւի պէս թափած , յորմէ ամեն տեսակ վնասներ և հիւանդութիւնք յառաջ կրնան գալ : Այսպէս կը լինի

նաև. երբ դուք ագահութեամբ կու-տէք եւ ստամոքսնիդ շատ կը ծանրա-ցնէք ։

Նոյնպէս օրէնք է բնութեան, որ կերակուրն ուտելէն անմիջապէս վեր-ջը չը պառկիք, այլ քիչ մի հանգստա-նայք, քիչ մի շարժումներ ընէք, մին-չեւ կերակուրն հալի. իսկ երբ դուք այս զգուշութիւնը չէք ըներ, գիշերն անհանգիստ կը լինիք. ծանր եւ դժ-ուարաւ կը կատարուի մարսողութիւ-նը քներնիդ անկանոն կը լինի. ահա-ւոր ու խառնաշփոթ երազներով կը տագնապիք. երեւակայութիւննիդ կը խանգարի, եւ ուրիշ շատ վնասներ յառաջ կը գան ։

Ասոնց նման դեռ ուրիշ շատ բա-ներ կան, որ երբ դուք կարգին ու կանոնին համեմատ չէք շարժիր ան-պատճառ քիչ կամ շատ վնասներ կը կրէք ։ Ես հիմա այս տեղ անոնց ամէնքն ալ չեմ կարող խօսիլ. դուք բարի եւ օգտակար խրատներու հնազանդիլ ուզելով եւ ձեր ծնողաց ու խնամա-կալաց անսալով այն ամէն վնասներէն



ալ կրնաք զգուշանալ ։ Ես այս չափը ըսի միայն որ վերջին ըսելիքներս լաւ հասկնայք. ուստի թողլով որ դուք հետզհետէ ուսման եւ բարեկրթու-թեան մէջ յառաջ երթալով՝ ձեր կազ-մութեան, սննդեան և աճման վրայ կատարեալ գիտութիւն ստանայք, ես կը դառնամ մեր խնդրոյն, տեսնելու համար թէ — արդեօք մեր կիրքերն ալ այսպիսի վնասներ կրնա՞ն պատճառել ։ Ձեր այժմեան սովորելու ամենագլխա-ւոր բանն այս է. եթէ այս չի սովորիք եւ ձեր այս հասակին մէջ ձեր ամէն կիրքերն ու ներքին շարժումները չը զսպէք ու պատշաճին և օրինաւորին չի սովորեցնէք խիստ դժուարին և գրե-թէ անհնարին կը լինի վերջը անոնցմէ ազատիլ. այն ձեր ամէն մէկ կիրքերն որովք այժմ կը հեշտանայք, մէկ մէկ բռնաւորներ կը լինին և ձեզ չարաչար կը տանջեն ։

## Դ.

Սիրելի որդեակք իմ, որ և իցէ կիրք ձեր սրտին մէջ նոր և անսովոր շարժութիւն մի կը պատճառեն, այն շարժութիւնը կը խռովէ ձեր հանդարտութիւնը, զոր օրինակ. բարկութեան ժամանակ ձեր սիրտը կը թնդայ և կ՚սկսի արագ արագ բաբախել, արեան հեղքն ու հանդարտ շրջանը կը շփոթի և կ՚ըսկսի արագ կատարուիլ. մաղձը կը յուզի կը բորբոքի և կը բարձրանայ կամ ետ քաշուելով կը կծկուի և կը դալկանայ. մթագին մառախլապատ գոլորշի մի ձեր ուղեղին կը զարնէ, ձեր խորհուրդը կը շփոթէ և ուղիղ դատելու կարողութիւնը ձեզմէ կ՚առնու. այսպիսի ներքին բուռն շարժութիւնք բնութե կարգը կը խանգարեն և կը պատճառեն խելագարութիւն, անդամալուծութի, կաթուած և ջղային ընդհանուր տկարութիւն։ Մինչեւ անգամ մեծիմաստն Սենեքայ «Բարկութիւնը յանկարծական մահուան աւիթ է», կ՚ըսէ։ Ամէն կիրքեր ալ ահա այսպիսի տխուր



ու ցաւալից արդիւնքներ յառաջ կը բերեն, բայց մանաւանդ ցանկութեան կիրքը, որ իւր ապառիչ զօրութեամբը մարդկային կենաց ցեղն ու գալելը յառաջութեանց կորստաբեր է։

Պատմութիւնը քանինե՞ր կը ներկայացնէ մեզ այս ամենուն ապացոյց. ոմանք իրենց բարկութեան կրից ահաւոր շանթերը կուրօրէն թափած են իրենց բարեկամին, ազգականին եղբօրը և մինչեւ իսկ իրենց ծնողաց վրայ և իրենց կեանք տառապալին կեանքը վերջացած են յամօթ և ՚ի նախատինս իրենց անմարդավայել սրտին. քանինե՞ր բարկութեամբ յանկարծ խուլ եւ համր դարձած են, ոմանք անդամալոյծ եղած և ոմանք իսկ յանկարծակի ինկած ու մեռած են։

Մի՞թէ չէք գիտեր որ շատերը երկիւղի կիրքէն մէկ փայլակին մէջ ծերացեր են, յանկարծ մազերնին ճերմկելով, չէ՞ք գիտեր որ շատերը սաստիկ ուրախութեան պատճառաւ յիմարանոցներն երթալ դարմանուելու ստիպուեցան. և շատերն իսկ յանկարծակին

կաթուածով իրենց ուրախութեան ա-
ռարկային չը վայելած ինկան նուաղե-
ցան և երկարատեւ հիւանդութիւն
կրեցին կամ իսկոյն մեռան :

Ո՜հ, և միթէ ամեն օր վերայ չէ՞ք
տեսներ ու սոսկար ո՞վ ցանկայէր վա-
վաշտոններ, որ գերեզմանէ փախած կը-
մախք դարձեր էք. եթէ բժշկական
տարեգրութիւնքը քննենք աշխարհի
մէջ անժամանակ մեռնողներուն հա-
րիւրին իննսունը հեշտախտութեան
պատճառաւ պիտի գտնենք :

Ցանկութեան կիրքը գրգռելով,
կամ լոկ հեշտական խորհուրդներով
փարակելով՝ ուրիշ ամեն տեսակ կիրքե-
րու պէս ներքին գործարանաց ընթաց-
քը կը շփոթի. ընդհանուր ջղային դը-
րութիւնը կը ցնցի ու կը խանգարի,
այս ջղային խանգարումը երբեմն այն
աստիճան կը հասնի որ հոգեկան կա-
րողութեանց կը դպչի եւ այն ատեն
գրեթէ բժշկութիւնն անհնարին կը
լինի : Նորաձեւութեան մօտայի հե-
տեւող յիմար երիտասարդք եւ երի-
տասարդուհիք, կարծես թէ իրենց



պարծանք մի է ջղային հիւանդութիւն
ունենալնին՝ մօտայի կարգն են դասած.
իրենց ուրիշ թեթեւսոլիկ յիմարու-
թեանց պատմութեան հետ նաև ջղա-
յին հիւանդութիւն ունենալնին ալ
կ'ըսեն պարծանօք ու չէ թէ զղջմամբ,
որով մարդուս կարեկցութեան զգա-
ցումն ալ կը սպառեն :

Հեշտասիրին երակները կուռին,
արիւնը արտաքոյ կարգի ջերմութիւն
մի կը ստանայ, որոյն բաբախիւնը ե-
րագելով կենսական շարժման մէջ շը-
փոթութիւն և անկարգութիւն կը ձը-
գէ, աճումը կը փութացնէ. մարսո-
ղութեան կամ սննդական գործողու-
թիւնը արտաքոյ կարգի կը կատարուի,
սննդական հիւթերը համարեայ թէ
կը տոչորին քան թէ կը պտուին, որով
ըստ բաւականին սնունդ չառնելով և
միւս կողմէն ալ շարունակ հեշտասէր
խորհուրդներով սպառելով օր յաւուր
կ'անկանի վատթարութեան մէջ :

Բղջախոհութիւնը այնպիսի կիրքե-
րէն մէկն է, կամ թէ ըսենք կիրքերու
բովանդակութիւնն է, որ կեանքը իւր

տրմատէն և բուն աղբիւրէն կ՚ապա-
կանէ. քանզի մարդուն կենսական ո-
գին կը ցամքեցնէ, այն ազնիւ հիւթը,
որ քիչ մը վերը ձեզ յայտնեցի և ցոյց
տուի որ ինչպէս մարմնոյ ամէն մասանց
մէջ մտնելով զայն կը սնուցանէ և կը
զօրացնէ. ահա բղջախոհութիւնը այն-
պէս կը շարժէ և կը շփոթէ մարդկան
ներքին զգայարանքներն որ այս նուրբ
և ուղեղէն կենդանարար հիւթը կ՚ար-
գիլէ իւր բուն պաշտօնէն, չի թողուր
որ զձեզ սնուցանէ, այլ ձեր յիմարու-
թիւնը հաճեցնելու համար կը խոտորի
իւր պաշտօնէն և ձեր կեանքը կը ցա-
մաքեցնէ և կը չորացնէ:

Դուք, թշուառ որդեակք իմ, դուք
ագահութեամբ կը յաճախէք այդ չա-
րութեան մէջ և կ՚աշխատիք յագեցը-
նել ձեր կիրքը, բայց ղխոր սակայք
երբ գիտնաք որ կիրքերը յագենալ չեն
գիտեր, քանի գրգռես այնչափ կ՚աճին
ու սնունդ կուզեն, դուք ձեր յիմար
կրից հետեւելով և յաճախելով օրէ օր
տուանց ձեր զգայուն 'ի ներքուստ կը
մաշէք եւ ձեր մարմինը գիւրապատ-



ռաստ կ՚ընէք դժուարաբոյժ ախտե-
րու, այլ և այլ բորբոքմանց, թոքախ-
տութեան, ապշութեան, խլութեան,
կուրութեան, ախոնդանտութեան,
յօդուածացաւութեան, և այլն: Այս
մէն մի ցաւերը ոչ միայն կը վշտացը-
նեն զձեզ այլ եւ ձեր մարմինը մաս
առ մաս կուտեն:

Եթէ մէկը դանակն առած գայ
եւ ըսէ ձեզ, թէ «Ամենակարեւոր
պէտքի եւ մեծ օգտի մը համար ձեր
մարմինէն փոքրիկ կտոր մը պիտի փըր-
ցընեմ». դուք ամէն հնարք 'ի գործ
կը դնէք չը թոյլատրելու և կը փախ-
չիք. բայց ինչու ուրեմն կիրքերէն
ալ չէք փախչիր, եւ միշտ նոցա թե-
լադրութեանը կը հետեւիք, որք ամէն
մէկ անդամին ձեր հոգիէն ու մարմի-
նէն ձեր սիրուն առողջութենէն եւ
կեանքէն մեծամեծ մասեր կը փրցնեն:

Ցանկութիւնը, բղջախոհութիւնը,
վաղաշ և պատշոտ սէրը վերջապէս ա-
մէն տեսակ հիւանդութեանց պատ-
ճառ է: Այս սոսկալի կիրքը մարդուն
բանականութիւնը առնելով անոր

մտաց գեղեցիկ լուսաւորութիւնը կը մթացնէ և անբաններէն աւելի վատթարացնելով՝ մարդս չը վայլած անբանական գործերու, սոսկալի մեղքերու եւ ամենավնասակար միջոցներու ձեռք զարնել կուտայ, յագուրդ գըտնելու համար: Այլ ափսոս, ինչ օգուտ որ չէք գիտէր թէ ինչէր կը զոհէք ձեր անձէն, ձեր ոյժէն, ձեր բոլոր գոյարանքներէն. ցաւալի է որ չէք գիտէր թէ ամեն մէկ անգամին որ դուք ձեր այդ կրից թելադրութեան կուրօրէն կը հետեւիք, քանի անգամ որ ձեր միտքի հաճոյքը կը կատարէք, այն ամեն անգամին ձեր առողջութեան և կենաց ծուծը կը քամէք: Քանզի ոչ թէ միայն գործով, այլ և խորհրդով անգամ երբ կը մոլիք և ձեր երեւակայութիւնը հեշտական առարկաներով կամ խորհուրդներով կը զբաղեցնէք, նոյն այն ներքին շարժութիւնները և կրից յուզումը մի և նոյն կերպով կը պատահի. այդ վիճակին մէջ ալ ջղային ձըգտումը, կատարախը (կեռիչմից) հեշտական մեղկութեան և ներքին տագնա-



պի մը նշաններն են: Այսպիսի խորհուրդներով զբաղեալ անձին երակներըն ու ջղերը կը թուլնան ներքին անօթոց պնդութիւնը կը լուծուի և տակաւ առ տակաւ նոյն կենդանական ոգիքը ինքնին ալ կը կորսուին, որով նոյն վնասակար հետեւութիւնները յառաջ կուգան, հապա որչափ առաւել՝ երբ անխոհեմաբար գործնական պատամունքն ալ խորհրդոց հետ լծորդին:

Բայց անտարակոյս, գործը խորհրդոց հետեւանքն է, քանի որ մէկը վատ խորհուրդներու անձնատուր կը լինի, հարկաւ յարմար առիթ պիտի որոնէ և օր մի երբ պատեհութիւն ունենայ՝ զայն 'ի գործ պիտի դնէ: Ուրեմն գլխաւոր զգուշանալու բանն այն է որ մարդ իւր խորհրդոց չը ներէ և թոյլ չը տայ որ իւր կիրքերն յուզող բաներու վերայ մտածէ. զի այն ինքն է բուն մեղաց առաջնորդը, և անոր համար է որ մեղաց զուգակշիռ ծանրութիւնն ունի. վասն զի «Ցանկանալու խորհրդով կնոջ նայելը շնութիւն

ընել է․ և վասն զի սրտէն ելած խոր-հուրդներն են որ մարդը կը պղծեն »։

Ինչու որ գործուած մեղք մը, չարութիւն մը, մոլութիւն մը չը կայ որ նախ մտաց մէջ ծնունդ առած չը ըլլի, ուստի իրաւամբ մեղքերու և մոլութեանց առաջքն առնելու համար Քրիստոնէութիւնը զանոնք սրտէ ու միտքէ հալածել կը պատուիրէ ։ Եւ ով որ ճշմարիտ կենաց իրական երանու-թիւնը կուզէ վայելել, պէտք է Քրիս-տոնէութիւնն իւր բոլոր իմաստովը հասկանայ և անոր օրինաց հնազանդի․ սիրէ քու տէր Աստուածդ, եւ սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս, եւ մի ցանկա-նար խօսքերը բաւական են մեզ ամէն բան հասկացնել․ բայց առ այժմ այս թող մնայ, ես դեռ ըսելիք ունիմ ։

Բղջախոհութիւնը զմարդ յաւիտենա-նի անպիտան կ'ընէ ․ այս վատ խոր-հրդով է որ մարդ անուան անար-ժան մարդիկ՝ իրենց անձը կը մատնեն այնպիսի գործոց, որ ներհակ են աստ-ուածային կամաց, որ ընդդէմ են սըր-բութեան, որ հակառակ են մարդկու-



յին կոչման, որ թշնամի են ամուսնա-կան սրբութեան եւ հաւատարմու-թեան և վերջապէս դահիճ են մարդ-կային կենաց խաղաղութեան և առող-ջութեան ։

Հեշտասէր մարդն անդուլ անդա-դար իւր կրից հրապուրած ատենը ա-ռանց վայրկեան մը ընդդիմանալու, ա-ռանց վայրկեան մը նորա դէմ դնելու կը փութայ որ և իցէ միջոցաւ զայն յա-գեցնել․ բայց « Ցանկութիւնը՝ հրէշ է, չյագեր բնաւ․ որովհետեւ որչափ որ տալը ուտեցնես՝ ոչ թէ ցանկու-թիւնը կը մարի, այլ առաւել եւս կը բորբոքի »։ Թերամիտք կարծելով զայն յագեցնել, ամէն գրգռելուն կը փու-թան ամէն հնարաւոր և բնական ու ան-բնական միջոցներով ճարակ տալ․ բայց չեն գիտեր որ բնութիւնը միշտ պատրաս-տական հիւթ չունենար, և որովհե-տեւ իրենք իրենց անսանձ ցանկու-թեամբը կը գրգռեն ու կը բռնադա-տեն զբնութիւնը որ օգնէ իրենց յի-մարութեանը, ուստի ներքին անդա-կան գործարանները թողլով իրենց սե-

վական գործը՝ կը փութան, կըշտապին անսարգ վավաշոտին անասնական հաճոյքը կատարելու համար՝ աճապարանօք նիւթ պատրաստել. և ահա ներքին ամեն կենդանական հիւթեր, ինչպէս արիւնը, ըղեղը, ծուծը, ոստին և երիկամանց պահպանութեան համար սահմանուած ճարպերը և ուրիշ այսպիսի օգտակար ու կենդանական հիւթեր կը լուծուին, կը քամուին և կուգան ցանկութեան կիրքն յագեցնելու համար նիւթ մատակարարելու. որով ըսել է թէ կենաց սնուցիչ օրէնքը մաշող և սպառիչ օրինաց պիտի ծառայէ, և ահա այսպէս մարդկային մարմնոյ սնունդը կը պակսի. կամաց կամաց կը նիհարանայ, ոսկորները կը ցուցուին, ջղերուն զօրութիւնք կը պակսին, ընդհանուր տկարութիւն մի կ'ուգայ ողորմելին վերայ եւ չը գիտէր պատճառն ինչ է. ստամոքը կը տկարանայ և կը ճնշուի. ստէպ կը ձգձգայ. ներքին կենդանական ոգեաց ջերմութիւնք կը պակսի. քանզի ամենք պահպանող ճարպն և իւղային ու խմային նիւթե-



րը հալած, մաշուած ու վատնուած են. աղիքն ալ բնութեան պէտքն ըստ կարգի արտաքսելու անկարող՝ թշուառ հեշտասէրներէն ոմանք որովայնի անտանելի պնդութեամբ կը վշտանան և ոմանք ալ սպառիչ փորհարութեամբ կը տանջուին, որք և կարօտ պիտի լինին միշտ դեղով կատարել իրենց բնութեան կարիքը, որոյ հետեւանքն ալ վնասակար է։

Փքախտութիւնք ինչպէս նաև փըտախտութիւնք կը տիրէ. քունք երբեմն կը սպառի, երբեմն ալ կը ծանրանայ, երեւակայութեան անկարգութեամբ այլանդակ երազներով անհանգիստ կը լինի, ստէպ գիշերային ակամայ գիճութեամբ կը մաշուի։ Աղէտալի տեսարան, մարդկային մարմնոյ շէնքին մէկ այլանդակ աւերակն է այնուհետեւ և ոչ թէ մարդ. աչքերն ու շրթունքը գունատեալ են. լեզուն՝ բերանն ու որկորը ցամքած. տենդերու ամեն տեսակին ալ ենթակայ է. գլխացաւ՝ միջացաւ՝ և այլն սոսկալական ցաւեր են։ Դիմաց գոյնը կաւերի. եր-

բեմն սրտի բաբախումն կուգայ, աչ-քին տեսութիւնը կը տկարանայ. մինչ-դեռ երիտասարդի մը ակնոցով տես-նելն ամօթ պիտի լինէր, այժմ այն եւս նորաձեւութեան կարգն անցած լինե-լով պարծանք կը համարին քան թէ անարգանք : Թանչը կամ թթախառու-թիւնը զայրանալով մարմնոյն զանազան մասերը կը վնասցնէ :

Բայց եթէ այս յիմար արարածը տակաւին չզգաստանայ, դեռ շատ սոսկալի հետեւանքներ ունի կրելիք. քանզի կը սկսի կռնակի ոսկորը, ծոծ-րակը, գլուխը եւ քամբուշը բռնուած ամօթը ցաւիլ. թեթեւ շարժմամբ կը հոգնի եւ առատօրէն կը քրտնի. ատոնց վերայ կը հասնի ողնաշարի նեխութիւ-նը. ընդ երկար ոտքի վերայ չէ կարող կանգնիլ, շարունակ նստիլ կուզէ. մա-զերը կը սկսին թափիլ. եւ ահա այն ա-տեն հասած է նա խիստ մեծ թշուա-ռութեան :

Այսպէս ջղային դրութեան խան-գարումէն զանազան սոսկալի արկած-ներ իրարու ետեւէ կը յաջորդեն.



Եւ եթէ զալիր հեշտասէրը տակաւին իւր ախտն կուռքը պաշտելու յամառի եւ չը սթափի եւ անցեալ կորուստը դար-մանելու համար հաստատ առաջադր-ութեամբ չուզէ անմիջապէս փոխել իւր ընթացքը, ահաւոր գերեզմանն իրեն դողդոջուն ոտքերուն առջեւ դա-րանակալ կը սպասէ. ուր օր մի անժա-մանակ պիտի գլորի ցաւալից կեանք մի անցունելէ վերջը :

Հապա ո՞ւր թողունք հոգեկան կա-րողութեանց խանգարումը. քանզի ինչպէս ըսինք, ցանկութեան կրից բռ-նուած հիւթը որովհետեւ ուղեղին հետ մեծ կապակցութիւն ունի, եւ ո-րովհետեւ նորա սպառումը ընդհա-նուր ջղային դրութիւնը կը խանգարէ, ուստի բնականաբար կը վնասէ նաեւ ամէն կարողութեանց. նախ իւր ա-ռաջին յիշողութիւնը կը կորսնցնէ, մո-ռացկոտութիւն մի կը տիրէ մտաց վե-րայ. ըմբռնումը եւ մտադրութիւնը կը տկարանայ. որով չէ կարող հաստատուն կերպիւ բան ուսանիլ կամ միտք պահել. ամէն գործէ ձանձրութի՛ կ՚զգայ. ապուշ-

է իւր տեսքը, Թոյլ, մեղկ և դանդաղ է ամէն բանի մէջ. վիճակէն, սնունդէն ընկերութիւններէ եւ նոյն իսկ իւր կեանքէն ալ դժգոհ է. կը կարծէ թէ ամէն ինչ միաբանած են իւր թըշուառութեանը համար. միշտ տխուր ու մելամաղձոտ է. քիչ անգամ անհաճոյ ժպիտ մի կը տեսնուի կնճռած դէմքին վերայ, այն ատեն կամ փտած ակռաները և կամ գունատ ու նեխեալ լնտերքը երեւելով մարդը կը տաղտկացնեն. այս վիճակիս մէջ շատեր կան որ լուծուած և յիմարած են: Ո՜հ, որչափ խեղճ է մարդ որ թըշուառութեան մէջ երջանկութիւն կը փնտռէ, որ չարեաց մէջ բարիք կ'երազէ, որ մահուան մէջ կեանք գտնել կը կարծէ:

Ցանկութեան կիրքը, որդեակք իմ, անխոհեմ և չար սէրը, որ սէր կոչուելու արժանի չէ, այս ամէն չարեաց հետ տակաւին ինչե՞ր, ի՞նչ փորձանքներ բերած է և կը բերէ ձեր գլխուն: Ամէն բնազննին փիլիսոփաներու և հըմուտ բժշկաց փորձովն ստուգուած է



որ ցանկութիւնը հարկաւ ձեր ներքին գործարանները կը շփոթէ. կենսական հիւթը կը թունաւորէ և կ'ապականէ. ընդհանուր ջղային տկարութեամբ ձեր անդամներն ու զգայարանքներն իրենց պատշաճ գործողութիւնը կը կորուսանեն, իրենց պաշտօնը կատարելու անկարող կը լինին, ձեր ձեռքերը թուլցած կը դողան եւ ոտքերը կը դեգեւլին, ականջները կը շառաչեն և լսողութեան կարողութիւնը կը պակսի, ձեր աչքերուն տեսութիւնը կը նուազի և կ'ըսպառի:

Շատերու թշուառութեան առիթ եղող մէկն ալ այն է որ՝ այս վիճակիս մէջ շատերն ամուսնացած ու իրենց սիրոյ և ուրախութեան առաջին օրը դառնացուցած են՝ անկարող լինելով իրենց ամուսնական պարտքը կատարել. եւ իրենց այս ապիկարութեան պատճառը չը գիտնալով որ բուն իսկ իրենք են, յիմարաբար կը դիմեն անմիտ տէվլիշներու և մոլլաներու և շատ անգամ չարաբարոյ խաբեբաներու կամ ո՛ և իցէ յիմար ան-

սխտանի մը , կ'աղաչեն , ոտքը ձեռքը հազար անգամ կը համբուրեն , ոտակնին կը մնխեն վերջապէս ամեն բան չեն խնայեր միայն թէ դարման մի գըտնեն . բայց շատ անգամ յոյսերնին 'ի գերեւ կ'ելնէ և իրենք ընդերկար կը մնան նոյն տկարութեան մէջ . քիչ անգամ կը պատահի որ գիտցողի մի հանդիպին և օգուտ քաղեն ։ Ասկէ ահա բացարձակապէս կ'ըսեմ , որ այս ամեն աղետից մէկ հատիկ ու վճռական դարմանն է քրիստոնէական սրբութիւն , ողջախոհութիւն և ժուժկալութիւն , որոյ հետ նաև հմուտ բժշկի մը դարմանը ։ Բայց դարձեալ կը կրկնեմ թէ պէտք է գիտնալ որ առանց ողջախոհութեան որ և իցէ դարման անօգուտ է քանզի տեւողութիւն չունի ։

Զարհուրելի կէտ մի եւս կայ՝ զոր չեմ ուզեր զանց առնել . բղջախոհ մաղին , որ այսպէս իւր զօրութիւնը տըկարացուցած և անձը եղծած է , եթէ դժբաղդաբար առանց ժուժկալութեամբ կազդուրուելու ամուսնանայ շատ անգամ զաւակ չունենար և եթէ



զաւակներ ունենալու յաջողի , այն զաւակները կամ բնաւ արեւ չը պիտի տեսնեն , եւ կամ ծնելէն վերջը թոշնած ու թառամած տունկի նըման պիտի թօթափին ու չորնան , իսկ որ և իցէ մէջերնուն եթէ ապրին , ա՜հ , խեղճ կեանք , ի՞նչ ողորմելի պիտի ըլլայ նոցա կենաց ընթացքը . այն թշուառ էակները հիւանդոտ , ցաւալից , հաշմոտ , վիրալից , ծիւրեալ եւ շատ հիւանդութեանց դիւրամէտ կեանք մի պիտի անցունեն . տանջանք պիտի ըլլան թէ իրենց անձին և թէ իրենց շրջակայից . ի՞նչ երանութիւն պիտի առթեն այսպիսի զաւակներ իրենց գերդաստանին . ի՞նչ բերկրանք ու մխիթարութիւն պիտի զգան ամուսինք . ընտանեկան կենաց քաղցրութիւնն ու խաղաղութիւնը ո՞ւր պիտի փայլեն , մարդկութիւնը կամ ազգը ի՞նչ օգուտ պիտի ապասէ իւր այսպիսի անդամներէն և ի՞նչ պիտի փայլէ . եթէ այսպէս երթայ եւ շարունակէ , մարդկային ազգը խումբ մի ղածածներ , յուցանքաւոր հրէշներ

և հաշմոտ անդամներ պիտի ունենայ, որ պատիւ չը բերեր իրեն ։ Քանզի իւր ձեղծման և ապականեալ վարուց արդիւնքն ու հետեւանքն է այս . առաքինութիւն և օրինապահութիւն չունենալուն ապացոյց է . վասն զի բարի վարուց հետեւանքն է առողջութիւնը զօրութիւնը և աշխատասիրութիւնը , հետեւաբար իւր վարձքն ունի՝ զուարթ բերկրանքն ու սրտի խաղաղութիւն ։ Իմաստասէր մի, իրաւամբ երջանկութեան համար սա երեք պայմանները կը պահանջէր , առողջ մարմին , ազատ միտք , ու մաքուր սիրտ ։ Քանզի ինչպէս կարելի է երջանիկ ըլլալ , երբ մեր մարմնոյ մէկ կողմը միշտ դդալով տկարութեամբ և մտատանջութեամբ կը խռովի մեր միտքը . ինչպէ՞ս երանելի կրնամք ըսուիլ , երբ մեր միտքը զանազան սուտ ու վնասակար նախապաշարումներով առասպելներով եւ կամ չար խորհուրդներով կաշկանդուած է , ո՞հ , միթէ կարելի՞ է երջանիկ համարիլ , երբ մեր սիրտն ապականուած է մոլութեանց և մոլորութեանց պժգալի



կեղտերով . քաւ լիցի ։ Ուրեմն մարդկան ազգի թշուառութեան պատճառըն իրենց անսանձ թողած կիրքերն են ։

---

## Ե.

Դուք ով մանկունք , պատանիք և երիտասարդք , այս ամենը լսելով արդեօք համոզուեցա՞ք , որ ցանկութեան խորհուրդը իւր բոլոր գործնական հետեւանքներովը ձեր կենաց դահիճն ու ձեր քաղցր երջանկութեան թշնամին է . արդեօք ձեր այժմեան ունեցած շատ կամ սակաւ վնասներովը բաղդատելով իմ ասածներս՝ կարող եղա՞ք հետեւցնել , որ ձեր ապագան ողորմելի և թշուառ է ։ Այս անաչառ դատողութիւնն ընողը պիտի շահի ։

Բայց ես գիտեմ և քաջ համոզուած եմ որ ձեզմէ խիստ շատերը որ առաւել կամապաշտ են՝ տակաւին չը պիտի հաւատան թէ կիրքերը , մանաւանդ ցանկութեան կիրքը կարող են այդչափ վընասներ հասցնել , և ինչպէս պակաս-

միտք կը կարծեն, դուքս ալ փափաշատ գործողութիւնք կամ նոյն խիստ հատուակը, գիտութիւնը իբր անհրաժեշտ կարեւորութիւն կը համարին. ոչ, խիստ կը սիրալին ղայս բողք եւ չարաչար կը մոլորին նոյն հետեւողք. քանզի այդ եղեռնագործ մոլութիւնը բնաւ մէկու մի համար ոչ մի ժամանակ կարեւորութիւն չունենալէ զատ, ինչպէս յայտնեցինք, խիստ մեծ վնասներու ալ պատճառ է։

Կան ձեզմէ շատեր ալ, որք կ՚ըսեն թէ այս ոք կամ այն ոք խիստ մոլած է այդպիսի չար կրիւք, եւ յաճախակի զանազան միջոցներով կը կատարէ իւր չար կամքը, բայց բնաւ վնաս մի կրած չունի, միշտ առողջ և առոյգ է եւ ուրիշ ատոնց նման շատ մի իրենց մոլութեանը նպաստաւոր առարկութիւններ կ՚ընեն։ Ես չեմ մեղադրեր, մանաւանդ աւելի ուրախ կը լինիմ, եթէ իրենց մտաց մէջ յղացած դեռ եւս ուրիշ առարկութիւններն ալ գիտնամ, որոց հնարաւոր պատասխաններն ու լուծումը և ճշմարիտ պատճառնե-



րըն ըստ կարի տալով՝ կարողանամ ապացուցել զիրենք այն ամեն վտանգներէն՝ որս կը ձգէ չար ցանկութիւնը։

Ձեզ վնասակար է սուտ բարեպաշտութեամբ կեղծաւորին ալ, վասն զի անով այլոց միտքը կը շփոթէք, որք և զձեզ անարատ համարելով՝ կը քաշուին բան խօսելու եւ դուք կը մնաք նոյն ախտին մէջ և կը մաշիք չարաչար։

Յիրաւի որդեակք իմ, կը տեսնեմ որ հետախոյզ էք, ինչպէս լաւ նկատեր էք որ այդ մոլութեան հետեւողներէն ոմանք շատ մեծ վնաս չեն կրած. թերեւս շատ անգամ այդ խօսքն ըսած ատեննիդ զձեզ իսկ ակնարկած լինիք, թէ և պարզ խոստովանիք աւելի լաւ կ՚ընէք, քանզի գուցէ այդպիսի խակ խորհուրդներով ապահով կը լինիք և ձեր վերայ վտանգ չը նշմարելով ձեր մոլութեան մէջ յարատեւէք եւ յանկարծ օր մի զձեզ փշրուած կը տեսնէք՝ երբ ալ անօգուտ կը լինի ձեր բեկորները դարմանել։

Արդարեւ հանապազօրեայ օրինակներով տեսնուած է, որ ձեզմէ ոմանք

շուտով կ՚ենթարկին մոլութենէ յառա-
ջացած դառն ախտերուն, իսկ ոմանք
երկար ատեն շարունակելով իրենց
կրից թելադրածը, երեւելի և դուրսէն
յայտնի ախտ մը չեն կրեր, կամ գէթ
այնպէս կը համարին թէ չեն կրեր, որ
արդարեւ մեծ բարեբաղդութիւն է ե-
թէ մէկուն պատահած է. սակայն իմ
խօսքերս լսողները պէտք չէ վստահա-
նան իրենց այդ բարեբաղդութեան վերայ.
պէտք չէ կարծեն որ մինչ խապառ ապխի
դիմանան : Ա՜խ, ո՜րչափ դէշ են այսպի-
սիներն որք այսու վստահութեամբ
թէ իրենք չեն զգուշանար, առաւել
կը մոլին և թէ այս փաստով զայս ալ
համոզելով այլոց չարեաց ալ պատճառ
կը դառնան :

Սակայն մի՛ վստահիք որդեակք իմ,
ձեր այդ հազուադիւտ յաջողակու-
թեան վերայ, զոր բնութեան և ձեր
ծնողաց առաքինութեան պարտական
էք. սակայն եթէ այդպիսի տկար խոր-
հուրդներով, այդ ընտիր բարեմաս-
նութեան յարգը չը ճանչնաք, կը գայ
օր, որ դուք ևս կը կորուսանէք զայն,



քանզի այդ չար ախտին հետեւող ու
չը վնասուող չը կայ :

Մտածեցէ՛ք, որդեակք իմ, խիստ
բարակ ապակին թեթեւ հարուածով
մը կը կոտրի, իսկ հաստ ապակին դըժ-
ուարաւ կամ սաստիկ հարուածով կը
կոտրի, բայց վերջապէս կը կոտրի : Մի
թէ չէ՞ք տեսներ որ հողն ու քարը նոյն
պնդութիւնը չունին, և քար քարէ ա-
ւելի կարծր ու դիմացկուն է, չէ՞ք գի-
տեր որ երկաթն ու կապարը տարբեր
կարծրութիւն ունին. բայց ասոնց ա-
մէնէն կարծր ու դիմացկունին վերայ
եւս երկարատեւ ու շարունակեալ
հարուածները պարապ չեն երթար,
ամէն մէկ հարուած աննշմարելի փշրի
չափ մասեր փրցնելով՝ կը գայ ժամա-
նակ, որ մեծ խրամ մը կը բանայ. ու-
րեմն չը կայ հարուած մը որ պարապն
անցած լինի, անշուշտ մեծ կամ փոքր,
քիչ կամ շատ, կանուխ կամ ուշ ներ-
գործութիւն պիտի ընէ. այս տարբե-
րութիւնն ալ կը պատահի նիւթին
զանազանութենէն. այսինքն տկար կամ
զօրաւոր լինելէն. հարուածն սկսած

ժամանակէն , այսինքն կանուխ կամ ուշ սխալէն , յաճախելէն , տեւողութենէն և այլն ։ Ահա դուք ալ ճիշդ այսպէս էք . ձեր կիրքերն ու մոլութիւնները եթէ ձեզմէ ոմանց վերայ շուտով երեւելի ներգործութիւն չընէր , պատճառն այն է , որ նախ նոցա կազմը բնութեամբ ամուր և կատարեալ առողջ կը լինի . երկրորդ՝ իրենց կիրքերը բարեբաղդութեամբ և բարերար պատճառով մի ուշ արթնցած և գործադրուած կը լինին և յաճախած չեն լինիր . երրորդ՝ չեն յարատեւեր . այլ շուտով կը զգան և ետ կը կենան ։ Այս առիթները , այո կարող են վնասներն անտեսանելի ընել , բայց վնասն բոլորը արգիլել չեն կարող . ուստի բնաւ պէտք չէ վստահիլ ։

Աստուած , մեր ամենաբարի Հայրը գթած ու մարդասէր լինելուն սահմանած է որ իւր օրինաց դէմ մեղանչողները մէկէն 'ի մէկ և կատարեալ չը վնասուին . կամեցեր է , որ այս մարդկային մարմնոյ գեղեցիկ ու կատարեալ շէնքը անմիջապէս չեղծանի խիստ պա-



տուհասիւ , այլ ձեր զգուշութեան և դարձին համար կամաց կամաց փոքր հարուածներով կը զգուշացնէ և հետզհետէ պատուհաս պատուհասի վերայ գալով կը ծանրանայ և այսպէս մաշելով կեղծանի ինչպէս յառաջ ալ ըսած եմ ։ Այսպէս ահա Աստուած անփոփոխելի օրէնք դրաւ բնութեան մէջ , որ դուք առաջին անգամ այն կրած թեթեւ հիւանդութիւններէն խրատուելով զգուշանաք . այն ախտրութիւնները , տենդերը , գլխացաւները ախորժակ չունենալը , թուլութիւններն ու ծուլութիւնները ձեր տղայական անմեղ ու սիրուն ձայնին դառնալը , գործէ ձանձրանալն ու դժգոհութիւն կրելը , մելամաղձութիւնները , առանձնասիրութիւնները , գիշերային ահաւոր գիճութիւնները ուրովք առանց հաճոյից խաղ կը մաշէք , և այլն և այլն բոլոր ձեր կրից պատուհասներն են ։ Երբ այս ամենը մի առ մի կ'բախին և կամաց կամաց իրարու ետեւէ կը շարունակեն ու կը սաստկանան , ապա ամենքն ալ ձեր կործանման

նախընթաց նշաններն են, որք ձեր կենաց ապագայ աղէտը կը գուժեն ձեզ։ Բայց դուք բնաւ բանի տեղ չէք դներ զանոնք. նոյն իսկ երբ այս հիւանդութիւնները կը կրէք, այն ատեններն անգամ մի և նոյն մոլութեան կը հետեւիք, մի և նոյն կիրքերնիդ կը շոյէք կը գրգռէք ու յագեցնելու կ'աշխատիք. որպէս զի ձեր թշուառութիւնը փութացնէք։

Վարպետ որմնադիրը խախտուած շէնքի մի առաջին անցած ատեն երեւցած նշաններէն կը գուշակէ նորա կործանումը եւ կ'առաջարկէ, որ շէնքը դարմանուի. եթէ տանուտէրը անհոգնայ, օր յաւուր շէնքին նշանները կը սաստկանան, և եթէ յառաջ թեթեւ նորոգում մը պիտի բաւականանար, յետոյ որչափ ուշացնէ այնչափ ալ նորոգութիւնը ծանր ու դժուար պիտի լինի. բայց եթէ բոլորովին անհոգ մընայ, շէնքը կը կործանի և անհոգ տանտիրոջ չարաչար վնաս տալէ զատ՝ շատ անգամ այլոց եւս կը վնասէ։

Այսպէս ալ նախախնամութիւնը



սահմանած է, որ ձեր ապագայ մեծամեծ վնասուց փոքրիկ նշաններն յառաջուց երեւլին ձեր վերայ, որք պէտք են զձեզ սակացնել, որոց երեւոյթը կը յայտնեն ձեզ՝ կրօնքը, խոստովանահայրները, բժիշկները և ձեր հաւատարիմ բարեկամները. եթէ բժիշկներն ու խոստովանահայրները ինչ և իցէ նկատումով կամ ագահութեամբ չեն յայտներ ձեզ զանցառութիւն կ'ընեն և չեն զգուշացներ, նոքա իրենց կոչման դէմ կը մեղանչեն. եթէ դուք անկեղծ ու հաւատարիմ բարեկամ չունիք որ յայտնէ, սակայն ձեր երկնային ու բարերար կրօնքը ունիք, որ կը յայտնէ ձեզ թէ՝ մեղքին վարձքը մահ է, և հիւանդութիւնք հրաւիրակ են մահու։

Կրօնքն անաչառ է, քրիստոնէութիւնը խիստ սիրուն և անկեղծ բարեկամ մի է, որուն խրատներն ու հըրահանգները բովանդակ կեանք ու երջանկութիւն են. դուք պէտք է եռանդուն սիրով ուսանիք ձեր կրօնը և 'ի գործ դնէք զայն 'ի մանկութենէ, որ-

պէս զի ձեր բոլոր հասակին մէջ կա-
տարեալ երջանկութիւն վայելէք ։
Դուք ուրախութեամբ և անդադար
բաղձանօք պէտք է ուսանիք ձեր սուրբ
ու անհամեմատ կրօնը և նորա հրա-
մանները ու պատուէրները հաւատար-
մութեամբ 'ի գործ դնէք որպէս զի
թէ դուք ազատ մնաք կործանումէ և
թէ զայլս ազատէք ։

Դուք մի՛ կարծէք, որդեա՛կք իմ,
թէ ոմանք բնաւ չեն վնասուիր. ան-
հնարին է որ չը վնասուին ։ Կիրքերը
կը գան ու կ'երթան, բայց առանց ի-
րենց ապականիչ նշանը ձգելու չեն
անցնիր, թէպէտ և առաջին անգամ-
ները նոցա վնասներն զգալի չը լինին,
այնու ամենայնիւ վնասը կայ և ձեր
առողջութիւնն երթալէն վերջը կ'ըս-
կըսի երեւիլ ։

Եթէ մէկը կրից վնասներուն եր-
կար կը տոկայ և երեւելի փոփոխու-
թիւն մի չըզգար, այնպիսին պէտք է
գիտնայ որ եթէ իւր կրից թելադ-
րութեան չանսար, եթէ ժուժկալու-
թիւն ունենար, հարկաւ նա այժմեան



վայելած կեանքէն աւելի առողջ, աւե-
լի երկար, խաղաղ ու զուարթ կեանք
մի պիտի վարէր եւ անվիշտ ու ան-
խռով ծերութիւն մի նա և. բնական
հանգիստ մահ մի պիտի ունենար ա-
ռանց երկար հիւանդութեան և տա-
ռապանաց ։

Արդ՝ որովհետեւ չէ զգուշացած,
և իւր մարմնոյն, կենաց, հոգւոյն եւ
առողջութեանն ու երջանկութեան
յարգը չէ ճանչցած, որովհետեւ կո-
րուսած է իւր սնունդը, իւր արիւնը
և ոյժը. ուստի բնութեամբ որչափ
առողջ ու հաստատուն կազմ ունե-
ցած լինի և որչափ երկար տոկայ,
այնու ամենայնիւ Աստուծոյ բնու-
թեան օրինաց մէջ սահմանած և դը-
րած վնասները պիտի կրէ. եթէ ոչ
այսօր, անշուշտ վաղը. եթէ ոչ այս
տարի, հարկաւ եկող կամ միւս տա-
րին, վերջապէս վնաս չը կրել չը լինիր ։
Անանկ պատիր երեւոյթներէ մի՛ խա-
բուիք և մոլորելով փորձութեան մէջ
անկանիք ։ Մտածեցէք որ երկու հոգի
օրը տասն դահեկան կը վաստնեն, բայց

մէկը հարիւր դահեկան ունի, իսկ միւ-
սը երկու հարիւր, չէ՞ որ հարիւր դա-
հեկան ունեցողինը շուտով պիտի
հատնի, իսկ երկու հարիւր ունեցողի-
նը ուշ, բայց հարկաւ պիտի հատնի։

Ինչո՞ւ փայտահատը մի և նոյն կա-
ցինով մի և նոյն զօրութեամբ և մի և
նոյն հարուածով ծառ մի մէկ քառոր-
դէն կը կտրէ՝ իսկ ուրիշ ծառ մի երկու
ժամէն ալ չէ կարող կտրել. ծառ կայ
որ հաստ և պինդ է, ծառ ալ կայ որ
բարակ և կակուղ է. սակայն որչափ
ալ հաստ և ամուր լինի, կացինը որ-
չափ ալ բութ լինի, այնու ամենայնիւ
կարո՞ղ էք ասել թէ ամեն մէկ հար-
ուած առանց վէրքի և առանց նշանի
կ'անցնի, — ո՛չ. — կարո՞ղ էք ասել թէ
շարունակեալ հարուածները չեն կոր-
ծանէր զայն. քաւ լիցի. ինչ ալ լինի
անշուշտ պիտի կործանի, անանկ ալ
մարդուս մարմնոյ կազմը. ոմանք տա-
կուն են, և ոմանք տկար, անոր համար
ոմանց վերայ շուտով զգալի կը լինի
և ոմանց ուշ։

Կը յուսամ՝ որ սոյն բացատրու-



թենէն և օրինակներէն կարող եմք
հասկանալ և մակաբերել, որ մեր թը-
ւած բոլոր հիւանդութիւններն ու նը-
շանները միօրինակ կերպով ամենուն
վերայ մի և նոյն ժամանակ չեն տես-
նուիր. ոմանց վերայ մէկը կամ մէկ
քանին կը տեսնուի, ոմանք քիչ ժա-
մանակի մէջ բոլորն ալ կը կրեն, իսկ
այլք երկար ատեն միմիայն մէկ նշան
մի կամ վնաս մի կ'ունենան. իւրաքան-
չիւրին իրեն կազմին ու խառնուածոց
համեմատ կը պատահի որ մին այս ինչ
ներքին կամ արտաքին պատճառաւ
կամ ծննդեան ու սերնդեան ինչ ինչ
հանգամանքներով իւր մէկ կողմը ջըլ-
ղերուն այս ինչ մասը կամ զգայարան-
քը տկար կը լինի. ահա այնպիսւոյն
նոյն կողմը աւելի շուտ և աւելի շատ
կը վնասուի. զոր օրինակ, ոմանց ծըն-
կերը կը բռնուին, ոմանք ստամոքսի
ցաւ կամ ճնշում կ'ունենան, որ եր-
բեմն այնչափ կը զօրէ, մինչեւ ուշա-
թափ կ'ընէ զմարդ. ոմանք ականջի
ցաւ և կամաց կամաց մինչեւ իսկ խըլ-
ութիւն կ'ունենան, ոմանք աչքի ցաւ,

կարճատեսութիւն եւ կուրութիւն կ'ունենան, և այլն ։ Ուրեմն երբ կը տեսնէք որ յայանի հեշտասէր մի այս ինչ կամ այն ինչ վնասը չէ կրած, չըլլայ որ երկբայիք, նա անշուշտ ուրիշ չարիք կրած է եւ կը կրէ, թողունք այն ներքին վշտերն ու ծածուկ տառապանքները, որք չեն երեւիր, զորս ինքն միայն կը զգայ. բայց որպէս զի իւր սիրած կուռքէն չը բաժնուի, որպէս զի իւր պաշտած մոլութենէն չը զատուի, բնաւ չուզեր որ այն ցաւերըն անկէ յառաջ եկած համարի. այս պատճառաւ ընդհանրապէս անուղղայ կը համարուին նոքա, որք իրենց յանցանքը յանցանք չեն համարիր և երբ ուրիշէն յանդիմանուին, կ'ուրանան և արդարանալու կը ճգնին, կամ այլոց յանցանքը ներկայացնելով՝ իրենցը խափանել կ'աշխատին. նաև նոքա, որք իրենց ուղղութեան համար խրատ կ'առնուն բայց չեն պահեր, առաջին յանցանքնին կը մոռանան և կիրքերնին կը յաղթէ իւրեանց օգտին, այսպիսիներն շատ անգամ կը գլորին և



յաճախ կը մեղանչեն ըստ առածին թէ, “ Սխալանքը մոռացողը կը սկսի նորէն սխալիլ ”։

Դուն ալ, որ իմ այս խօսքերս կը կարդաս, թերեւս այնպիսիներէն լինիս, որ կարծես թէ ամենեւին վնաս մի կրած չունիս, կամ այնպէս համարիս թէ դու հեշտախտութեան գերի չես. բայց աղէ ուշադիր եղիր. ինչո՞ւ յառաջ դէմքդ լեցուն և այտերդ կարմիր էր, իսկ այժմ նիհար ու գունաթափ, ինչո՞ւ սրտաբեկ և վհատեալ կ'երեւիս, մինչդեռ մեծ հիւանդութիւն մի կրած չես եւ այդպիսի մեծամեծ վնասներ առթող ուրիշ պատահար մի եկած չէ գլուխդ. ո՞ւր է նախկին առուգութիւնդ ճակտիդ պարզութիւնն ու անմեղութիւնը. յառաջ ազատ ու սուր կը նայէիր և պայծառ կը տեսնէիր, հիմա ինչո՞ւ ճզճըմած կը նայիս և կոպերդ իրար բերելով կը կծկես և թարթիչներուդ մէջէն կը նայիս, բայց և այնպէս ալ յըստակ չես տեսներ. ուրիշ արտաքին յանդիմանիչ նշաններու վերայ խօսք

չեմ ըներ, որք սովորական են. ինչպէս խոցերը, պալատները, կապուտակ բե-ծերը, և այլն և այլն:

Բայց կը հարցնեմ, դեռ տաղդ ե-րիտասարդ ես, ո՞ւր է սիրուն մազե-րուդ խառնութիւնը. ինչո՞ւ այժմէն սկսած է թափիլ: Չեմ ուզեր բացատ-րել մէջքիդ թուլութիւնը, յաճախա-կի ցաւիլը, միզի անժուժկալութիւնը կամ միզարգելութիւը, գլխուդ դառ-նալը և ցաւիլը, ծծրակիդ եւ սամբ-սիդ ցաւը՝ որուն ակարութենէն ա-տամներուդ փտիլը: Բայց դու և ոչ ատոնց մէկը քու կրիցդ պտուղը կը սեպես. թերևս այս բոլոր գրածներս միշտ այլոց վերագրես. բայց ես ու-զելով որ ամենուն օգտակար ըլլամ, կը փութամ այդ թիւր մտածութիւ-նըդ քեզմէ հեռացնել. կ'աղաչեմ ու կը յորդորեմ զքեզ, որ մտադրութիդ քու վերայ դարձնես. չափազանց ու յիմար ինքնասիրութիւնդ մէկ դի թող որ անաչառ խօսիմ և խօսքս կարող-նամ հասկացնել:

Պէտք է գիտնաս, ով սիրելի ըն-



թերցող, ով որ ալ ես, իմ խօսքս քեզ համար է, ոչ ատոր եւ ոչ անոր, իմ նկարագրածս բուն դուն ես՝ որ այժմ կը կարդաս, խոնարհիր կաղաչեմ, ճանչցիր դու զքեզ և ամեն ըսածներս վերադ առ, բնաւ վերայէդ նետելով արդարանալու մի՛ ձգնիր, ամենէն ա-ւելի դու քեզ մօտ ես, ուրեմն դու զքեզ նկատէ, դու զքեզ դատէ ամե-նայն անաչառութեամբ և համոզուէ որ այս ամեն ասածներս ինչպէս այլոց, նոյնպէս և քեզ համար ճշմարիտ են. որպէս զի այդու համոզմամբ. “Մար-մնոյ ցանկութիւնը չըկատարես և հե-թանոսաց պէս մարմնոյ ցանկութեան մէջ չըշրջիս”, և փորձութիւններու չըհանդիպիս. վասն զի “Ամեն մարդ իւր ցանկութիւններովը կը փորձուի, և ցանկութիւնը յղանալով մեղք կը ծնի և մեղքն ալ կատարուելով մահ կը ծնի”: Այս առաքելական խօսքե-րուն նոյնպէս և հետեւեալներուն լաւ ուշադրութիւն ըրէ 'ի միտ առ և կիր-քերդ զսպէ, “Մէկ դի ձգեցէք պոռ-նըկութիւնը, պղծութիւնը, բիծը, չար

բաներու ցանկանալը և ագահութիւնը, որ կռապաշտութիւն է, որոց համար Աստուծոյ բարկութիւնը անհաւան որդիներու վրայ կը գայ...։

"Միթէ չը գիտէ՞ք որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են. արդ՝ Քրիստոսի անդամն առնելով պոռնիկի անդամ ընենք.— քաւ լիցի։ Միթէ չը գիտէ՞ք որ պոռնիկի մօտեցողը մէկ մարմին կը լինի, իսկ Տիրոջ մօտեցողը մէկ հոգի կը լինի, ուրեմն փախիք պոռնկութենէ...։

"Վասն զի քանի որ մեղաց ծառայ էիք արդարութենէ ազատ էիք", բայց այն ատեն ինչ պտուղ ունէիք (ձեր այն մեղքի գործքերով) որովք հիմա ամօթահար եղած էք, ինչու որ անոնց վերջը մահ է. բայց հիմա այն մեղքերէն ազատելով՝ սրբութեամբ ձեր պըտուղն ունիք, որոյ վախճանը յաւիտենական կեանքն է. ինչու որ մեղաց թօշակը մահ է, բայց Աստուծոյ շնորհքը յաւիտենական կեանք է...։

"Ասկէց յետոյ մէկդի ընենք խաւարի գործքերը եւ լուսոյ զէնքերը



հագնինք, ցերեկուան մէջ շրջելու պէս արժուն և զգաստացած շրջինք, և չէ թէ անառակութեամբ եւ արբեցութեամբ, ոչ խառն անկողնով ոչ պըղծութեամբ, ոչ նախանձով և ոչ ապականութեամբ, այլ Տէր Յիսուս Քրիստոսը հագէք և ցանկութեան մասին ձեր մարմնոյ կամքը մի կատարէք։

"Չէ՞ք գիտեր որ դուք տաճար էք Աստուծոյ. և Աստուծոյ հոգին ձեր մէջ բնակած է, ով որ Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած ալ զինքը պիտի ապականէ. ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք"։

Պօղոս սրբազան Առաքելոյն այս խօսքերէն պարզապէս կը հասկանամք որ այս ցանկական խորհուրդը իւր բոլոր պտուղներովն ու գործքերովը որչափ ատելի է Աստուծոյ, այն չափ ալ չար ու վնասակար է մարդկային կենաց, և որչափ որ երկրաւոր հանգըստութենէ, առողջութենէ և երջանկութենէ կը զրկէ, եւս առաւել յաւիտենական երջանկութենէն և աստուածային փառաց վայելմունքէն կը

զրկէ , ինչպէս որ Առաքեալը Կորըն-
թացւոց կ'ըսէ . « Սրբութեան հետե-
ւեցէք , ինչու որ առանց անոր մէկը
չէ կարող զԱստուած տեսնել » ։ Նը-
մանապէս մեր Տէր Յիսուս Քրիստոսն
ալ սրտով սուրբ եղողներուն երա-
նութիւն տուաւ , « Երանի , ըսաւ ,
սրտով սուրբ եղողներուն ինչու որ
նոքա զԱստուած պիտի տեսնեն » ։

Սիրուն որդեակք իմ , այսչափ խօս-
քեր ուրիշ բանի համար չեն բայց ե-
թէ ձեր լաւութեանը համար . ասոնք
գրելու զիս թելադրող մէկ հատիկ
պատճառն է ձեր օգուտը . կ'ուզեմ
և խիստ ցանկալի է ինձ որ դուք ա-
ռողջ , խաղաղ , երջանիկ և առաքի-
նութեամբ ճոխացած կեանք ունե-
նաք ։ Կուզեմ և շատ սիրելի է ինձ ,
որ դուք կայտառ , խելացի և առողջ
ու հաստատուն կազմ ունեցող առա-
քինի զաւակներու ամենալաւ հայրեր
լինիք . ձեր ուղիղ վարքով նոցա վա-
րուց , կենաց և շարժմանց բարի օրի-
նակ հանդիսանայք . քաղցր է ինձ յու-
սալ որ ձեր որդիքը ձեր գործքէն ու-



օրինակէն առնուն բուն ճշմարիտ ու
կատարեալ դաստիարակութիւնը . ա-
ռանց որոյ վերջէն ընդունած օտար
ամենալաւ դաստիարակութիւնն ու
կրթութիւնը շատ անգամ և գրեթէ
ընդհանրապէս յուսացուած օգուտը
չարդիւնաւորեր . ինչպէս ահա յայտնի
կը տեսնուի այն ազգաց կրթութեան
և բարոյական զարգացման մէջ յորս
ծնողք անկիրթ են և վարքերնին ու
բարքերնին ուղղուած չէ յօրէնս սըր-
բութեան ։

---

## Ջ.

Ահա կը տեսնէք , որդեակք իմ
սիրելիք , ահա կը տեսնէք թէ որչափ
վնասակար են կիրքերը , մանաւանդ
հեշտախտութեան կիրքը , այն չար
ցանկութիւնը , որ զձեզ կը մաշէ ձեր
երջանկութիւնը կը յափշտակէ և ըզ-
ձեզ կրկնակի կը թշուառացնէ , աստ
մարմնով և անդ հոգւով ։

Որդեակք իմ երկրի վերայ կատա-
րեալ երջանկութիւն չի կայ . քանզի

բաղձանքի, վայելմանց և հաճոյից լը-
րումն չի կայ․ իսկ երջանկութիւնն է
լըումն բաղձանաց․ այսինքն երբ այն-
պիսի բան մի կունենամք, ուրկէ դուրս
ալ ուրիշ բանի կարօտ չեմք լինիր,
այն ատեն կատարեալ երջանիկ կը լի-
նիմք, և այս բանը երկրի վերայ չը կայ․
քանզի երկրի վերայ անփոփոխ բան
չը կայ, այսօր բանի մը կը բաղձայ մարդ,
վաղն ուրիշ բանի և ամէն բաղձայա-
ծը ձեռք ձգելէն վերջը վերստին չը
յագենար․ ուրեմն խիստ կը սխալին
նոքա, որք այս կենցաղոյս մէջ նիւ-
թական ու փոփոխելի բաներու մէջ
կատարեալ երջանկութիւն կը բընտ-
ռեն։

Մարդուն վախճանն է Աստուծոյ
վայելումը, Աստուծոյ հետ միանալը,
և միայն Աստուած է մարդուս կատա-
րեալ երջանկութիւնը․ Անկէց դուրս
և առանց Անոր երբէք լաւ բան չէ
կարելի յուսալ․ քանզի անփոփոխ, կա-
տարեալ և յաւիտենական բարի մի-
միայն Աստուած է․ իրմէ բոլոր աստ-
ղերաց մէջ այսքան առատ բարիք սփռ-



ուած են մեր կարեւորութեանը ու
վայելչութեան համար, Նա է աղբիւր
ամենայն բարութեան, գեղեցկութե՟
և վսեմութեան․ Նա է միմիայն բա-
րերար, ուրեմն և Նա է մէկ հատիկ
սիրոյ արժանի առարկայն․ ինչու որ
նորա մէջ և իրմէ են բոլոր բարիք և
կատարելութիւնք, Նա է լըումն ամե-
նայն բաղձանաց․ ուրեմն և ինքն է
մարդուն կատարեալ երջանկութիւնը․
ապա ուրեմն մեր ամէն խօսքը, գործ-
քը, շարժումը մեր բոլոր կեանքը դէպ
անոր պէտք է ուղղուած լինի․ այն-
պէս պէտք է ընթանամք, որպէս զի
անոր հասնիմք, որ երջանկանամք, ա-
նանկ երջանկութեամբ՝ զոր ոչ բնաւ
մէկը կարող է մեր ձեռքէն խլել յա-
փշտակել․ և անանկ սիրուն և անվեր-
ջանալի կեանքի մի հասնիլ ուզողը հար-
կաւ այնպիսի ուղիղ ճանապարհ մի պի-
տի բռնէ որ զինք ուղղակի հոն հաս-
ցընէ․ հոն ուր Աստուած պատրաս-
տած է իւր սիրելեաց համար․ հոն,
ուր կեանքն անփորձ և անվերջ է․ հոն,
այն տեղ, դէպ այն բարձրութեան, ուր

նկատել տուաւ միշտ Քրիստոս, և ուր հասնելու ցանկացած ու մահու չափ աշխատած են ամեն վեհ հոգիներ, սուրբ սրտեր և վսեմ մտքեր. վեր-ջապէս անանկ անկասկած շաւիղ մի պիտի բանէ որ կարող լինի առաջնոր-դել և տանել դէպ այն անկարօտ վայ-րը՝ զոր մարմնոյ քողին տակ ծածկուած մարդկային միտքը չէ կարող լիովին ե-րեւակայել. քանզի անոր ոչ համեմա-տութեան չափ մի և ոչ նմանութեան գաղափար մի ունի. չէ կարող պատ-մել լեզուն, քանզի նորա անպատում հանգամանքները բացատրելու համար մարդկային լեզուն խիստ աղքատ է. չէ կարող տեսնել նաև այս զգալի աչ-քերը. քանզի նորա կատարելութիւն-քը նկատելու չափ սրատեսութիւն և կորով չունի. մարմնոյ լսելիքն ևս չէ կարող լսել նորա կատարեալ նկարա-գրութիւնը քանզի տկար է. այլ մի-այն սուրբ եւ առաքինի հոգին իւր ներքին կզգայ կը վայելէ եւ նորա յիշատակը կ՚ըմպէ ու կը բերկրի։ Ահա այսպիսի փառքի մը սահմանուած



է մարդկային ազգը, ուր հասնելու համար հարկաւ ճանապարհ մի կայ. այն, և ահա այն ճանապարհը, այն ճշմարտութիւնը և այն անպատում երջանկութք փառաւորուած կեանքը նոյն ինքն Յիսուս Քրիստոս և քրիս-տոնէութիւնն է. անով միմիայն կա-րող ենք հասնիլ մեզ համար սահման-ուած երանական վախճանին։

Մարդկան ազգի մէկ հատիկ փր-կիչ ու բարերար Յիսուս Քրիստոս իւր կեանքն ու խօսքերը տուաւ օրինակ և առաջնորդ դէպ իրեն դիմելու, ի-րեն հասնելու և զինքը վայելելու։

Արդ ցանկութեան և հեշտասի-րութեան գործքերը տանելի են Յի-սուս Քրիստոսի, նորա վարուց և կեն-սատու խօսքերուն հակառակ են ամեն չարութիւնք։

Նա հեշտասիրութեան գործքին յառաջ խորհուրդն արգիլած է. քան-զի կըսէ, «Ցանկանալու մտօք կնոջ երեսը նայողը շնութիւն կընէ». ու-րիշ տեղ մի ևս. «Սրտէն ելած խոր-հուրդներն են, որ զմարդ կը պղծեն»։

Ու յիրաւի, փուշը փոխանակ երեսէն քաղելով արմատը զօրացնելու, պէտք է արմատէն խլել. անպարկեշտ խորհուրդները կաքող են ամեն ախնածութիւն և պարապ մառայնել, և որ մի չարութիւնը պտղաբերել. ուրեմն խորհրդոց մէջէն խլելու է չարութեան արմատը: Վասն զի "Ներսէն, մարդուն սրտէն չար խորհուրդներ կելլեն, շնութիւն, պոռնկութիւն, գիճութիւն, սպանութիւն, գողութիւն, ագահութիւն, չարութիւն, նենգութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն. այս բոլոր չար բաները ներսէն մարդուն սրտէն կելլեն և անոնք են մարդը պղծողները", (Մրկ.) Տեառն մերոյ այս խօսքերուն հետ եթէ Պօղոսի Ա. Կորնթացւոց Զ. գլուխն ալ աշխատութեամբ և հեզութեամբ կարդաք կը տեսնէք, որ փախչող ցանկասէրներու առջեւ արքայութեան ճանապարհը գոց է, քանզի առաքեալն եւս ցոյց կը տայ. որ այնպիսիներն Աստուծոյ արքայութիւնը չը պիտի ժառանգեն



քանզի անաստուած հեթանոսաց անամանական հաճոյքէն յառաջ եկած պղծութիւններն են: Ուրեմն ցանկութեան կիրքն եւս զմեզ այս կենցաղոյս մէջ թշուառացնելէն յետոյ Աստուծոյ արքայութենէն, նորա ամենաքաղցր տեսութենէն ալ պիտի զրկէ եւ մեր յաւիտենական կենաց երջանկութիւնը մեր ձեռքէն յափշտակելով մշտնջենաւոր թշուառութեան պիտի մատնէ: Ո՜հ, և ի՞նչ յիմարութիւն, բերկրանք և երջանկութիւն վայելելու տենչանօք բանի մը հետեւիլ, և նոյն բանով չարաչար տանջուիլ, կրկին կեանքով ալ թշուառանալ. որչափ հակառակ է մարդկային դատողութեան, և վեհութեան: Մինչդեռ եթէ հոգեւոր բարեաց, ճշմարիտ եղբայրսիրութեան առաքինութեան և սրբութեան հետեւիք, կրկին կենաց մէջ ալ երանելի պիտի լինիք. անոտի և անցաւոր հաճոյք մի զոհելով, ճշմարիտ, հաստատուն եւ անփախճան բարիքն ու բերկրանքը պիտի ստանաք հանդերձեալ կենաց մէջ.

ուր աներկիւղ և անկասկած պիտի վայելէք այն ամէն քաղցրութիւնն ու մեծութիւնը զոր ձեզ համար պատրաստած է ձեր երկնաւոր Հայրը ։

Որչափ ամօթալի է քրիստոնէից համար որ երջանկութիւնը կիրքերու եւ ցանկութեանց մէջ կը որոնեն ։ Ես կամաչեմ, որդեակք իմ, երբ փիլիսոփայի մի սա խօսքերը կը յիշեմ․ « Երջանիկ է, կըսէ, այն մարդուն կեանքը, որուն սիրտը կիրքերէ ազատ, անընկճելի, անդրդուելի և հաստատ է․ երկիւղէ և ցանկութենէ ազատ է․ Իրեն համար մէկ հատիկ բարի՝ համեստութիւնը կը սեպէ, և մէկ հատիկ չար՝ վատթարութիւնը » ։

Մտածեցէ՛ք, որդեակք իմ, դուք քրիստոնեայ զաւակներ, դուք Աստուծոյ որդիներ և Յիսուսի Քրիստոսի ժառանգակից լինելու կանչուած էք․ դուք քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, Աստուծոյ սեփհական ժողովուրդ անուանուած էք և այսօր երջանկութիւնը անհամեստութեան եւ վատթարութեան մէջ կը



փնտռէք․ դուք՝ որ Քրիստոսի սիրովը չարչարանաց և մահուան արդեամբը փրկուած և 'ի սրբութիւն կանչուած էք ու չէ թէ 'ի պղծութիւն․ դո՛ւք ժողովուրդ մի կը կազմէք ուրկէ կը յառաջանան ուսուցիչք, դատաւորք, քահանայք, վարդապետք, եպիսկոպոսունք պատրիարքունք և կաթողիկոսունք, որք առաջնորդ պիտի լինիք կուրաց և լոյս խաւարելոց․ արդ եթէ այժմէն այդպիսի կիրքերով սովորիք և ունակինաք ալ ո՞ր վիճակնուդ մէջ պիտի կարողանաք անոնցմէ ազատիլ եւ ձեր կոչման արժանանալ ։ Դուք այդ մի էք, որ զԱստուած ձեզ Հայր կ'անուանէք և նորա կամքը չէք կատարեր, իսկ նորա կամքն է սրբութիւն․ քանզի Աստուած կ'ասէ․ « Ես սուրբ եմ, պէտք է որ դուք ալ սուրբ լինիք »․ Նոյնպէս առաքեալն եւս կըսէ․ թէ « Աստուծոյ կամքը ձեր սուրբ լինելն է ։

Ուրեմն ամօթ չէ՞ ձեզ որ հեթանոսաց գործքերով ապականուիք․ ինչ տարբերութիւն պիտի լինի ճշմար-

տութեան և ստութեան մէջ, երբ եր-
կուքին հետեւողք ալ մի և նոյն ճա-
նապարհը կընթանան. Ի՞նչ է Աստու-
ծոյ ժողովրդեան և կուռք պաշտօնէից
տարբերութիւնը, միթէ միայն անու-
նըն է. — ո՛չ. քանզի լոկ անունը ոչինչ
օգուտ չունի, եթէ անուան արժանի
գործ չըլլի: Պէտք է ատէք դուք այն
գործերը՝ զորս հեթանոսք կը կատա-
րէին, որոնցմէ Աստուած զզուելով
սրբութե̃ օրէնքներ սահմանեց. պէտք
է դուք եւս զզուիք անոնցմէ և ճըշ-
մարիտ Աստուծոյ սահմանած սրբու-
թեան օրէնքին հետեւիք. քանի որ
ճշմարտին Աստուծոյ կը պատկանիք,
նորա մեծվայելչութեան հակառակ է
այդ ամեն խորհուրդներն ու գործքե-
րը:

Հա՛յ որդիներ, Քրիստոնեա՛յ զա-
ւակներ, չէ՞ք ցանկար այնպիսի ման-
կանց նախանձելի վիճակին, որոց հա-
մար մեր Փրկիչն ասած է. "Թող տը-
ւէք այդ մանուկները որ ինձ գան, ին-
չու որ այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը . . . թէ որ չը դառ-



նաք և այս մանուկներուն պէս չը լի-
նիք, չէք կարող Աստուծոյ արքայու-
թիւնը ժառանգել:

Մանուկ ասելով չէ թէ հասակը՝
ալ անմեղ մանկան սրտի սրբութիւ-
նը, հեզութիւնը, խոնարհութիւնը և
հնազանդութիւնը կը հանդիսացնէ և
անոր նմանիլ կը յորդորէ ամեն հասա-
կի մարդիկ. յայտնի է ուրեմն թէ հա-
րիւր տարեկան մանուկ ալ կարող է
գտնուիլ որ չարութենէ ազատ և սըր-
տին ու միտքը սուրբ լինի: Ահա այն-
պիսիներն ու նոցա բովանդակութիւ-
նըն է Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին,
սուրբ ազգը սեպհական ժողովուրդը,
քահանայութիւնը, թագաւորութիւ-
նը. այնպիսին է Աստուծոյ որդին,
որ կարող է համարձակութեամբ կո-
չել "Հա՛յր մեր, սուրբ եղիցի անուն
քո". անանկներն են որ Յիսուս Քը-
րիստոսի քաղցր երանութեանը կ'ար-
ժանանան. "Երանի սրտով սուրբ ե-
ղողներուն ինչու որ նոքա զԱստուած
պիտի տեսնեն:

Դուք չէ՞ք ցանկար Աստուծոյ որ-

գի և ճշմարիտ եկեղեցւոյ անդամ լի-
նիլ. չէ՞ք ցանկար այն մեծ երանութիւ-
նը վայելել: Պէտք է որ ցանկայ.ք ե-
թէ իմաստուն լինիլ կուզէ.ք. .քանզի
յիմար է այն մարդը, որ չը կամի չը
բաղձայ այս աշխարհիս մէջ մաքուր եւ
մարմնով առողջ լինել. անզգայ է այն՝
որ չուզէ զինքն ստեղծող և իրեն այս-
.քան բարութիւն շնորհող ամենաբա-
րի Աստուածը տեսնել. չարերն եւ
մեղաւորներն են որ Նորա տեսու-
թենէն կը սարսափին ու կը փախչին և
ահա այն ատեն կը մատնուին ամեն
տեսակ չարեաց ու ապականութեանց:

Քաղցր է ինձ հաւատալ որ դուք
կը փափաքիք ձեր կոչումը յարգել.
ուրեմն զգուշութեամբ տեսէք թէ
ինչպէս պէտք է վարուիք որ արժանի
լինիք ձեր այդ սուրբ, փառաւոր եւ
երջանկաւէտ կոչման հասնելու: Չըլ-
լայ որ աշխարհի որ և իցէ մէկ ցան-
կութեամբ զբաղելով մերժէք Աստու-
ծոյ խրախճանը, ուր ամենաքաղցր սի-
րով կը հրաւիրէ զձեզ՝ ձեր երկնաւոր
Հայրը. չըլլայ որ մէկերնիդ, կին ածի,



միւսնիդ, թէ ագարակ գնեցի, այլ.ք,
թէ հինգ զոյգ եզն գնեցի, չեմ կարող
գալ" պատասխանելով ետ մնաք. այ-
սինքն ձեր մարմնոյ սնոտի հաճոյ.քը
կատարելով զրկուիք այն անպատում
թերկրանքէն զոր ժառանգելու կոչուած
էք. ո՛հ և մի գուցէ առանց առաքի-
նութեան և սրբութեան հանդերձի
մտնէք այն քրիստոնէական կրօնի սահ-
մանած քաղցր ու զմայլելի խրախճանը,
ուրկէ դուրս արտաքսուիլը խիստ ա-
մօթալի և առաւել սարսափելի տան-
ջանք է: Քանզի տեսնել այն վսեմու-
թիւնը, նշմարել այն ակնապարար գե-
ղեցկութիւնն ու պայծառութիւնը և
զրկուիլ անկէ և չը կրնալ վայելել զայն
արդարեւ մեծ է քան զամենայն չարիս
և ամենայն տանջանքէ անտանելի է:
Զգոյշ կացէք ուրեմն որդեակ.ք իմ, որ
այսպիսի սոսկալի դժբաղդութեանց չը
հանդիպիք. այլ ձեր երկնաւոր ժառան-
գութիւնն ստանալու արժանաւորիք:

---

## Է.

Ամէն մեղք ու մոլութիւն յիմար ու ապականուած սրտերու քաղցր կերուքն, բայց նոքա իրօք դառն են եւ մահաստու, մանաւանդ ցանկութիւնը կամ վաւաշ զազրագործութիւնը ։ Ձանձը ամենայն ուրախութեամբ կը դիմէ մեղքին վերայ զայն մեծ ախորժանօք վայելելու համար, բայց յանկարծ նոյն իսկ մեղքէն կը բռնուի եւ ահա այն քաղցրութիւնը, որ իրեն հեշտութիւն պիտի լինէր, մահու որոգայթ եղաւ. Նոյնպէս թիթեռը լոյսը վայելել կամելով փետուրները կայրէ եւ ինքը կը կորսուի. այսպէս ալ հեշտասէր մէկն կարծելով որ պիտի երջանկանայ իւր հաճոյից վայելումովը, յիմարաբար մարմինը կը փտեցնէ եւ 'ի մահ կը դիմէ ։ Բայց ինչպէս անմիտ ձանձն ու թիթեռը կ'ըսեն, « Թող մեր հաճոյքը վայելենք եւ թող մեք մեռնինք », նոյնպէս ալ թերեւս վաւաշոտ հեշտասէրը կըսէ, Թող ես իմ ռափանքներս վայելեմ եւ թող մարմինս փտի »։ Բայց ա՛նմիտ, չը



խորհիս որ եթէ մարմինդ փտի, ալ ինչպէս պիտի առնուս հեշտութեանդ ճաշակը. այն ատեն ամէն բան դառն ու անախորժ պիտի գայ, յօժարութեամբ պիտի զզուես ամէն բան, միայն թէ նախկին առողջութիւնդ ձեռք ձգես. բայց շատ անգամ անկարելի պիտի լինի ։

Հեշտասիրին գործը նաեւ անոր համար չար ու ատելի է Աստուծոյ եւ մարդկան, որովհետեւ իւր վայրկենական զուարճութեան համար անձնասպանութիւն, որդեսպանութիւն եւ մարդասպանութիւն միանգամայն կը կատարէ. քանզի ինչպէս յառաջուց ըսինք իւր ծուծը քամելով իւր կեանքը կը մաշէ, եւ այն հիւթը զոր ունայն տեղը կը կորուսանէ, եթէ պահէր եւ ժամանակին ըստ արբութեան օրինաց եւ ըստ իւրում պայմանի գործածէր, իւր նմանը, իւր սիրոյ պտուղը եւ մարմնոյն մասերը պիտի ծնանէր, իրեն մխիթարութիւն պիտի ունենար իւր զաւակները եւ աշխարհի առողջ ու խելացի մարդիկ պիտի ընծայէր. բայց հիմա՞, ոչինչ ։

Կենդանին իւր անձէն կը զոհէ, որ-
պէս զի իւր նմանը ծնի. և այն հեշ-
տութիւնը, որ այդ գործողութեան
մէջ տպաւորուած է, միմիայն մարդ
ծնանելու և մարդկան ազգը յարատև
պահելու համար է, և ոչ թէ մարդկան
ազգը իրենց սկզբան, իրենց առաջին
տարրին մէջ ապականելու համար է:
Հին բանաստեղծներէն մէկը բնական
լուսով կրթուելով զգացած էր հեշ-
տախտութեան կամ գիճութեան ինչ
մեծեղեան չարութիւն լինելը, ուստի
երբ մարդ մի տեսաւ, որ հեշտախտու-
թեամբ և գիճութեամբ այս աղնիւ-
հիւթը կորսնցնելու չարութեան մէջ
ինկած է, ըսաւ, «Ո՛վ դու, մատե-
րովդ կորուսածդ մարդ է»:

Ահա այսչափ վնասակար և այն-
քան մեծ չարութիւն է հեշտախտու-
թեան մոլութիւնը, որ մարդ կը սար-
սափեցնէ. մանաւանդ իւր հնարած
անբնական և աղտեղ ոճիրներովը, որ եր-
կինք ու երկիր վրէժխնդրութեան կը
գրգռէ և ճշմարիտ քրիստոնեայն սոս-
կումով կը պակուցանէ: Ուրեմն որ-



դեանք իմ, կ'աղաչեմ զձեզ Յիսուս
Քրիստոսի սիրով և հայրական քաղց-
րութեք կը խրատեմ ու կը յորդորեմ
որ փախչիք այդ մոլութենէն. այսօր,
այս կեանքիս, այս վայրկենիս երբ կի-
մանաք նորա գէշութիւնը, անմիջապէս
թողուք հեռանաք՝ մահաբեր գազանէ
մի փախչելու պէս:

Անշուշտ ով որ բարեսէր է, պիտի
առսկայ այսուհետեւ հեշտախտութեան
մոլութենէն. ով որ Աստուծոյ որդի
և ճշմարիտ Քրիստոնեայ լինել կուզէ,
պիտի փախչի այս չար մոլութենէն, և
ով որ այս ախտին գերութենէն ազա-
տիլ կ'ուզէ, ով որ չար ընկերաց թե-
լադրութեամբ նորա մէջ ինկած է և
փրկուիլ կ'ուզէ, անշուշտ դարման պէ-
տի բնտռէ, ես ալ թէպէտ իմ խօսքիս
ընթացքին մէջ շատ տեղ ցոյց տուած
եմ դարմանն՝ թէ փախչելն ու հեռա-
նալն է. բայց այսպիսեաց սիրոյն հա-
մար յանձն կ'առնում զատ հատուած-
ներով ցոյց տալ թէ ինչպէս կարելի է
փախչիլ և հեռանալ մոլութիւններէ:

Այն հնարքներն ու միջոցները, ո-

րովք դուք թէ ձեր կիրքերէն յառաջացած վնասները պիտի կարողանաք դարմանել և թէ ձեր կրից յաղթել, հետեւեալներն են. 1. Երկիւղ յԱստուծոյ, աղօթք եւ պահք. 2. Կրից հետեւանքը, մահը և վերջին դատաստանը միշտ յիշել. 3. Կիրքերը գրգռող առիթներէ, տեսիլներէ եւ խօսքերէ զգուշանալ, փախչիլ և հեռանալ, և խորհուրդը զբաղել. 4. Վատ ընկերակցութիւններէ, առանձնութիւններէ, իրարու հետ անհամեստ համարձակութիւններէ 'ի սպառ զգուշանալ, պարկեշտութեամբ և պատուով վարուիլ. 5. Շարունակ անձը օգտակար աշխատանաց տալ, միշտ զբաղիլ և դատարկութենէ սոսկալ:

1. ԵՐԿԻՒՂ ՅԱՍՏՈՒԾՈՅ. Մեղքէ, մոլութենէ և չար սովորութենէ ետ կենալու և ազատ մնալու մէկ հատիկ առաջին ու գլխաւոր միջոցն է Աստուծոյ երկիւղը. չար գործողը ոչ երկիւղածութիւն ունի և ոչ Աստուածսիրութիւն: Աստուած է գերագոյն բարի; Հայր բարեգութ, նախախնամող



և բարերար, որ միմիայն հաճութիւն ունի սիրոյ, արդարութեան և բարութեան մէջ. ուստի կը կամի որ մեք ալ սիրով և յօժարութեամբ հետեւինք իրեն. ինչպէս որ նա զմեզ կը սիրէ, մեք ևս սիրեմք զինքը. և սիրել ուրիշ կերպով չը լինիր բայց եթէ երկիւղածութբ նորա կամաց հնազանդելով, վախնալ որ իրեն կենդանատու օրինաց և ամենաբարի կամաց ներհակ չը գործեմք: Այսպիսի երկիւղածութեամբ մեք կը ճանաչեմք Աստուծոյ ամենագիտութիւնը, որ մեր սրտի գաղտնիքն ալ գիտէ, և կը զգամք նորա ամեն տեղ լինելը, որ ոչ խորշ մի և ոչ խաւարին խորափիտ մի նորա ներկայութենէն թաքուր չէ, և ամենեւին գաղտնեաց և մթութեան մէջ գործուած ու մտածուած բան մի չը կայ, որ նորա ամենատես աչքը զննած չը լինի. կը ճանչնամք որ նորա աչաց սրբութիւնը կ'ատէ մարդկան պիղծ գործքերը եւ կը զզուի անոնցմէ:

Արդ երկիւղած մարդը գիտնալով Աստուծոյ այս կատարելութիւնները

ամօթխածութիւն զինքը պարկեշտութեն ու որբութեան մէջ կը կրթէ որ Աստուծոյ ներկայութենէն պատկառելու և ամօթահար լինելու խորհուրդ մի չունենայ և վատ գործ մի չընէ. այնպէս կը պատրաստէ իւր անձը որ միշտ պարզ երես, ուրախ սրտով համարձակի Աստուծոյ ներկայանալ եւ առանց սարսափի եւ ամօթոյ նորա հայրական գիրկը դիմել: Վերջապէս Աստուծոյ երկիւղը կը հասկանամք այն որդիական անկեղծ ակնածութիւնը, որ զաւակ մի իւր բարի և գթոտ հայրը յարգելու համար բնականապէս կը զգայ՝ նորա բարութենէն և գթութենէն թելադրուած. և ամէն պարագայի մէջ իւր բոլոր շարժումն ու գործքերը կ'ուղղէ դէպ 'ի Հօրը կամաց հաճոյանելու: Չը խորհիր, չը խօսիր և չը գործեր այնպիսի բան, որ Հայրը զայրացնէ և նորա դժգոհութեան առիթ տայ: Այս է սիրոյ հանգամանքը եւ այս է Աստուծոյ երկիւղ ըսուածը, որ սուրբ և ազնուական զգացում մի է, որ որդիական է և ոչ ծառայական, և



զոր Իմաստունը Սկիզբն իմաստութեան կը համարի:

Եւ արդարեւ առանկ սուրբ և ազնուական երկիւղ մի իւր սրտին մէջ կրող անձը չը մեղանչեր, և ահա անմեղութիւնն է իմաստութիւն որ առ Աստուած կը տանի և յաւիտենական երանութիւն կը պարգեւէ: Ասանկ սիրալիր երկիւղիւ Աստուծոյ ծառայողը անշուշտ նորա խօսքերը սիրով պահէ և նորա հրամանները սիրով կատարէ. և ահա Աստուծոյ խօսքերն են որ ըզմեզ կարգելուն մեղանչելէ, չափ կը դնեն մեր կիրքերուն մեր խաւարած ճանապարհները կը շտկեն և լոյս կուտան մեր ոտքերուն մեր կենաց ճանապարհին վերայ:

Դուք ալ ուրեմն, ով որդեակք իմ, Աստուծոյ խօսքերուն և նորա սուրբ օրինացը մէջ երկիւղածութեամբ եւ հնազանդութեամբ կրթուեցէք եւ Մարգարէին հետ շարունակ երգեցէք:

« Քու խօսքերդ իմ սրտիս մէջ միշտ պահեցի, որ քեզի դէմ չը մեղանչեմ:

Քու վկայութիւններուդ ցոյց տը-

ւած ճանապարհովը պիտի զուարճանամ, ամէն տեսակ մեծութեան մէջ զուարճանալու պէս ։

Ամէն չար ճանապարհէ ետ կեցայ, որպէս զի քու խօսքերդ պահեմ ։

Քու դատաւճիռներէդ իմանալով և անանցման օրէնգէտ լինելով բոլոր չարութեան ճանապարհները ատեցի ։

Ո՜, քու խօսքերդ որչափ անոյշ է իմ քիմքիս . մեղրէն շա՜տ աւելի անոյշ է իմ բերնիս ։

Երիտասարդն ինչո՞վ պիտի շտկէ իր ճամբան, բայց միայն քու խօսքերդ պահելով ։

Տէր, քու խօսքերդ ճրագ են իմ ոտքերուս և լոյս կուտան իմ ճանապարհիս ։

Ահա այս խօսքերէն և ասոնց պէս բազմաթիւ վկայութեամբ և փորձով խակ համոզուած եմք որ մեր կեանքն ու փրկութիւնը Աստուծոյ խօսքն է, որոյ մէջ կը կրթուի երկիւղած մարդը . դուք ևս այս խօսքերուն հոգին գտնալով Աստուծոյ պատուիրանաց մէջ կրթուեցէք միշտ, զանոնք գործադրելու համար քննեցէք և ձեր խորհրդածութեան նիւթ ըրէք և տեսէք թէ ձեզ ինչ կը սովրեցնեն ։



Առաքեալը կ՚ըսէ . «Ամէն մէկը կը փորձուի իր ցանկութիւններէն մղուած և խաբուած . այնուհետեւ ցանկութիւնը յղանալով մեղք կը ծընանի . . . . ։ Ուստի ամէն աղտեղութեան և չարութեան մէջ յառաջանալը մէկ դի թողէք, ձեր մէջ սերմանուած խօսքը հեզութեամբ ընդունեցէք որ կրնայ փրկել ձեր հոգիները . բայց խօսքը կատարողներ եղէք և չէ թէ միայն լսողներ . ( Յակոբ ։

«Աստուած իր խօսքը ղրկեց և բըժշկեց զանոնք ու փրկեց իրենց ապականութենէն » ։

Մեք, որդեակք իմ, եթէ երկիւղածութիւն ունենամք, եթէ զԱստուած սիրեմք, անշուշտ Աստուծոյ խօսքերը սորվելու փոյթ կ՚ունենամք, և կը պահեմք զանոնք ամենայն երկիւղածութեամբ որ զմեզ կը փրկեն ամէն տեսակ մեղքերէ և չարութենէ ։ Եթէ մենք Աստուծոյ խօսքերը չըլսենք չը

պահինք ու չը կատարենք, աստուածապաշտ և ճշմարիտ հաւատացեալ չեմք սեպուիր, վասն զի սիրած չեմք ըլլիր, և ահա այն ատենն է որ մենք կ'անկանիմք ամեն տեսակ մոլութեանց և մեղաց մէջ: Աստուծոյ կը հաւատամ ըսելը միայն հերիք չէ. եթէ ճշմարիտ է հաւատքդ պէտք է նորա կամքը կատարես իւր հրամանները պահելով՝ որք կեանք ու երջանկութիւն կուտան:

Սիրելի որդեակք իմ, չէ՞ք փափաքիր Աստուծոյ որդի և Յիսուսի Քրիստոսի եղբայր անուանիլ. սանկ մեծ պատուոյ և փառաց ո՞վ չը ցանկար, սանկ չնաշխարհիկ պատիւ ո՞վ կրնայ չորհել. միթէ աշխարհի բոլոր փառքերը, պատիւներն ու իշխանութիւնքը Աստուծոյ որդի և Յիսուսի եղբայր ըլլալու ամենաբարձր փառաց կրնա՞ն հաւասարիլ, քաւ լիցի: Այլ ափսոս, որ մարդիկ աշխարհի փուճ և անցաւոր փառքեր առնալու համար ամեն դժուարութիւն կը քաշեն. շատ անգամ պատկառանքի հակառակ նը-



ւաստ եւ անարգ միջոցներու ալ կը դիմեն. բայց այս մեծ և անկշռելի փառքն առնալու համար թեթեւ ճիգ մի չեն ըներ. Յիսուսի Քրիստոսի եղբայր, քոյր և մայր ըլլալու համար փոքրիկ աշխատութիւն, քիչ մի նեղութիւն քաշել չեն կամիր: — Բայց մարդ ի՞նչպէս կարող է որդեօք այս վսեմ պատուոյն և այս մեծ փառաց արժանանալ: — Այս հարցման պատասխանը նոյն իսկ մեր Տիրոջմէն պէտք է ընդունիմք, որ կ'ըսէ. “ Ահա իմ մայրս ու եղբայրներս սոքա են, որ կեցած Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը կատարեն. որովհետեւ Աստուծոյ կամքը կատարողն է իմ եղբայրս ալ, քոյրս ալ մայրս ալ ”: Ահա պարզ և մեկնութեան կարօտ չեղող խօսք մի, որ բացարձակապէս կը վճռէ թէ իւր խօսքերը պահողն է միայն իրեն հաճոյ: Կը տեսնէ՞ք, ահաւասիկ ձեր ուրիշ բաղձանքները կատարելու չափ դըժուարութիւն չը կայ այս ամենամեծ փառաց հասնելու համար, միայն Աստուծոյ խօսքերը լսելու, նոցա մէջ

կրթուելու և զանոնք կատարելու է․ որուն փոխձանը եւ պտուղը այնքան քաղցր, այնքան բերկրական և երջանկաւէտ է որ ամեն դառնութիւն կը քաղցրացնէ եւ դժուարութիւն կը թեթեւցնէ․ փորձողը գիտէ, որ Նորա խօսքերը կատարելը դժուար չէ, ինչպէս Սուրբ Յովհաննէս ալ կ'ըսէ թէ "Նորա պատուէրները ծանր բաներ չեն։

Ամենակարողն ու ամենակատարն Աստուած մարդուն այնպիսի կատարելութիւն և զօրութիւն տուած է, որ շատ դժուարին բան կարող է ընել, օգնութիւն ալ ստանալով Նորոգիչ Սուրբ Հոգիէն, հերիք է որ յօժարութեամբ կամի։ Բայց Նորա անձնիշխան կարողութեան ու զօրութեան փառքն ու պարծանքը այն տեղն է, որ իւր անարգ, անօգուտ և վնասակար յօժարութեան դէմ զինելով և մարտնչելով անոնց յաղթէ, չարէն հեռանայ և բարւոյն հետեւի․ բուն յաղթանակն և պսակի արժանաւորութիւնն ալ այն տեղ է։ Առանց պատերազմի յաղ-



թութիւն չը կայ, և առանց յաղթութեան փառաց յաղթանակին ընդունիլ անկարելի է։ Մենք ամեն վայրկեան մեր կիրքերուն եւ յօժարութեանց դէմ պատերազմ ունինք, անոնց պէտք է յաղթենք ու չէ թէ յաղթուինք․ մարմինը՝ և ինչ որ մարմնոյն է, հակառակ են Հոգւոյն․ եթէ մեք մեր հոգին առաքինութեամբ եւ բարեպաշտութեամբ հրահանգած և զօրացուցած չը լինինք, մեր երկրաքարշ մարմինը կ'առնու զայն և իւր հաճոյքը կը խոնարհեցնէ։—Ի՞նչ է մարմնոյ հաճոյքը, մեղք և մոլութիւն, որ թշուառութիւն է Հոգւոյն․ և որպէս զի հոգին նորա մէջ չ'ինկանի, պէտք է 'ի մանկութենէ աստուածպաշտութեան և աստուածօրինութեան մէջ կրթուիք, Աստուծոյ սուրբ երկիւղովը և խօսքերովը սնանիք ու աճիք․ փոքրկութենէ ջանաք որ բնաւ մոլութիւն մի չը գործէք․ պէտք է որ դուք ինչ և իցէ անվայել բան մի գործելէ առաջ սաստիկ երկիւղ և ամօթ կրէք․ ամօթխածութիւն մեծ զէնք մի է չարութեան դէմ, երբ

մարդ զայն գործելէ յառաջ կամաչէ, և այս ամօթխածութեամբ կը փախչի և կը զգուշանայ մեղք ու չարիք գործելէ ։

Աստուած ամենատես և ամենագէտ է․ ամէն ժամանակ ամէն տեղ ամէն մթութեան խորշերուն մէջ անդամանոր ներկութենէն պէտք է պատկառինք և իր հրամաններուն հակառակ բնաւ գործ մի չընենք ։

Որդեակնե՛րս, եթէ զձեզ խաբելով մեղքի յօժարեցնեն, արթուն կեցէ՛ք, մի՛ խաբուիք․ սոսկացէ՛ք ամէն տեսակ չարութենէ և զանոնք ձեզ սորվեցնողներէն հեռացէք ։ Նոքա, ինչ ալ լինին, սատանայի արբանեակներն են․ Նոքա Աստուծոյ հակառակ են ։ Աստուած ձեր սրտին գաղտնիքներն ալ գիտէ, Նա ձեր խորհուրդներն ալ պիտի դատէ, ուրեմն Նորա ամենատես աչքէն և ամենագէտ իմաստութեան առջեւէն ո՞ւր պիտի կրնաք փախչիլ, ո՞ր ծածուկ տեղ պիտի կրնաք պահուիլ որ Նա զձեզ չը տեսնէ ուրեմն ինչո՞ւ կ՚առանձնանաք . . . ։



Պէտք է գիտնաք որ ամէն դատարկ խօսքի համար ալ հաշիւ պիտի պահանջուի, հապա ո՞ւր մնաց այն գործքերը որ յայտնապէս Աստուծոյ սրբութեանն ու բարութեան ներհակ են, ինչպէս են մարմնոյ ցանկութեան կամ հեշտախտութեան գործքերը ։

Այս ամէնը գիտնալով՝ հիմակուանէ, ձեր մանկութեան օրէն, խիստ փոքր հասակէն սկսեցէք Աստուծոյ երկիւղին մէջ կրթուիլ․ անմեղ, սուրբ և աստուածային խորհուրդներով զբաղիլ ։ Նորա օրէնքներն ու պատուէրները երկիւղածութեամբ ձեր ամէն խորհրդոց, գործոց ու շարժմանց կանոն ըրէք․ այնպէս որ անոնց հակառակ եղածը թող ձեզ ալ հակառակ լինի․ եւ այս ամէնուն մէջ պէտք է այժմէն կրթուիք․ ապա թէ ոչ վերջէն դժուար կը լինի և մեծ օգուտ մի չընէր․ “Յիշէ ո՛վ մարդ, քու Արարիչդ քու մանկութեան օրերուդ մէջ„․ կըսէ Իմաստունը․ վասն զի երբ այն գեղեցիկ օրերը, այն սիրուն ու զուարթալից օրերը առանց Աստուծոյ կամքին անցնէք

վերջին թշուառ օրերուդ մէջ, ծերացած ու տկարացած օրերնուդ մէջ թէպէտ յիշէք, բայց նորա կամքը կատարելու կարող չըլլալով գուցէ օգուտ չունենաք, վասն զի եթէ այն ատեն մանկութեան գործերէ դադրած էք, ձեր կամօք չէ. արդէն զգայարանքներնիդ լմընին հոգնած, տկարացած և դադրած կը լինին և այն ատեն ըրածնիդ գուցէ առաքինութիւն չը սեպուի. այլ երբ մանկութեան օրերնուդ մէջ յօժարութեամբ եւ երկիւղածութեամբ հեռանալով չարութիւններէ և այնպէս մեծնալով ծերութեան կը հասնիք, յայնժամ ձեր բոլոր գործքերը կամելին կը համարուին և աստուածահաճոյ են:

Սիրուն որդեակք իմ, եթէ դուք Աստուծոյ օրէնքներն ու կեանք պարգեւող խօսքերը այնչափ սիրէք որ այն ըլլայ ձեր ամենօրեայ խորհրդածութիւնը, եթէ Աստուծոյ պատուիրանաց մէջ կրթուիք, եթէ Աստուծոյ խօսքերը լսելու և կատարելու քաղցրութեան համն առնուք. եթէ որդի-



ական սիրով ակնածէք անկէ եւ նորա կամքին հակառակ չընելու երկիւղածութիւն կրէք, այն ատեն երանութիւն ու օրհնութիւն պիտի ժառանգէք: «Երանի այն մարդուն որ Տիրոջմէն կը վախնայ. այնպիսին նորա պատուիրանները շատ կը սիրէ: Այնպիսւոյն զաւակը երկրի վրայ ուժեղ կ'ըլլայ և ուղիղ ազգերու մէջ կ'օրհնուի. նորա տան մէջ փառք ու մեծութիւն կայ եւ անոր արդարութիւնը յաւիտեանս յաւիտենից կը մնայ»:

Մեղաց դէմ մեծ զէնք է երկիւղածութիւնը, որով մեղքի բոլոր հրապուրանքները բացէ 'ի բաց կը մերժէք:

Արդ եթէ դուք Աստուծոյ հայրական սէրը ճանչնաք և որդիական սիրով անոր յարիք, շատ անգամ քաղցր խանդաղատանօք իրեն դիմելու կարեւորութիւննիդ պիտի զգաք, թէ շընորհակալ լինելու և թէ իր գթութիւնը շարունակ խնդրելու. և ահա այս է Աղօթք:

ԱՂՕԹՔԸ աստուածպաշտութեան եւ երկիւղածութեան հետ մեծ կա-

պակսութիւն ունի. և մեծ զէնք է մեղաց փորձութեան դէմ. չը մեղանչելու և մոլութիւններէ ազատելու համար աղօթքը խիստ կարեւոր է. անոր համար էր որ Յիսուս պատուիրեց թէ. «Պէտք է ամեն ժամանակ աղօթքի կենալ ու չը ձանձրանալ, ամեն ատեն աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չանկանիք»:

Բայց պիտի ըսէք թերեւս որ, «Եթէ ամեն ատեն աղօթք ընենք, երբ գործելու է». այսպէս ասողները տակաւին աղօթքին բուն նշանակութիւնը չեն գիտեր. հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագութեան ինչ ըլլալը չեն հասկցած. այնպիսիներն լոկ արտաքին ձեւերն և սովորական եղանակները միայն աղօթք կը համարին, որով և չեն հասկանար յամենայնի ժամ աղօթք ըլլալու պատուէրին իմաստը, ուստի և անոր օգուտը վայելելէ միշտ զուրկ կը մնան:

Մեք ամեն սովորական աղօթից ժամանակներէն զատ ամեն ժամ կարող եմք աղօթել, առանց մեր ուրիշ օգտակար



աշխատութեանց արգելք ըլլալու, վասն զի աղօթքը սրտի եւ մտքի առ Աստուած վերացումն է: Մեր սիրտն ու միտքը երբ լցուած է երախտագիտութեամբ, շնորհակալութեամբ, զղջմամբ և առ Աստուած կատարեալ հնազանդութեամբ, երբ կըրթուած է մեր հոգին նորա կենդանատու խօսքերուն եւ օրէնքներուն մէջ, այն ատեն շարունակ նորա վերայ կը լինի մեր խորհրդածութիւնը եւ առ նա կ'ուղղուին մեր սրտի զգացումները. մեր գործքերն ու խօսքերը այնպէս կը կարգադրեմք որ ոչ երբէք Աստուծոյ կամաց ու հրամանին ներհակ լինի, և այն ատեն շարունակ մեր Աստուծմէ կախումն ունենալը ճանչնալով նորա ամեն տեղ ներկայ ըլլալը զգալով և նորա նախախնամական գործերը եւ շընորհքները գիտակցութեամբ վայելելով միշտ օրհնութիւն, գոհութիւն և շընորհակալութիւն կը ելնայ մեր մտքէն եւ երախտագիտութեան, սիրոյ եւ հաւատարմութեան զգացումներ կը թռչին մեր սրտէն եւ հաճոյական

քաղցր նուէրներու պէս ընդունելի կը լինին Բարձրելոյն, որ այսպիսի երկրպագուներ կը խնդրէ։

Ո՜հ, որչա՜փ զմայլելի, փառաւոր և նախանձելի է այսպիսի աղօթաւորի մը խոնարհ ու պարկեշտ տեսքը. երբ ինքզին իր մէջ գումարուած, ներքին ու արտաքին զգայարանքներն ամփոփած, սրտով ու մտքով, կամքով և յօժարութեամբ խոնարհած իւր Աստուծոյն հետ կը խօսակցի, սիրտը անոր կը բանայ, բոլոր զգացումներն անոր առջեւ կը թափէ, և իւր կամքը նորա կամաց տակ կը խոնարհեցնէ։ Այն խոնարհութեան մէջ նա խիստ բարձր է, մարմնով երկրի վրայ, բայց հոգւով վերացած է այս զգալի աշխարհէն մեր անհամեմատ բարձրութեամբ. Թըռած, սլացած է նա Անմահին փառաց աթոռին առջեւ, հոն՝ այն մեծ վայելչութեան մէջ զմայլած է անսպառ բերկրութեամբ, որոյ նմանը ոչ ոք չէ զգացած կենցաղոյս մէջ։ Ուստի երկրի վրայ չը կայ երբէք ուրիշ ցանկալի վիճակ մը, քան հոգւով և ճշմարտու-



թեամբ աղօթողին վիճակը, և ասանկ աղօթել գիտցողք կարող են իրենց աղօթից պատասխանն ընդունիլ, ինչպէս ընդունեցին արդարն Զաքարիա և երկիւղածն Կոռնելիոս և ուրիշ շատերն։

Ասանկ աղօթողներն իրենց հոգւոյն ալ կ՚աշխատին, կըզգուշանան, կը փախչին մեղքերու ախտներէ և կը գործադրեն իրենց բոլոր կարողութիւններն պատերազմելու մեղքի փորձութեան դէմ. ասանկ երկիւղածութք, սրբութեամբ և անմեղութեամբ աղօթողք Աստուածային շնորհաց և օգնութեան կ՚արժանանան, ուստի և զատ կը մնան ՚ի մեղաց։ Երանի՜ անոր որ այս շնորհաց և օգնութեան կ՚արժանանայ, այնպիսին երկրի վրայ կանու երկնից արքայութեան մէջ վայելէ երջանկութեան քաղցրութիւնը և այժմէն կըզգայ իւր անձին մէջ այն փառաւորութիւնն ու խաղաղութիւնը, զոր Աստուած սահմանած է իրեն հնազանդողներուն համար։

---

Ը.

Երկիւղածութեամբ և աստուած-պաշտութբ կրթուող ու զարգացող անձը օգնութիւն կը ստանայ և ան-ընկճելի արիութիւն կունենայ ախտից և մոլութեանց դէմ պատերազմելու և յաղթելու . կարող կը լինի անձը պահպանել բոլոր այն վտանգներէն ու փորձութիւններէն , որք դէպ 'ի մեղք կ'առաջնորդեն . կը ժուժկալէ կը համբերէ ամէն կրից շարժու-թեանց դէմ եւ կը սանձէ դէպ 'ի մեղք յօժարեցնող բոլոր զգայարանք-ները , որով դիւրութեամբ կը խոր-տակէ իւր առջեւ լարուած ամէն տե-սակ մեղաց որոգայթները որք իւր ոտքին տակ կը սպասեն հրապուրիչ տեսքով մը , զինքը թշուառութեան մէջ ձգելու . և ահա այս ամէն զգուշու-թիւնները կ'իմանանք պահք կամ պա-հեցողութիւն բառին տակ : Աստուած-պաշտութեան հետ անբաժան կերպով կապուած են Աղօթքն ու Պահքը :

ՊԱՀՔԸ , իւր բոլորական նշանա-



կութեամբ կը հասկանանք , քաջու-թեամբ պահպանել անձը մեղքի տանող բոլոր ճնարքներու դէմ . Պահքը այս նշանակութեամբ ըմբռնողը չ'արհա-մարհեր երբեք ժուժկալութեան նը-պաստող ամէն կարգադրութիւն , օ-րէնք եւ պատուէր . այլ զգուշու-թեամբ , հաւատարմութեամբ և եր-կիւղածութեամբ իւր անձը կը կրթէ նոցա մէջ եւ անոնցմէ ամէնէն անօ-գուտ համարածին մէջ ալ մեծամեծ օգուտներ կը տեսնէ՝ և բարի արդիւն-քը կը վայելէ :

Պահքը ամենակարեւոր միջոց մի է մեղքերէ , մանաւանդ ցանկութեան կիրքէն և վավաշոտ պղծութեան ախտէ ու մահառիթ ախտէն ազատ մնալու համար . վասն զի եթէ չարութեան հակամիտ զգայարանաց և ներքին զգացմանց ձեռքովը կը լինի . ուրեմն մեղքէ ազատ մնալու համար անհրա-ժեշտ հարկ է զգայարանքներն ու ըզ-գացմունքը սանձել ամէն արտաքնա-ներու դէմ և զսպել այն ամէն բա-ներէն , որք կը շարժեն և կը գրգռեն

զինանք , կը մոլորեցնեն միտքը , կը խանգարեն դատողութիւնը և կը տկարացնեն ու կը մեղկացնեն հոգին և դիւրութեամբ կը ձգեն փորձութեան մէջ ։

Պահեցողութեան կրթութեան առաջին և սովորական տեսակն է կերակրոյ պահքը , որ մարզիչ և կրթիչ պիտի լինի ուրիշ պահեցողութեանց մէջ ալ յառաջ գնալու . նշան և թելադիր պէտք է լինի ամեն տեսակ ժուժկալութեան , որպէս զի օգտակար լինի ։ Բայց թէ ինչո՞ւ այս արդիւնքը չունի այժմ պահքը , պատճառն այն է , որ շատերը պահոց իմաստը չեն ըմբռնած . շատերու համար պահքը լոկ սովորութիւն է . շատերու համար կեղծաւորութեան պատրուակ է , որով այլոց առջեւ պահեցող կ՚երեւին և ամեն տեսակ անժուժկալութիւն ՚ի ծածուկ կը գործադրեն . շատերն ալ պահքը խախտ կատարելով իրաւունք կը համարին իրենց ամեն կամքերնին կատարել և պահքով միայն արդարանալ ։ Անտեղի թիւր համոզմունք է որ կերակրոյ պահեցողութիւնը իւր մեծամեծ պտուղները չ՚արտադրէր . զոր լաւ հասկնալու համար հետեւեալ խօսքերուս լաւ ուշադրութիւն դարձուցէք ։



Պահքը Աստուած ամենաբարին հաստատած է մարդուս հոգեւոր եւ մարմնաւոր օգտին համար . ( չը մոռնամք ըսել որ բուն պահքը ծոմ կը հասկնամք), ինչպէս բաց ՚ի Հին Կտակարանի բազմաթիւ օրինակներէն , նոյն ինքն Յիսուս Քրիստոս ալ իւր օրինակովը ցոյց տուաւ և քարոզեց որ այսպիսի կիրքերու դէմ Պահքը և Աղօթքը մեծ զէնք են ։ Բայց Եկեղեցին իւր որդւոց դիւրութեան և շատ մը անտեղութեանց և վնասուց , որք մարդկան չարութեամբը մտած էին , առաջքն առնելու համար կանոնական պահոց օրերը սահմանեց , որ հաց ու աղցանով առանց համեմի և հանդերձանքներու եղած ուտելիքներով եւ քիչ ուտելով բաւականանան ։ Այս եւս պէտք էր լինէր ծոմի մօտ եղանակաւ մը , այսինքն քիչ ուտելով . իսկ ծոմը ազատ թողուցած է իւ-

րաքանչիւրին ջերմեռանդութեանն ու ազատ կամքին որ ուզողը կարող է ծոմ պահել առանց մոռնալու իւր միւս զգայարանաց պահեցողութեան պարտքը. որով ամեն Քրիստոնեայ կը պարտաւորի ոչ միայն պահոց օրերը զգոյշ և սուրբ մնալ, այլ նոյն օրերը իւր անձը այնպէս կրթելով և յիշելով որ ինքը միշտ սուրբ մնալու պարտաւորութիւն ունի, ուրիշ օրերն ալ շարունակ զգաստ, աշխոյժ և ժուժկալ մնալու է պահելով բոլոր զգայարանքները և սիրտն ու միտքը ամեն կերպ մեղանչումէ։

Բայց որովհետեւ մարդիկ ամեն պարագայի մէջ գիտեն բարի բան մը թիւրել եւ իրենց կամաց յարմարցնել, նոյնպէս պահոց՝ այս սրբութեան օրէնքին նպատակն ալ 'ի սպառ փոխած և իրենց ախորժակին ու կամաց յօժարութեանն են յարմարցուցած. որով ոչ թէ կ'օգտուին, այլ յաւէտ կը վնասուին։

Օրինաւոր պահքը կամ ծոմը խիստ մեծ օգտակարութիւններ ունի. եթէ



դուք, որդեակք իմ, ձեր փոքրիկ հասակէն սկսիք անձերնիդ կրթել սակաւակերութեան, ժուժկալութեան և պահեցողութեան մէջ, ձեր մարմինը հանդարտ կը սնանի, բնական կերպով կ'աճի, ներքին հիւթերու առաւելազանցութիւնը կը չափաւորի եւ չը գրգռեր զձեզ, չը վրդովեր ձեր ներքին հանդարտութիւնը և դուք հանգիստ կը մնաք սրտով, արթուն՝ մտքով, սուրբ՝ բոլոր զգայարանքներով և առողջ՝ երկար կեանքով։ Հեղինակ մի ըսած է, "Բանջարով կերակրուողը՝ մարմնով առողջ է և՛ առանց ցաւի կրնայ ապրիլ"։ Յովսէպոս իմաստուն պատմիչն ալ երկայն ապրիլը՝ կերակրոց պարկեշտութիւնը եւ կարգադրեալ կենցաղավարութիւնը կը սեպէ։ Ուրիշ իմաստուն հեղինակ մի եւս այսպէս կ'ըսէ. "Պինդ պահեցողութենէն յառաջ եկած մահը դիւրին է, իսկ ծանր ու դժուարամարս կերակուրներէ եղածը դժնդակ է"։ Սուրբն Յովհան ոսկեբերան աւելի բացայայտ խօսելով կ'ըսէ. "Որովհետեւ մեր մարմնոյն մէջ

ալ (կերակրոց) շատութենէն խառ-
նուածքի անհաւասարութիւն կը պա-
տահի, և երբ հիւթերը իրենց չափը
կորսնցնելով անչափութեան հասնին,
այն ատեն շատ ցաւեր եւ չարաչար
մահ յառաջ կուգայ, զոր կարող է մէ-
կը հոգւին վերայ ալ պատահած տես-
նել »:

Եւ միթէ տար այդպէս ըլլալը բը-
նութիւնը մեզ չը՞ սորվեցներ. չէ՞ որ
երբ մեր ստամոքսը ծանր կերակուրով
կը լեցուի և այն տեղ կ՚ապականի, այն
ատեն դուրս տալու յօժարութիւն մի
կը զգանք. միթէ չէ՞նք տեսներ որ ու-
տել խմելու ետեւէ եղող շուայտ մար-
դիկ ի՞նչ ողորմելի կեանք և ի՞նչ ազե-
տալի վախճան կ՚ունենան: Կենդանի-
ներն անգամ զմեզ կը յանդիմանեն.
քանզի նոքա ալ երբեմն ծոմապահու-
թիւն կ՚ընեն և իրենց ներսիդին գոյա-
ցած հիւանդութիւնը անով կը վա-
նեն:

Կերակրոց պարկեշտութիւնը եւ
չափաւորութիւնը ինքնին բնութեան
օժանդակ կը լինի, արիւնը կը քաղց-



ցընէ եւ ախտածարծ հիւթերը
դուրս կը վանէ զանազան ձևնապար-
հաւ. բայց ինչպէս վերն ըսինք, այս
օգուտները չէ կարող տալ այժմեան
մարդկան գործածած պահքը, քանզի
այն պահք չէ, այլ աւելի գրգռիչ, ա-
պականարար և վնասող է մարդկային
կենաց: Քանզի ի՞նչ օգուտ է պահք
անուանել այն զեղծումը որ ուրիշ կե-
րակուրներէ հրաժարելով, անոնց տեղ
աւելի ջերմացուցիչ և գրգռիչ իւղե-
րով, պղպեղներով և զանազան տեսակ
համեմներով կերակուրներ կուտենք,
որք ախորժակ կը գրգռեն եւ չափա-
զանց ուտելու առիթ կը լինին. արիւ-
նը եւ կենդանական ոգիքը գրգռելով
կը շարժեն մարդու ցանկական կիրքը,
կը յօժարեցնեն մեղաց եւ առիթ
կուտան զանազան հիւանդութեանց:

Ամեն մարդ գիտէ թէ խոհարա-
ծութեան արուեստը, որ մարդուս
կենաց շատ վնասներ բերաւ, ամեն
ձիգ թափած է ուտեաց օրերէն աւե-
լի համեղ կերակուրներ պատրաստել
պահոց օրերը. ուստի այժմեան պահ-

քերը աւելի կերակրոց տեսակի փոփոխութիւն է, քան թէ պահք. Եկեղեցին այսպէս չէ սահմանած, մարդկային կամահաճութիւնը հնարած է այս պահքը: Մեր մեղքերովը ակարացուցած ենք մեր անձը, մեր կամօք հնարած եմք վնասակար կերակուրներ և կ'ընեմք պահոց օրէնքը կը պախարակեմք իբր վնասակար. կ'անարգենք այս փրկարար ու կենդանատու օրէնքը և զայն լուծելով հաճոյք կը զգամք, առանց յիշելու որ պատուիրանազանցութիւն է բռածնիս. և երբ Եկեղեցւոյ մէկ պատուէրը առանց խղճելու կը լուծենք, այնուհետեւ արգելք չը մնար մեզ ուրիշ պատուէրներն ալ լուծելու. հաւատարմութեան դէմ մէկ յանցանքն ալ հերիք է անհաւատարիմ ընելու զմեզ, մանաւանդ ըս-պասուած օգուտն ալ չենք առնար, անժուժկալութեամբ կամ ղեղծումով, ինչպէս է այժմեան պահքը: Վասն զի ո՛ւր դնենք այն ախտարծարծ նիւթերը որովք այժմեան պահոց կերակուրները կը պատրաստուին, որ ոչ



մարմնոյ եւ ոչ հոգւոյ օգտակար են. այլ պահքը օգտակար ըլլալու համար պէտք է հրաժարիլ այն ամէն կերակուրներէն ու ըմպելիքներէն որք սաստիկ կը զօրացնեն, չափազանց կը սնուցանեն եւ արագ արագ կ'աճեցնեն, և ըստ նմին համեմատութեան կեանքը կը կարճացնեն. ինչպէս են միսը, ձուկերը, համեմները, գինին, օղին և ուրիշ պարարտ ուտելիքներ և ոգելից ըմպելիք:

Ասոնք իրենց ջերմացուցիչ, գրգռիչ եւ չափազանց սնուցիչ զօրութեամբ մարդուն բնական եւ հանդարտ աճումը կը փութացնեն, զանազան կիրքեր, մանաւանդ ցանկութիւնը կը գրգռեն և շատ անգամ կենդանական հիւթին ինքնիրեն հասունելուն առիթ կուտան. շատ անգամ ալ կը թելադրեն զմարդ կրից բռնութեամբ ամէն տեսակ անվայել և անօրէն ոճիրներ գործել, որովք ինչպէս շատ անգամ լսի, մարմինը կը տկարանայ և այնուհետեւ կ'ենթարկի ամէն տեսակ հիւանդութեանց եւ կը

մատնուի տարաժամ մահուան ։ Այս ամենուն առաջքն առնելու և այս չար հետեւանքէն ազատ մնալու առաջին և գլխաւոր դեղն է երկիւղածութիւն, ջերմեռանդն աղօթքն և ճշմարիտ ու կատարեալ պահք ։

Այժմ ես կը լռեմ, և մեր բազմերախտ Աստուածարեալ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ առաքելաշնորհ Հայրապետը թող խօսի. թերեւս նորա երախտիքը շարժէ զձեզ և նորա հայրական խօսքերն համոզեն ձեր միտքը և իւր սիրովը յաղթահարէ ձեր կամքըն ու կիրքերը ։

— Գինին ու արբեցութիւնը, կ'ըսէ, իմաստուն մարդիկներն ալ կ'ապականեն, հապա մտքով ու մարմնով անկատարներուն համար ի՞նչ ըսենք ։

— « Այս խրատու խօսքերը գինիէն ու մէջն զգուշացնելու համար է, որովհետեւ գինին աւելի կը յիմարեցնէ միտքը և դէպ 'ի անառակութիւն կը գրգռէ, մանաւանդ մանուկները. եւ մարմիններէն գիճութեան հոսումը յառաջ կուգայ ։



— « Ինչպէս որ ջուրը ոչ միայն երկիրը կը ջրէ, հապա կը ողողէ և կը վնասէ, ասանկ ալ բոլոր գարմինները (ուտելիք և խմելիք). ինչպէս իւղը, մեղրը, գինին և ուրիշ շատ բաները նոյնպէս կը վնասեն. չափովը անուշ ու գարման է, իսկ չափէն աւելին տանջանք ու մահ ։

— « Արդարութիւնը պէտք է աճեցնել սուրբ սիրով, և արտասուալից աղօթքով. իսկ պահքով ալ պէտք է ցամքեցնել գիճութեան անզուսպ հոսումը որ անդամներուն ապականութիւն է ։

— « Աղբիւրներուն ջրերը և անձրեւաց կաթիլները զգալի կրակը կը մարեն, իսկ առ Աստուած եղած սէրը և ջերմեռանդն արտասուքը մեղաց կրակը կը մարէ. մարմնոյ կամքը և ինքնին շօշափմամբ գործած աղտեղի շարժմանց հոսումը (գիճութիւնը) կը խափանէ. և ուրիշ անգամ անանկ գարշելի ախտ գործել չը տար, այլ մաքուր մտքով մաքրութիւն կը ստանայ. որպէս զի անարատութեան համար սահմանուած

պատուհասը չը գիտցած ատեր և չը կարծած ժամու մէջ վերայ չը հասնի և այն չարութենէ յառաջ եկած վնասուց վրէժը չը լուծէ . քանզի սուրբերու մէջ բնակող Տէրը սրբութիւն կը սիրէ , բայց անսուրբներուն համար կ'ըսէ , թէ Անոնց կրակը չը պիտի մարի և անոնց որդը չը պիտի մեռնի և ամենուն առջեւ խայտառակ պիտի ըլլին ։

— "Մեղի ալ պահք դրուեցաւ , որ հոգին ու մարմինը մեղքի յօժարեցընող անժուժկալութեան բոլոր վընասները կը խափանէ ։

— "Պահքը գիճութեան պղծութիւնը կը չորցնէ , ինչպէս որ նեխած երկիրը չորութեամբ ( ջուր չըտեսնալով) կը ցամքի , այսպէս ալ գիճութեան ախտով նեխած անձը պահեցողութե մրքուելով անուշահոտ եւ սուրբ կը լինի ։ Պահքը , թշնամւոյն թելադրութեամբ՝ այս ախտին կրակովը վառուող մանկանց ցանկութեան բոցերը կ'արգիլէ ։

— "(Որովհետեւ անխտիր ուտել



խմելը ) կրակով բորբոքելու պէս կը վառէ և կարծարծէ ցանկութեան բոցը . կրակը մարմինը կայրէ , ամկուն միսն ու գինին ցանկութիւնը շարժելով հոգին կայրեն . արդ , թէ որ կրակը՝ վառելու նիւթ չունենալով կը մարի , ուրեմն ցանկութիւնն ալ պահեցողութեամբ կը շիջանի ։ Իսկ թէ որ մանկութիւնը առանց արգելքի ուտելու խմելու և զբօսանքի ետեւէ ըլլի թող չը յուսայ որ սրբութեամբ ողջախոհ պիտի կրնայ ըլլալ , այլ որովայնամոլութեան ցանկութիւնը ախտին կրակը վրան կը թափէ և դատածը կայրէ , եւ արտմութեան դատաստանը իրեն և իր հետ հաղորդակից եղողներուն կը պատրաստէ ։ Այսքա՛ն պատիժներ ունին որովայնամոլներն ու արբեցողները , որ միշտ անոր մէջ կը յարատեւեն եւ կ'ապականեն իրենց անձը այս ախտին տեսակ տեսակ պղծութեամբը ։ Իսկ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՀՔԸ հոգիէն ու մարմինէն կը հալածէ ամեն ցանկութիւն . . . " ։ (Յաճախապատում) ։

Մեր բազմերախտ Իմաստուն Հայ-

բաղեղին այս ճշմարիտ և անհերքելի խօսքերը ոչ միայն ճշմարիտ պահոց օգուտը կը բացատրեն և կ'ապացուցանեն, այլ նաև մեր մինչև ցարդ ըսածները կը հաստատեն: Եթէ այս ամէնը գործադրելու նպատակաւ ուշի ուշով քննէք անոնց իմաստը եւ խօսքերուն զօրութիւնը հասկնաք, կը յուսամ որ ալ ուրիշ յորդորի կարօտ չէք ըլլար և մեծ օգուտ կրնաք քաղել:

Ես գիտեմ, որ ձեզմէ շատերը ձեր նիհարութեան և անզօրութեան պատճառաւ կը համարիք ազատ և պարապ կերակրոց պակասութիւնը • բայց կը սխալիք • քանզի այդ ձեր կարծիքը կարող են հերքել այն աշխատաւոր աղքատներն որք բոլոր տարւոյն շրջանին մէջ հացի թէ քիչ անգամ մսի երես կը տեսնեն • իսկ մեծ մասամբ կերածնին հաց, ընդեղէն, մրգեղէն, կաթնեղէն ու բանջարեղէն է • նմանապէս գիւղացւոց այն մեծ մասը, որք աշխատաւոր եւ ժուժկալ են • նոքա առողջ եւ իրենց որդիքը կայտառ ու ժիր են: Իսկ դուք անոնցմէ լաւ մասունք ունիք, այնու-



ամենայնիւ յաճախ հիւանդ և տկար էք • ուսկից յայտնի է, որ այդ չէ ձեր տկարութեան գլխաւոր պատճառը • այլ ձեզ անուցանելու համար բարեբար Նախախնամութեան սահմանած կենսական ազնիւ հիւթը ձեր մէջ չը պահելն է: Ի՞նչ օգուտ սխոր տալ ձեզ շուայտութեամբ մի կողմէն ուտել խմելը, երբ արտաքոյ կարգի զօրանալով միւս կողմէն յաճախակի անխոհեմաբար սպառէք ձեր անդադար զօրութիւնը՝, որով կը մնաք միշտ նուաղեալ: Իսկ եթէ խոհեմութեամբ վարուիք և տեղի չը տայք գիճութեան որ և իցէ կերպով հասուելուն, այն ատեն պարզ ու սովորական կերակուրներն ալ կարող են զձեզ խիստ կանոնաւոր կերպիւ անուցանել, առողջ ու զօրաւոր մարմին կազմել եւ մինչերմնիդ առոյր պահել: "Բնութիւնը քիչով կը բաւականանայ • ցանկութիւնը բնաւ հերիք է չըսեր, քանզի արջառի ուելյնես, արջառի առա, ցանկութիւնը չէ թէ կը մարի, այլ առաւել եւս կը զայրանայ":

Գործեալ, յաճախ պարապ հերակուրներով և փափկութեամբ մեծցող մանուկը, երբ չէ սովրած շատ անգամ իւր ախորժակը զսպել եւ համբերել, մեծութեան հասակին մէջ որ կը գայ, որ նա չը կրնար գտնել իւր ցանկացած կերակուրները, որով թէ գժգոհ և անհանգիստ կը լինի, և թէ այն ատեն պարզ կերակուրները ագարեւ չեն կարող բստ բաւականին սնուցանել. քանզի մարմինը առաւել սնուցիչ կերակուրներու վարժուած է։ Ուրեմն 'ի մանկութենէ պէտք է սակաւ և պարզ կերակուրներով վարժեցընէք ձեր մարմինը որ թէ առողջ լինիք և թէ 'ի պատահել հարկին կարողանաք համբերել։

Այս ասելով չեմ գովեր այնպիսի բըժիշկը այն անխոհեմ հրահանգը, որ ամեն դէպքերու ենթակայ եղող մարդկութենէ վիճակը և հիւանդին ստորական կեանքը առանց նկատողութեան առնելու՝ անտարբերաբար կը պատուիրեն մսեղէն ուտել, գինի կամ օղի խմել, կամ ծուխ ծխել եւ կամ ուրիշ անտանելի



բան մի գործածել. մանաւանդ աւելի վատ կ'ըլլեն, երբ ձեզ նման մանուկներու կը պատուիրեն, որով ձեր ապագայ թշուառութեան պատճառ կը դառնան։ Քանզի ինչպէս ուրիշ անգամ ըսի, այս ամենը զձեզ գրգռելով անխոհեմաբար կը ձգեն զձեզ զանազան մեղաց մէջ, որոյմէ յառաջ կը գայ չըլլային ամեն տեսակ դժնդակ ախտեր, զորս նոյն իսկ ամենէն ճարտար բժիշկն ալ չէ կարող խափանել բժշկել, այլ միայն կը դարմանէ առանց զձեզ նոյն ախտին կեղեքիչ ճիրաններէն բոլորովին ազատել կարենալու։ Մարդասէր, գթած և առաքինի բժիշկը նախ ամենէն ըննելը դեղ ու դարման՝ հիւանդութեան բուն պատճառը կը տայ և անկէ կը զգուշացնէ հիւանդը, և ապա արտաքին դարմաններու կը դիմէ. շատ անգամ հիւանդը իւր ախտին պատճառէն հրաժարեցնելով ուրիշ դարմանի ալ կարօտութիւն չը մնար։ Ամենէն գէշ ու մարդկային առողջութեան թշնամի են այն շահամոլ բժիշկներն, որք կը պատուիրեն

տնկինգհատ, շարունակ մեղէն ուտել և ուրիշ անտակար բաներ գործածել. քանզի այս կը նշանակէ որ դուք չ'առողջանայք և իրենք միշտ շահեն դարմաններ։ Եթէ պատուիրածը հիւանդութեան դեղ մի է, պէտք է որ ուրիշ դեղերու նման առողջանալէն վերջը դադարիք զայն գործածելէ։ Քանի որ ախտին պատճառը ձեր մէջն է, ինչու ոչ դեղ ոչ դարման և ոչ ուրիշ բան մի օգուտ չըներ. վերցուր ախտին պատճառը, և ահա վերուցած կը լինիս ախտը. Հապա ի՞նչ ըսենք այն բըժիշկ անուան անարժան քանի մի հըրեշներուն, որք փոխանակ վախցնելու իւր մոլութենէն եւ կեցնելու և ազատելու, աւելի ևս այն կը յորդորեն զանազան խմատակութիւններ ընելով և անարժան միջոցներ ցոյց տալով։

Եթէ ուշադիր ըլլաք և ձեր անձին օգուտը ճանչնալով հնազանդութեան կարգաց և գործադրելու կամք ունենաք, կարծեմ զձեզ համոզելու համար այսչափ խօսք հերիք է, տեսնենք ուրեմն երկրորդ դարմանն ու իւր օգուտները։

## Թ.

2. — Երկրպագութեան հետ մեծ կապակցութիւն ունի շարունակ ՅԻՇԱՏԱԿԵԼ ԿՐԻՑ ՈՒ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ ՉԱՐ ՀԵՏԵՒԱՆՔԸ և զլուխ անոնցմէ. յիշել ՄԱՀԸ որ ամենուն կ'իջնէ և չի բապատեր որ մեք պատրաստ գտնուինք. այլ անակնկալ ժամանակի մէջ կը հասնի մեր վերայ և մեր բոլոր խորհուրդները կը ջնջէ, ուրեմն յիշելով մահը՝ պէտք է միշտ մեղքերէ հեռանալով և աղօթ միալով հակառակորդին ծառայութենէն պատրաստ գտնուինք։ Յիշել ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ որ արդարութեան օրինաց անհրաժեշտ կը պատժէ մեզ՝ արդար ու անաչառ դատաւորի մը ձեռօք դատուելու և ամէն մէկն իւր գործոց համեմատ յաւիտենական վարձք կամ պատիժ ըստանալու։

Մեղքէ և մոլութենէ հրաժարելու համար ջերմեռանդն զղջման այս յիշատակները մեծ օգուտ կը մատակա-

բորին ։ Մեղքի հետեւանաց, մեղքէն յառաջ եկած վնասներուն վերայ որդէն բաւական չափ խօսեցայ հիմա ձեզ կը մնայ անոնց վերայ խորհիլ եւ տեսնել թէ այդչափ վնասներով լեցուն գործի մը չարութիւնը հասկնալէն վերջը նորէն զայն գործելը որչափ անմտութիւն և յիմարութիւն է. երբ դուք այս վնասներն միտք առնուք, միշտ սոսկալով զանոնք յիշէք, հարկաւ պէտք է զգուշանաք եւ հեռանաք անոնցմէ. եթէ ձեր քանական զգաստութիւնը այսպէս չընէ, այն ատեն անբան կենդանիներն զձեզ պիտի յանդիմանեն եւ դուք բանականութեան մեծ պատիւը կորուսանելով անոնցմէ ստորին պիտի սեպուիք. քանզի անբան կենդանիներն անգամ իրենց վտանգաւոր եղած բաներէն կը զգուշանան, մանաւանդ իրենց վնասուած բանէն կամ տեղէն սարսափով կը հեռանան. միթէ դուք անոնցմէ աւելի վատթար լինելը, անարգ սեպուիլը յօժարաւ կ'ըլլաք, շարունակ իյնալով այն վտանգաց մէջ, որոց վնասը



ճանչցաք եւ գիտցաք ։ Յիշել յանցանքը զղջմամբ եւ ցաւելով՝ նշան է որ ուրիշ անգամ զայն գործելէ ըզգուշանալ կուզէք. իսկ ընդհակառակըն առաջին անգամ գործած յանցանքը մոռացողը կամ յանցանքն յիշելով զուարճութիւն զգացողը կը ըսկըսի նորէն կրկին և կրկին յանցանք գործել, և ասոր համար է որ ուղղուկը դժուարին և երբեմն ալ անհընարին կը լինի, ուրեմն նորէն չը մեղանչելու համար պարտաւոր է մարդ յանցանքին գէշութիւնը ճանչնայ եւ միշտ զայն յիշէ զզուանօք և ցաւօք. նաև ուրիշներուն վերայ տեսած պակասութիւններն ալ պէտք է ատէ, ուժգայ անոնցմէ և երկիւղիւ հեռանայ. ինչու որ ուրիշներուն սխալանքին ալ պէտք եմք շտկուիլ. սպասելու չեմք որ ամէն սխալմունք մեր գլխէն անցնի որ խրատուինք ։

Այս կարգին մէջ հարկ կը համարիմ յիշել նաև անկեղծ խոստովանութիւնը, որ մեծ օգուտ կ'ընէ չը մեղանչելու ։ Մեծ պարտք մի է մեղ-

ճշմարիտ խոստովանութիւնը․ բայց խոստովանիլ պէտք է այնպիսի մէկուն, որ կարող լինի զմեզ ազատել մեր ցաւէն, խրատել և զգուշացնել մեր վըտանգաւոր ընթացքէն եւ առաջնորդել զմեզ ՚ի բարութիւն և ՚ի սրբութիւն։ Շատ անգամ անխոհեմ եւ տգէտ մարդկան պատմելով մեր յանցանքը կարող եմք ալ աւելի փտաուիլ, եւ մեր սխալանաց մէջ հաստատուիլ։

Իրաւ որ «Յանցանքը խոստովանիլը գեղեցիկ առաքինութիւն է»․ բայց ոչ թէ լրբութեամբ խեղկատակութեամբ եւ յանցանքին վերայ յօժարակամ լինելով․ այլ պատկառանօք, ամօթխածութեամբ, ցաւելով, սըրտանց զղջալով, ուղղուելով և ուրիշ անգամ յանցանք չը գործելու հաստատ առաջադրութեամբ պէտք է լինի խոստովանութիւնը։ Ասոր համար է որ Իմաստունը կ՚ըսէ․ «Մեղքդ քաւելու համար առանց ապահովութեան մի կենար․ մեղք մեղքի վերայ մի աւելցներ՝ ըսելով թէ Տիրոջ գթութիւնը մեծ է։ Տիրոջ դառնալդ մի ուշացներ և օրէ օր մի ձգեր, ինչու որ նորա բարկութիւնը յանկարծակի կուգայ։ Բնաւ ոչ մի կերպով ճշմարտութեան դէմ մի խօսիր․ քու տգիտութեանդ եւ սուտութեանդ համար ամչցիր ու չէ թէ մեղքդ խոստովանելու համար, քու անձիդ համար ճշմարիտն ըսելու մի ամաչեր․ ինչու որ ամօթ կայ որ մեղք կը բերէ․ ամօթ ալ կայ որ շնորհք ու փառք կը բերէ, դու զքեզ մի արդարացներ Աստուծոյ առջեւ, ինչու որ մարդկան սիրտը ճանչցողն ինքն է»։



Արդէն յանցանքը խոստովանելուն բնութիւնն այն է, որ կը նշանակէ ցաւիլ ըրածին վերայ և ալ չընել խոստանալ․ այս պատճառաւ է որ մեղի դէմ յանցանք գործողն ալ երբ իւր ըրածին սխալութիւնը ճանչնալով կը խոստովանի և ներումն կը խնդրէ, սրտերնիս կը քաղցրանայ և կը ներենք․ վասն զի կը համոզուինք որ այլ եւս չը պիտի մեղանչէ։ Ըսել է որ անկեղծ խոստովանութեան հետ կապուած է

սրտի փափկութիւնը և նրբութիւն, որով անցեալ յանցանքները կը ջնջայ և կը հրաժարի անոնցմէ և կատարեապէս վերստին չը մեղանչել:

Մահուան յիշատակը միշտ մեր մտաց մէջ ունենալը չը մեղանչելու պատճառ է. վասն զի մահը մեր բոլոր գործոց և հեշտութեանց վախճանն է. մահը անհրաժեշտ է մեզ որով կը փոխադրուինք այս անցաւոր կեանքէն դէպ 'ի յաւիտենական կեանքը, ուր ամեն բան վերջ չունի: Արդ եթէ մեղաց ճամբով հոն անցնինք, որ թշուառութեան տանող ճանապարհն է, յաւիտենական, վերջ չունեցող թշուառութեան պիտի մատնուինք. իսկ եթէ սրբութեան ու մարդասիրութեան ճամբով գերեզմանէն անդին անցնինք, որ յերջանկութիւն տանող ճանապարհն է, յաւիտենականապէս երջանիկ պիտի լինինք. ուրեմն յիշելով մահը՝ յիշած կը լինինք մեր մեղքը և մեր յաւիտենական կեանքը եւ եթէ մեր բանականութիւնը արթուն է, անշուշտ այս յիշատակու-



թեամբ պիտի պատրաստենք մեր անձը որ արժանի ըլլանք երջանիկ կենաց. պիտի պատրաստուինք ըստ ամենայնի անանկ՝ որ երկիւղ կամ նոր պատրաստութեան հոգ մը չունենանք մահուան հասած վայրկենին. այլ մեր այս ճանապարհորդութեան ամեն պատրաստութիւնն ունեցած ըլլանք. առաքինութեամբ և սրբութեամբ ճոխանալով բնաւ բանի մը կարօտութիւն չունենանք:

Իմաստասէր մը ըսաւ թէ, «Մահուան վերայ մտածելը իմաստասիրութիւն է»: և յիրաւի, մահուան վերայ մտածելով մարդ կը զգուշանայ մեղանչելէ և անձը առաքինութեան մէջ կրթելով անով կը զարդարուի. վարքը և բարքը կ'ուղղէ, կամքն ու կիրքերը կը զսպէ, կը կանոնաւորէ և մարդկութեան կատարելութեանը կը հասնի. այնպէս որ իր կենաց հաշիւը պահանջուած ատեն պարզ երես կը ներկայանայ իր դատաւորին առջեւ և փառութիւն կը ստանայ, և ահա այս է իմաստասիրութիւն.

Նշանաւոր իմաստունին սա ճշմա-
րիտ խօսքը . « Յիշէ քու վախճանդ և
յաւիտեան չես մեղանչեր », խօսք ի-
րաւացի է . քանզի գիտէ խելամտու-
թեամբ, որ իւր կեանքը, իւր անմահ
հոգին եւ իւր բանականութեան ան-
գին տաղանդը իրեն յանձնող Արարի-
չը օր մի իրմէ հաշիւ պիտի ուզէ, տես-
նելու համար թէ այս տաղանդը շահե-
ցուցե՞ր է թէ կորուսեր է, եւ ըստ
այնմ վարձք կամ պատիժ պիտի հա-
տուցանէ : Ուստի մահուան յիշատա-
կին հետ անբաժանելի կերպով կա-
պակցած կ'ունենայ վերջին դատաս-
տանին յիշատակն ալ, որով խաղաղ կը
հրաժարի մարդ մեղաց ու մոլու-
թեանց ճանապարհէն :

Մեղքէ հրաժարելու փոյթ չունե-
ցողը և պղծութեան ու ապականեալ
գործոց մէջ յարատեւողը կը նշանակէ
որ կուրանայ մահուան խոկութիւնը,
կուրանայ վերջին դատաստանի ստու-
գութիւնն ու ճշմարտութիւնը, եւ
մինչեւ իսկ կուրանայ Աստուածու-
թեան գոյութիւնը, որ բարերարու-



թեամբ լեցուցած է զինքը և գթու-
թեամբ յայտնած է վերջին ահաւոր
դատաստանի խորհուրդը խիստ բա-
ցայայտ խօսքերով և բազմաթիւ յայտ-
նի օրինակներով, որոց խելամուտ լի-
նելու համար կը հրաւիրեմ զձեզ հայ-
րական սիրով որ դուք ջերմեռանդու-
թեամբ, աղօթքով, հեզութեամբ ու
հնազանդութեամբ սուրբ Գիրք կար-
դաք, որ կարող է ձեզ լուսաւորել
և համոզել. իսկ ես կ'անցնիմ երրորդ
դարմանը քննելու և անոր օգուտները
նշանակելու :

---

Ժ.

3. — Մեր զգայարանաց առարկայ
եղող անվայել բաներն են որ շատ ան-
գամ զմեզ մեղաց կը յօժարեցնեն.
անհամեստ տեսարաններն անարժա-
նօք նկատել, անպարկեշտ խօսքեր ը-
նելու ասելը, լսել՝ և կիրքեր գրգռող
պատմութիւններ լսել կամ կարդալ,
այս ամենը կը յօժարեցնեն զձեզ դէպ
'ի մեղք և ամեն տեսակ չարութիւն

գործելու ատեն կուտան . վասն զի ձեր միտքը կը զբաղեցնեն չար խորհուրդներով , ձեր կիրքերը կը բորբոքեն եւ կը մղեն զձեզ կուրօրէն անարժան գործերու . զորս կատարած ատեննիդ թէպէտ զուարճութիւն և հաճոյք կը զգաք , բայց այդ զուարճութիւնը ձեր ապագայ թշուառութեան սկիզբն է , ինչպէս որ տեղ մը ըսուած է , « Այն օրը որ դուն հեշտութեան օր կը սեպես , նոյնը քեզ ցաւերու օր պիտի ըլլայ » :

Զգայարանաց առարկայ եղող գործերի տեսիլներուն որչափ վնասակար ըլլալը իմաստունը լաւ կ'ուսուցանէ մեզ . « Դարձուր , կ'ըսէ , քու երեսդ հագուած չքնաղ կնիկէն , և օտար գեղեցկութեան վերայ մի նայիր , ինչու որ կնոջ տեսքին համար շատերը կորսուեցան , և ասկէց է որ ցանկութիւնը կրակի պէս կայրէ : Ցանկութեան ետեւէ մի երթար , և քու կամքիդ յօժարութենէն ետ կեցիր , թէ որ կամացդ փափաքը կատարես , ըղձեղ կը ոռայ քու թշնամիներդ վրադ



խնդացնելու համար : Բնաւ մէկու մը հետ քու անձդ պոռնկութեան մի տար , որ չըլլայ թէ անձդ ալ ժառանգութիւնդ ալ կորսնցնես : Օձէ փախչելու պէս մեղքէ փախիր , ինչու որ եթէ անոր մօտենաս կը բռնուիս : Գինին ու կնիկները իմաստուններն ալ կը մոլորեցնեն : Աղէկ է որ մարդ անզգամաց ապառնալիքը լսէ , քան թէ անմիտներուն երգը » : Նմանապէս Առաքեալն ալ կ'ըսէ , « Մի խաբուիք , չար խօսքերը՝ քաղցր բարքերն ալ կ'աւրեն » :

Այս վճիռներէն պարզապէս կը հասկնանք որ մեր զգայարանքները երբ առանց սանձելու թող կուտանք որ անպարկեշտ բաներով զբաղին , մեք զմեզ վտանգի մէջ կը ձգենք և մեղաց որոգայթէն կը բռնուինք : Ուրեմն խելացի մարդուն որչափ կարեւոր է ըզգուշանալ երեւակայութիւնն ու կիրքերը չարութեամբ գրգռող տեսարաններէ և խօսքերէ . խոհեմը և բարութեան փափաքողը կը փախչի անոնցմէ , կամ կը հեռացնէ զանոնք իրմէ , որպէս զի խորհուրդը չապակա-

նեն. ինչու որ մեղքը նախ արտաքին պատճառէ մտաց մէջ գոյութիւն կ՚առնու, այն տեղ կը կազմակերպի եւ ապա գործով կը ծնանի. ուստի խորհուրդը և մտածմունքը զսպելով բարի և օգտակար մտածմանց վարժեցնելը՝ մեղքէ ազատ մնալու ամենամեծ միջոցն է: Ինչպէս որ յառաջ ալ բսած եմ, մեղքէ ազատ մնալու համար մեր Տէրը առաջին անգամ՝ խորհուրդը զսպել եւ սիրտը սրբել պատուիրեց. և այս ալ ուրիշ կերպով չըլլար, եթէ ոչ սիրտն ու միտքը օտարական պատճառներէ զգուշանալով և հեռանալով եւ միանգամայն անոր հակառակ մտաց և սրտի վսեմ խորհուրդներ եւ ազնուական զգացումներ թելադրող առարկաներով պատուիլ և անոնցմով կրթուիլ: Ասոր համար բսած է Քրիստոս. «Թէ որ աջ ձեռքդ կամ աչքդ, կամ ոտքդ քեզ գայթակղեցնէ, կտրէ ու քեզմէ հեռացուր, ինչու որ աւելի լաւ է անդամներէդ մէկը կորսուի. քան թէ բոլոր մարմինդ գեհենին դատապար-



տուիս»: Որով սովրեցուց մեզ մեր Փրկիչը որ միշտ մեր կենաց թշնամի համարինք այն ամեն բաները, որք ըզմեզ կը մոլորեցնեն և մեր գէշ ըլլալուն պատճառ կը դառնան, որոց կարգէն է վատ ընկերակցութիւնը, որ գրեթէ կարող է ամեն չարեաց պատճառ համարուիլ:

4. — ՎԱՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ կամ՝ սուտ անուն բարեկամութիւնք գեղեցիկ ծաղկանց մէջ պահուող ժանտամահ օձերու նման անյայտ կերպով մարդ կը թունաւորեն:

Յայտնի բան է, որ մարդ ընկերական ստեղծուած ըլլալով գրեթէ անհնար է առանց ընկերի ապրիլ. բայց որչափ մեծ զգուշութեան պէտք ունի ընկեր ընտրելու կամ՝ բարեկամ ճանչնալու գործը: Ընկեր մը կրնայ զմարդ կործանել կամ կանգնել. ընկերը կարող է մարդուս կեանք կամ մահ դառնալ:

Դուք ըստ մեծի մասին ձեր մոլութիւնները վատ ընկերներէ առած էք. անանկ ընկերներէ, զորս առաջին

անգամ ձեր հոգին ու կեանքը կը հա-
մարէիք . չափազանց սերտ մտերմու-
թեամբ կապուած էիք . կը կարծէիք
թէ անկեղծութեամբ զիրար կը սիրէք
և սրբութեամբ միմեանց հետ կը վա-
րուէիք . կը համարէիք թէ միմեանց
սնունդ և կեանք կուտաք : Բայց չարը
շուտով փորձեց զձեզ և ձգեց այնպի-
սի վտանգաւոր որոգայթի մը մէջ
ուրկէ ազատիլը խիստ դժուար կը լի-
նի , և եթէ արթնութեամբ շուտով
չը զգաստանայք և մէկէն 'ի մէկ չը
թօթափէք ձեր վրայ հիւսուելու սկը-
սած շղթայն , գրեթէ փրկութիւնն
անհնար կը լինի .

Մտածեցէք անգամ մի , այդ չար սո-
վորութիւններէն ո՞ր մէկը ձեր վատ ըն-
կերակցութեան դառն ու մահահաս
պտուղը չէ . այո՛ , չար ցանկութեան
թելադրած բոլոր անօրէն գործերը
ձեր անմտութեամբ ընտրած ընկեր-
ներուն հետ ուրախութեամբ խաղա-
ցած ատեններդ սորված էք . որք վեր-
ջը ձեզ սոսկալի տրտմութեան պատ-
ճառ պիտի լինին . վասն զի " Ձեր այս



օրուան վայելած հեշտութիւնը գալիք
թշուառութեանցդ արմատն է » .

Խոհեմ , փորձառու եւ բարեսէր
անձինք մշտապէս ցաւ ու վիշտ կը զգան
երբ զձեզ տեսնեն գէշ ընկերներու
հետ վատ յարաբերութեան մէջ կը
տեսնեն : Մանաւանդ առաւել կը
տագնապի նոցա սիրտը երբ ինչ և ի-
ցէ առթիւ չեն համարձակիր այդ-
նիւթին վերայ ձեզ հետ խօսելու , ըզ-
ձեզ խրատելու եւ զգուշացնելու :
Այո՛ , ճշմարիտ է , սիրելի որդեակք
իմ , պարկեշտ եւ խոհեմ անձի մը
սրտէն արիւն կը հոսի , երբ զձեզ ըն-
կերութեան կամ բարեկամութեան
ուրը անունով , վատ յարաբերու-
թեանց մէջ կը տեսնէ . վասն զի գիտէ
որ դուք զիրար պիտի մոլորեցնէք , ի-
րարու նայելով պիտի վատթարանաք
և հոգւով ու մարմնով եղծանիք , գի-
տէ որ իրարու չար օրինակ դառնալով
պիտի չարանայք . վասն զի " Չարու-
թեան օրինակը այլոց վրայ տեսնելու
պէս ուրիշ բան չի կայ , որ կարողանայ
մարդուն ամօթը վերցնել և չար գոր-

ծիլը համարձակեցնելու » ։ Մարդ ինչ-
պէս ընկերական է նոյնպէս ալ ուրիշ-
ներուն նմանելու յատկութիւն ունի ․
յօժարութեամբ կը փութայ նմանիլ
անոր , որուն հետ կը կենակցի ․ « Մարդ
որուն հետ որ կը կենակցի անոնց բարքն
ու բնութիւնը իւր վերայ կ'առնու ․
և ինչպէս որ մարմնոյ տեսակ մի ախ-
տերը փոխադրական են ու միայն դըպ-
չելով ուրիշին կ'անցնին , անանկ ալ
հոգւոյ ախտերը իրենց մօտեցողին ։
Գինեմոլը իւր ուրախակիցներուն ալ գի-
նեմոլ կ'ընէ ․ անամօթները և լկտի-
ները խումբը ամենէն աւելի ժուժ-
կալ ու պարկեշտ մարդն ալ մեղկելով
թուլցնելով կը գէշցնէ , և ապահու-
թիւնն ալ իւր թոյնը իրեն մօտ եղող-
ներուն կ'աղդէ » ։ Այս ուրեմն որչափ
աւելի հեշտախտամոլները իրենց հետ
խօսողները կարող են ապականել ։ Ա-
ռանձնութեան մէջ կը խօսակցին ․
գաղտնութեան մէջ կը հրապուրեն ,
խաւարի մէջ կը աքլին և իրենց ապա-
կանեալ սրտէն եւ մտքէն ժայթքած
վավաշոտութեան ապականիչ թոյնը ի



րենց ընկերին սրտին մէջ կը ծաւալեն
և այն թշուառն ալ հոգւով ու մար-
մնով իրենց պէս կը ապականեն ։ Յայտնի
է ուրեմն որ խիստ մեծ զգուշութիւն
հարկաւոր է լաւաբարոյ ընկերներ
գտնելու համար ։ Դուք որչափ որ պի-
տի զգուշանայք լաւ ընկերներ ունե-
նալու , որպէս զի չը մոլորիք և չը գայ-
թակղիք , աւելի եւս պէտք է ըզ-
գուշանաք սաստիկ երկիւղածութեամբ
որ ուրիշներն ալ ձեզմէ չը գայթակղին
և ձեզմով չը մոլորին ։ Ընկերին գայ-
թակղութեան պատճառ լինելը ամե-
նամեծ մեղք է ․ քանզի մինչեւ նորա
մահուան պատճառ լինել է , անոր հա-
մար էր որ Յիսուս Քրիստոս սաստիկ
կը զգուշացնէր եւ գայթակղութիւն
պատճառողը ծնանելու կամ գերեզ-
մանի անգամ արժան չէր համարեր ․
« Աղէկ էր որ , կ'ըսէ , այնպիսին բնաւ
ծնած չը լինէր ․ կամ , Երանի թէ
պարանոցէն մեծ քար մի կախուելով
կենդանւոյն ծովը նետուէր , քան թէ
այս փոքրիկներէն մէկը գայթակղեցը-
նէր » ։

Ո՜հ, ո՛րչափ ողբալի է տեսնել ըն-կերութեան վախճանը. օր մը պիտի գայ, որ տեսնէ մարդ թէ ինչպէս իր ողջութիւնն ու անմեղութիւնը կո-րուսած է. մարմինը տկարութեան և ցաւոց մատնած և հոգւոյ կարողու-թիւններն եղծած ու բթացուցած է. և իր այն անցեալ վայրկենական հեշ-տութեանց փոխարէն իր վերայ տե-ղակալած է անբուժելի ցաւեր և ան-տանելի խղճի խայթ մի, որ հանապազ իր հոգին կը կեղեքէ։

Զգուշ կացէք, որդեակք իմ, քանզի այդ չար ընկերները շատ անգամ զձեզ բարի խօսքերով ալ կը խաբեն. ձեր պարզմտութիւնը առիթ բռնելով ան-մեղ և անվնաս խօսքերով քիչ քիչ անզգալի կերպիւ իրենց չարութիւնը ձեր անմեղ սրտին մէջ կը ծաւալեն. ձեր անմեղութիւնը իրենց չարեաց գործիք ընելով կը համոզեն զձեզ եւ կը խաբեն . . . . . . մի՛ նենգութիւն դիւական և խաբէութիւն սատանայ-ական. որով զմարդ մեղքի կը յօժա-րեցնեն և անմեղը մեղաւոր կ'ընեն.



ասանկ սուտ և ամբարիշտ խօսքերով զձեզ ձեր սիրուն անմեղութենէն կը մերկացնեն և թշուառ վիճակի մէջ կը թողուն. դեռ ևս ո՞ գիտէ ինչ հա-զարաւոր հնարքներ ունին որովք սիրտ ու միտք կը մոլորեցնեն և չարա-չար կը գայթակղեցնեն. ըմպութեամբ զանազան անպարկեշտ պատմութիւն-ներ կ'ընեն, կը ծիծաղին և զձեզ զու-արճացնելով կը թմրեցնեն. անհա-մեստ երգերով կը յուզուին և կը յու-զեն ձեր երեւակայութիւնը։ Վերջա-պէս չարերու ամեն մէկ շարժումը, խօսքը, ակնարկը մէկ մէկ ազդու ներ-գործիչ զօրութիւններ են, որոց դէմ պէտք է առաքինութեան և աստուած-պաշտութեան զէնքերով զինիլ, ապա թէ ոչ ձեր առաքինութիւնը, անմե-ղութիւնը և սրբութիւնը կողոպտե-լով զձեզ անպատսպար կը թողուն. ասոնց մօտենալն անգամ վտանգաւոր է. ինչու որ, «Չարաբարոյ մարդուն հետ հաղորդութիւն ընողը անոր մեղ-քերովը կը պղծի»։

Որով ասանկ ապականեալ մար-

ցին շատ կեղծաւոր կը լինին . ձեզի հետ սիրով կը տեսակցին և սիրելութեան խօսքերով կը վարուին մինչեւ որ նենգութեամբ խաբեն . եւ դուք ընտրութիւն չունենալով շատ մը կը մոլորիք , և կամ չարութեան պատիր հրապուրանքէն խաբուելով կը մատնուիք մեղաց և մոլութեանց կեղեքիչ ճիրաններուն և կը մաշիք չարաչար : Այս պատճառաւ պարտաւոր էք խիստ զգուշութեամբ քննել և ձեր ընկերները իրենց զգացմամբն ու խորհրդովը ճանչնալով փախչիլ անոնց չարութենէն , խայտառակել իրենց նենգութիւնը և յաղթանակել նոցա վերայ ու չէ թէ վատութեամբ յաղթուիլ անոնցմէ : Ասանկներուն յաղթելու առաջին և գլխաւոր միջոցն է սարսափով փախչիլ անոնցմէ . վասն զի « Նենգամիտ ու կեղծաւոր բնութենէ աւելի փախչիլ պէտք է քան թէ թիւնաւոր օձերէն » :

Խիստ ողորմելի վիճակի մատնուած համարելու է այն անձը որ դժբաղդաբար վատ ընկերներու ձեռք ինկած



է և ազատութեան համար չը խորհիր ու չաշխատիր բնաւ :

Արդէն ձեր հասակը անանկ հասակ մի է , յորում գրեթէ բոլոր ընթացքնիդ առանց ուղղի միշտ վտանգաւոր է . այդ հասակին մէջ եթէ բարերար խրատ տուող մի չունենաք կամ թէ անկարգութեամբ և կամապաշտութէ բարի խրատները մտիկ չընէք , միշտ դէպ 'ի վտանգ կ'ընթանայք . իսկ եթէ տարաբաղդութեամբ չար ընկերաց պատահելով դէշ օրինակներ տեսնէք և չար խրատներ ու խօսքեր լսէք , այն ատեն թշուառութիւն , դժբաղդութիւն և մահ զձեզ շրջապատած պիտի տեսնէք . ամէն կողմէն վտանգաւոր որոգայթներով բռնուած պիտի լինիք . նման կաթիլ մի մեղրի վերայ նստող ճանճին որուն շրջապատը ահագին սարդ մի ոստայն կը հիւսէ . ողորմելին երբ թռչիլ կուզէ կը տեսնէ որ մի կողմէն ոտքերը մեղրին փակած , միւս կողմէն թեւերը ոստայնին կը դպչին , վերջապէս փրկութեան ճար չը կայ . կամ այն տեղ պիտի մեռնի եւ կամ

տարթին որս պիտի լինի ։

Կամ թէ առաւել եւս կը նմանին այն պարզամիտ և անփորձ գառնուկին որ գայլոյն թելադրութեանը հետեւած՝ քաղցրիկ ճարակ գտնելու յուսով կ'ասատառէ նորա ետեւէն և խաղալով կ'իջնայ դիւրութեամբ ապառաժուտ սարաւանդէ մը վար . բայց վերջապէս յուսացածը չը գտնելէ զատ՝ կը տեսնէ որ վարը անհատին յորձանուտ գետ մի կը հոսի , մէկ կողմէն լպրծուն ժայռերը պարիսպ կանգնած են , անոնց վերայէն վեր ելնելն իրեն համար այնչափ դժուարին է , որչափ իջնելը դիւրին եղած էր . իսկ միւս կողմը թշնամին ժանիքները սրած իւր հնարագիտութեան և գառնուկին շփոթութեան վերայ կուրախանայ եւ գիշատելու պատրաստ է . բնաւ մի կողմէն փրկութեան յոյս չը կայ . միմիայն բարերար հովուին ձեռքը կարող է փրկել՝ եթէ ժամանակին պատահի կամ տեսնէ ։

Նման են հեշտախտութեան անձնատուր եղողները եւ նման են այն չար ընկերները , որք անոյշ հրապու-



րանքով ձեզ քաղցր հեշտութիւններ կը խոստանան , ձեր միտքը կը գերեն , սիրտը կ'ապականեն բայց և յետոյ կը թողուն վտանգաց , փորձման և վերջապէս յուսահատութեան մէջ . և եթէ դժբաղդաբար անաչառ ու բարի խրատատուի մը չը պատահիք և կամ լսած օգտակար խրատներդ գործադրելու ջանք չընէք , այն ատեն ձեր վախճանը խիստ վտանգաւոր է ։ Ուրեմն առանց լաւ քննելու և ճանչնալու ամէն մարդու հետ սերտ մտերմութիւն և ընկերութիւն ընելէ վախցէք . ով որ փաղաքշանօք , կեղծ խօսքերով և անհամեստ համարձակութեամբ ձեզ հետ վարուիլ կուզէ՝ անկէ բաց ՚ի բաց հեռացէք ։ Իսկ ընդհակառակն ազնուասիրտ , բարեբարոյ , անաչառ և համեստ ընկերներ , եթէ գտնէք , անգին գանձի մը պէս յարգը ճանչցէք . քանզի անանկները հազուագիւտ են ։

Ինչպէս որ վատ ընկերները մարդուս հոգւոյն և մարմնոյն մահ կ'առթեն , նոյնպէս և լաւ ընկերները կեանք եւ երջանկութիւն ։ "Գաւառի և օդերու կենդանարար զօրութիւնը մարմնոյ ախտերը բժշկելու այնչափ չօգներ , որչափ որ բարի ընկերներու հետ կեն-

ցաղավարիլը հոգւով տկարացեալնե-
րու ուղղութեանը կ'օժանդակէ ։
Բարի ընկերներու խօսքերը, խրատ-
ները, սաստերը, յանդիմանութիւն-
ները, պատիժներն ու հարուածները
մէկ մէկ կենդանարար դեղեր են, քան-
զի մեր լաւութեան համար են, ուս-
տի զանոնք սիրով ընդունելու է քան
թէ չարերու փաղաքշանքը և կեղծա-
ւորաց գովեստները, որք սուր են երկ-
սայրի և թոյն են մահացու ։

Ջերմեռանդ բարեկամ միայն այն է,
որ մեր բարի գործոց արգելք չը լինիր
այլ կը խրախուսէ, անձնատուր է միշտ
մեր առաքինութեանց օգնելու. անա-
չառ ու ահաւոր մոլութենէ և անխո-
յել բաներէ հեռացնելու. զմեզ բը-
նաւ չը շողոքորթեր. յանդիմանու-
թիւնն անաչառ, իսկ գովեստը ճշմա-
րիտ ու չափաւոր է. մեր գործոց մէջ
կը մտնէ օգնելու և բնաւ պատճառ
չը լինիր մեր յանցանքներուն. իսկ ե-
թէ դժբաղդաբար յանցանքի մէջ իյ-
նալու տեսնէ զմեզ, կը ցաւի կը մտմը-
քի և ամեն կերպիւ կը փութայ կ'աշ-
խատի զմեզ անկէ ազատելու ։

Ահա այսպիսի ազնուական անձն է
միայն բարեկամ անուան արժանաւորը



և տառապեալներուն միայն կարող ենք վըս-
տահութեամբ յանձնուիլ, այսպիսի-
ները պէտք է բարեկամ ունենալ։ Իսկ
ով որ անկեղծ չէ, ով որ նուաստա-
բար կը ցածնայ և ստութեան ու խա-
բէութեան կը դիմանի, նա անարժան
է բարեկամութեան սուրբ անուան.
նորա մէջ ամեն մոլութիւն կարող է
անուղղայ կերպիւ արմատացած լինիլ.
ուստի այսպիսիներէն թէ հեռանալ
պէտք է, և թէ նոցա մոլութիւններէն
և բարքէն զզուանօք խորշիլ հարկ է ։

Այսպէս ահա, սիրելի որդեակք
իմ, կը տեսնէք որ մոլութենէ և մեղ-
քէ ազատ մնալու գլխաւոր զօրավո-
ներէն մէկն ալ լաւ ընկերներն են.
ուրեմն ձեր ամեն կամաց և հաճոյից
ըղձանողը բարեկամ մի համարիք, այլ
առաւել թշնամի ։ Ընտիր բարեկամը
լաւ ճանչցէք և այն սուրբ անունը մի-
այն անոր յատկացուցէք. քանզի բա-
րեկամին յատկութիւնն է մեզի բարի
կամենալ, իսկ անկարգութիւնը եւ
անհամեստութիւնը բարի չէ, ուրեմն
զայնս մեզի առաջարկողներն ալ մեզի
բարեկամ չեն կարող համարուիլ,
ուստի նոցա հետ զգուշութեամբ
վարուիլ հարկ է և ոչ անտարբերու-

թեամբ, որով չարեաց պատճառնե-
րուն մէկէն ալ ազատ կը լինիք.

5. — Եւ վերջապէս այս ամենուն հետ մէկ տեղ պէտք էք սոսկալ այն վարուց ապականիչ դատարկութենէ որ զձեզ ըստ ամենայնի կը վատթարացնէ. վասն զի դատարկութիւնը ամէն մեղաց, մանաւանդ ցանկութեան մայրն է: Մարդու բնութեան ամէն կերպով ներհակ ու վնասակար է դատարկութիւնը. եթէ զգայարանքը գործելէ դադարին, միտքը անհանգիստ շարունակ կը գործէ. թէ որ բարի եւ օգտակար խորհուրդներէ զուրկ է, անշուշտ վնասակար և չար խորհուրդներով պիտի զբաղի և գրգռուելով վերջապէս խորհած չարութիւնը գործքով ալ պիտի կատարէ. «Որովհետեւ այս չար ախտը մտքի դատարկութենէն, անհամեստ խօսքերէ եւ սովորութենէ յառաջ կու գայ»: Զգայարանքն ալ չեն կարող բոլորովին դատարկ մնալ, վասն զի գործելու համար սահմանուած են. արդ թէ միտքը և թէ զգայարանքը եթէ բարի ու օգտակար զբաղումէ դադարին, հարկաւ չար ու վնասակար գործերու պիտի պարապին և սովորութիւնը վանին տիրապետելով պիտի լինին չարախօհ և չարագործ: Այս պատճառաւ պէտք է մարդ պզտիկ հասակէն միշտ իւր անձը օգտակար աշխատութեանց և մտածմանց մէջ կրթէ, որպէս զի չարին փորձութիւնը վրան չը տիրէ: Դատարկութիւնը ոյժ կու տայ մեղաց և մոլութեանց, և կը տկարացնէ հոգին ու մարմինը. վերցուր դատարկութիւնը և ահա յաղթող կը հանդիսանաս ամէն տեսակ փորձութեանց վերայ և կը փշրես ցանկութեան զօրաւոր կարծուած զէնքերը:



Աշխատութիւնը անհրաժեշտ պարտաւորութիւն է մարդու իւր կեանքն պահպանելու և զգաստ ու առողջ ապրելու համար: Բարի մարդուն համար արդար ու անմեղ գործելը մանաւոր հանգստանք մի և անխուսելի հարկ մի է զոր չէ կարող առանց վնասուելու զանց առնել: Բարի մարդը խաղաղ սրտիւ իւր բոլոր պարտքերը անպակաս կը կատարէ որոց հետ է նաև աշխատասիրութիւնն ալ: Ամեն բան բարի մարդու վայելած կերպովը կը գործէ և երբէք մարդու չը վայելած գործ մի չընէր:

Որդեակք իմ, գրեթէ միշտ ծու-

ւթիւնն ու դատարկութիւնն է որ
զձեզ այդ չար ախտին կ՚առաջնորդէ .
ցանկութեան անհնազանդական ախ-
տը դատարկութենէ ծնունդ կ՚առնու
և սովորութեամբ կը մնայ եւ ձեր
վերայ կը տիրապետէ : Եթէ անգամ
մի զժբաղդութեամբ այդ մոլութեան
սովորիք , այնուհետեւ կարծես բնա-
կան մղմամբ ձեր ամենէն օգտակար
աշխատութիւնն ալ երեսի վրայ թող-
լով կը դիմէք չար ցանկութեան չար-
ժութիւնը որ և իցէ ապօրինաւոր գոր-
ծադրութեամբ գոհացնել եւ ձեր
այդ վնասակար կիրքը յագեցնել . բայց
այդ մահառիթ ախտը գործադրու-
թեամբ ոչ կը դադարի և ոչ կը յագե-
նայ , այլ աւելի կը սաստկանայ եւ
կը զօրանայ . այդ մոլութեան բռնու-
թենէն ազատ մնալու միակ դարմանն
է զայն չը կատարելը կամ բնաւ չը
սովորիլը : Քանի անգամ որ քաջու-
թեամբ փորձութեան դիմադրելով
ձեր կրից և յօժարութեանց յաղթէք
եւ կամքերնիդ չը կատարէք , այնչափ
ալ ցանկութիւնը կը տկարացնէք եւ
անոր վերայ կը յաղթանակէք . խակ ե-
թէ թուլութեամբ ձեր անձը թող-
տաք փորձութեան առջեւ , գիտցէք



որ յաղթուած էք : Կը խաբուիք , թէ
որ կարծէք թէ ուզած ատեննիդ կը
յաղթէք , նա կը տիրէ ձեր վերայ և
ունակութեան զօրութեամբ որ մը դուք
զձեզ մոլութեան առջեւ չղթայակապ
գերի մը պիտի տեսնէք : Այն ատեն
կը նմանիք դուք անզգայ տկար չիւղի
մը , որ գետին յորձանաց առջեւն իյ-
նալով՝ կը քշուի անդիմադրելի , նորա ա-
լեաց անողորմելի հարուածներուն կը
ժամանակ մէջ ջախջախուելով և խոր-
տակուելով . որ ոչ ազատելու կամեցո-
ղութիւն ունի և ոչ ալ իրեն ազատա-
րար արգելքներէն կրնայ օգուտ քա-
ղելով ազատիլ . մէջը կը փճի և ջրոյն
խոնաւութենէն շարունակ կը փտի :
Այսպէս կը լինիք դուք ալ՝ թէ որ ձեր
դէմ եղած արգելքներէն օգուտ չը
քաղէք , ձեզ տրուած խրատներուն
չանսայք , ուրիշին վնասներուն չը խը-
րատուիք և չ՚աշխատիք փորձութեան
դէմ դնելով մերժելու և ազատելու :
Գիտեմ , հիմա շատերնիդ պիտի ը-
սէք , թէ ( ինչպէս կարելի է ցանկու-
թիւնը մերժել , քանի որ շատ անգամ
պատերազմելով չը կարողացանք հը-
նարք մի գտնել . կուզենք մերժել եւ
ազատել , բայց չենք կարող . անյաղ-

Թելի բռնաւորի մը պէս զմեզ չարա-
չար կը նեղէ և կը տանջէ ) ։

Հաւանական է, որդեակք իմ, կա-
րելի է որ դուք կուզէք մերժել, կը
կամիք ազատիլ ցանկութեան բռնու-
թենէն. բայց ձեր այդ կամեցողու-
թիւնը խիստ անկատար է, քանզի լոկ
կամեցողութիւն է. կամելոյն հետ գոր-
ծելը միշտ պակաս կը թողուք. կ՚ու-
զէք հեռանալ, բայց հեռանալու հա-
մար պէտք եղածին չափ չէք աշխա-
տիր. Առաքելոյն բանին պէս «Ցա-
կաւին արիւն թափելու չափ չը պա-
տերազմեցաք մեղքի հակառակ կե-
նալու համար»։ Դուք կ՚ուզէք ցան-
կութիւնը մերժել միայն կիրքերնիդ
հանդարտած ատենը, երբ զղջումն ու
ապաշաւը կը տիրէ, երբ խղճերնիդ ըզ-
ձեզ կը դատապարտէ։ Իսկ ձեր կիր-
քը շարժած ատեն կը թուլնայք,
կը մոռանաք ամեն օրէնք ու պա-
տուէր, կը խուլնաք խղճի ձայնին դէմ,
կը թողուք ամեն դարման եւ հնարք
ու զինաթափ անձնատուր կը լինիք ձեր
յօժարութեան և կրից։

Մտածեցէ՛ք, ձեր գործով զբաղած ա-
տեն ո՞վ զձեզ կ՚բռնադատէ որ գործեր-
նիդ թողուք և առանձնանաք ... կամ



զձեզ հրապուրող առարկային եռեւէն
երթաք սինլքոր գերիի մը պէս. յայտ-
նի է որ առաջքին բռնաւոր մը չը կայ.
այլ բռնաւորն ալ իր զէնքերն ալ ներքին
ու բարոյական են, ձեր ներքին կիրքն
է զձեզ քշողը. եւ ո՞ր մէկերնիդ այդ
աղետալի փորձանքը ձեզմէ հեռացը-
նելու համար փոքրիկ ճիգ մի ըրէք.
ո՞ր մէկերնիդ փորձեցէք թէ ի՞նչ բա-
նով կը տկարանաք և այն բանին աւե-
լի հոգ տարիք. այդ բաղէին ո՞վ իւր
չար խորհուրդները զսպեց եւ եր-
կիւղածութեամբ բարի խորհուրդնե-
րով զբաղեցաւ. ո՞վ, կըսեմ, փոխա-
նակ գործելէ դադրելու՝ առաւել գոր-
ծելու փութաց. այդ ազատել կամե-
ցողներէն ո՞ր մէկը դէպի մեղանչելու
դացած ատեն ճանապարհը փոխեց
և անանկ տեղ մի գնաց որ չը կարողա-
նայ մեղանչել. ձեզմէ ո՞վ է այն որ հը-
րապուրիչ առարկայ մի տեսած ատեն
գիտնալով որ պիտի գայթակղի. չը
տեսնելու դարձաւ կամ անկէ հեռա-
նալու ճիգ մի ըրաւ. ոչ ոք. այլ ընդհա-
կառակն այնպէս բաղձերուն ամէնքն
ալ անոնց ներհակաւ վարուած են ։

Կը տեսնէք ահա որ այս հնարքնե-
րը անկարելի և դժուարին բաներ չեն.

բայց դուք տանիլ ըլլալու տեղ ձեր
յօժար կամօքը և ձեր խղճին ազդա-
րարութեանը հակառակ տանանց դի-
մադրութեան՝ մը կը փութաք, կը դի-
մէք ձեր կամքը կատարելու, այսինքն
ձեր թշուառութիւնը գրկելու : Բա-
նական և համեստ խոնարհութեամբ
մեղքի ճանապարհէն ետ դառնալու
տեղ, հրճուանօք կը փութաք դէպի
մեղք . այդ ցաւալի վայրկեանին անցը-
նելու համար փոխանակ հնարք մտա-
ծելու՝ կ՚աճապարէք շուտով կատարել
ձեր վնասակար հաճոյքը, որպէս զի
արգելք մի չը պատահի . խիղճ եթէ
բարեբաղդաբար երախտաւոր արգելք
մ՚ալ դէմերնիդ ելնէ, կը զարմանիք և
դժբաղդութիւն կը համարիք . մինչ-
դեռ այդ արգելքը Աստուծոյ մէկ շը-
նորհքը ճանչնալով շնորհակալութեամբ
և զգուշութեամբ գործածելու տե-
ղի աշխատէիք . բայց դուք ընդհա-
կառակն անոր դէմ կը պատերազմիք
եւ խորհուրդնիդ ցրուեցնելով կամ-
քերնիդ կատարելու հնարք մի կը բըռնա-
ռէք : Ձեր ցանկութիւնը գրգռող ե-
ղձեր հրապուրող առիթներէ եւ ա-
ռարկաներէ հեռանալու տեղ՝ դէպի
անոնց կը դիմէք եւ շատ անգամ



անձամբ կերթաք կը գտնէք եւ կը
գտնէք, որով յօժարութեամբ կան-
խանիք փորձութեան մէջ, կամօքին կը
մեղանչէք, և յետոյ կը զղջաք եւ կը
ցաւիք, եւ ասով միայն կը կարծէք
թէ ազատիլ կ՚ուզէք ու չէք կրնար ·
սխալ կարծէք . . . :

Ահաւասիկ ձեր բռնած ընթաց-
քէն յայտնի է որ դուք խորապէս եւ
ճշմարտութեամբ չէք ուզեր հեռա-
նալ . մեղքը և մոլութիւնը ամէն բա-
նէ աւելի կը սիրէք . բան խիղ ձեր
անձէն ալ աւելի . քանզի սիրելը օգ-
նել եւ բարի ըլլալ կը նշանակէ . խիղ
մեղքը ու մոլութիւնը ձեր անձին վը-
նասակար ըլլալը գիտնալով հանդերձ՝
զայն կը գործէք 'ի վնաս ձեր անձին և
այլոց . ուրեմն ձեր անձն անգամ սի-
րել չէք գիտեր : Արդ եթէ ձեր ան-
ձին օգտակար չէք կրնար ըլլալ, ալ
ինչ բանի օգտակար պիտի ըլլաք . ե-
թէ ձեր անձը չէք սիրեր, ալ զո՞վ կրը-
նաք ճշմարտութեամբ սիրած ըլլալ .
ձեր ամէն ուրիշ գործերը անկատար,
ձեր բոլոր յօժարութիւններն ու սէ-
րը միշտ կասկածելի և վնասակար պի-
տի ըլլան : Քանզի սէրը բոլոր զգաց-
մանց և ներքին շարժութեանց արմա-

այն ու աղբիւրն է, երբ որ սէրը իւր հանգամանքներէն կը զրկուի, որ է՝ սրբութիւնը, բարին, համեստն ու օգտակարը, և կը չարանայ. հարկաւ բոլոր զգայումներն ու շարժութիւնները ալ իրենց աղբիւրին և արմատին մէջ կ՚ապականուին, ուրկէ կը հետեւի որ ասանկ ապականեալ զգացման տէր մարդը չէ կարող հաստատուն բարի բան մը ընել. և եթէ լաւ բան մը ալ ընէ, դիպուածական է և ոչ ուղիղ ու յօժարութեամբ. որ եթէ առիթ ունենայ այն լաւութիւնը վատութեան կարող է փոխել:

Այսպէս ահա կը տեսնէք որ երջանկութեան պայմաններէն մին է առողջութիւնը, իսկ առողջութիւնն ալ առաքինութեամբ եւ սրբութեամբ կպահպանուի. «Աստուծոյ օրինաց դէմ մեղանչողը, կ՚ըսէ Ս. Գիրքը, բժշկաց ձեռքը կիյնայ». Իմաստասէր մ՚ ալ կըսէ թէ. «Անժուժկալութեամբ խախտած առողջութիւնը դեղերու շատ գործածութեամբը բոլորովին կը քանդուի և կը կործանի»: Ուրեմն ինչպէս մինչեւ ցարդ ուզեցի սորվեցնել, այժմ՝ խօսքս վերջացնելու ատեն անգամ մը եւս կը յիշեցնեմ ձեզ թէ ա-



ռանց ժուժկալութեան և սրբութեան առողջութիւն չը լինիր, առանց առողջութեան ալ երջանկութիւն չը կայ:

Արդ դուք այս ամէնը լսելով եւ սորվելով՝ շարունակ աշխատեցէք որպէս զի բնաւ գէշ բանի մը սովորութիւն չընէք. և տարաբաղդաբար եթէ վատ բանի մ՚ ալ սովորութիւն կամ սկզբնաւորութիւն ըրած էք, շուտով թողելու ջանացէք քանի որ դիւրին է. վասն զի քանի որ կրկնէք, այնքան սովորութիւնը ձեր վրայ կը զօրանայ և յետոյ հրաժարիլը, չեմ ըսեր անհնարին, քանզի կամեցողին համար անհնարին բան չը կայ, այլ խիստ դժուար կը լինի: Այս ցոյց տրուած դարմաններուն եւ հնարքներուն մէջ կրթեցէք ձեր անձը ամենայն յօժարութեամբ և անխափան ճշդութեամբ և այն ատեն օգտակար արդիւնքը պիտի վայելէք:

Եթէ դուք ձեր մոլութիւններէն ճշմարտութեամբ ազատիլ կամենաք, հարկ եղած ատեն այս հնարքներէն զատ դուք եւս հազարաւոր հնարքներ և դարմաններ կարող էք գտնել՝ փորձութեանց դէմ մաքառելու, ձեր անձը պաշտպանելու և չարին յաղթելու

համար. իսկ եթէ այսպէս չընէք եւ ձեր ուղղութեան ու փրկութեան համար անհոգ և անփոյթ մնաք, պարզ կերպով յայտնած կը լինիք որ դուք մեղաւոր էք քան թէ անձնասէր, կամքերնիդ ու կիրքերնիդ կը սիրէք քան թէ ընկերնիդ, մալութիւննիդ աւելի կը սիրէք քան թէ զԱստուած. և ով որ ճշմարտութեամբ զԱստուած, իւր ընկերը և իւր անձը չը սիրեր, նա բնաւ բարի բան մի ճշմարտութեամբ չէ կարող սիրել։

Եթէ դուք ժուժկալութեամբ եւ ողջախոհութեամբ ածէք և յարմար ժամանակին առաքինի բնակցի մը հետ ամուսնութեան օրհնութեան կապովը միանաք, եթէ այն վիճակին մէջ ալ հաւատարմութեան և սրբութեան օրէնքը երկիւղածութեամբ պահպանելով ամուսնութիւնը միայն իւր սուրբ նպատակին համար գործածէք, այն ատեն Աստուծոյ օրհնութիւնը կը գայ ձեր վերայ, առողջ և առաքինի զաւակներ կունենաք և ընտանեկան քաղցրիկ խաղաղութիւնն ու բերկրութիւնը կը վայելէք առոյգ սիրոյ և համակրութե մէջ և յաւիտենական խաղաղութեան հանգիստը ժառանգելու արժանի կը լինիք։



Սուրբ Հոգւոյն շնորհքն ու խնամութիւնը մաղթելով ձեզ համար՝ կը փափաքիմ 'ի սրտէ որ իմ այս փոքրիկ աշխատութենէ մեծամեծ օգուտներ քաղէք և արժանի լինիք բարի մարդ, կատարեալ քրիստոնեայ եւ ճշմարիտ որդիք Աստուծոյ կոչուելու, որով եւ կը փառաւորի Աստուած, յորմէ ամենայն կատարեալ բարիք և որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

## ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԱՄ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ

ԱՆՍԿԻԶԲԷՆ սկիզբն ամէն գոյութեան,
Տիեզերաց դրաւ Աստուած զիւր իշխան.
Եւ զհամայնս ունիմ յանխախտ կայութեան,
Երջանկութեան եւ իմ սուրբ մաքրութեան։

Իսկ համայնք 'ի յարգ ու զարդ կերպարան.
Աւանց ինձի ամէն բան է ցիր ու ցան.
Ուր եւ չը կամ մահացոյժ է անդ համայն,
Համայնք ինձ կ'ածին, կ'ապրին, կան ու կեան։

Եթէ կուզես դու զիս ճանչնալ թէ ինչ եմ,
Քննէ զոյգ բոլոր մասունքն եւ անդ եմ.
Իսկ ոչ խորհէ, ամս քեզմէ իսկ հեռի չեմ.
Աշխարհիս ալ զիս յայտնած է քեզ յնդեմ։

Ինչո՞ւ դու մինչ ինձ զեմ զինքս մարդ ապուշ,
Չէ յաղթեր ինձ բնաւ մէկը, կաց զգուշ.
Դուն ալ կ'առնես իմ այժմս շափն, այլ շատ ուշ,
Եւ այն ատեն ունոյն են զեզ, ատագանք, ցայտ։

Խիստ քաղցր է քեզ ինձ դէմ գնել վստութեամբ ,
Բայց ես ապա ըզքեզ լընում դաւանութեամբ ·
Իմ նախնական հարուածք թէպէտ խիստ մեղմ են,
Բայց երթալով կը սաստկանան 'ւ անբոյժ են ։
Ասկղեպեայ· Հիպոկրատայ ձեռք * սուտ են ,
Եթէ խօսք տան թէ քու ցաւըդ կը բուժեն ·
Ես անողք և մի անխայր դահիճ եմ,
Բայց և գըթոտ դարմանիչ ու պաշտպան եմ ։
Ես մի Տիրող մեծ իշխան եմ զօրաւոր ,
Ներհակողին ոյժը կ'ընեմ ջարդ փշուր ·
Ես դայեակ եմ և մայր գթած ըստնատու ,
Կը դարմանեմ անսացողներն ինձ հլու ։
Ես բնութեան մեծ օրէնքն եմ, ինձ լսէ ,
Մինչեւ հիմա կեցած այստեղ հերիք է ·
Շուտով դարձիր խոնարհամիտ հնազանդէ ,
Գուցէ շահիս վերջին ցաւերդ · ալ բաւ է ։
Թէ մանուկ ես ասլէ կմնուխ հնազանդիլ-
Իշխանութեանս գաւազանէն պատկառիլ ·
Զգուշացիր · ինձ դէմ բնաւ չը գործես ·
Այս թէ ոչ անշուշտ պատիժ կը քաշես ։
Թէ կատարեալ մարդ ես ինձմէ ապստամբ ,
Շուտով դարձիր · չըլլայ իսպառ ուժաթափ ·
Այս իմ խրատ լինի ձեզի յաւիտեան ,
Արդար օրէնքն յարգեցէք միշտ սիրական ։

---

* Բժիշկ ։

ՎԵՐՋ

# ԴԱՍԱԳԻՐՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

| | Ղր. | Փր. |
|---|---|---|
| Աւետարան Տեառն մերոյ Յի՛ Քի՛ . | 6 | |
| Գործք Առաքելոց . . . . . | 6 | |
| Եղիշէ Պատ. Ս. Վարդանանց . . | 7 | |
| Թուաբանութիւն համառօտ . . | 3 | |
| Համառօտութիւն Քրիս. Ուսման . | 4 | |
| Համառօտ Աշխարհագրութիւն . | 7 | |
| Հրահանգ սիրոյ . . . . . . | 2 | |
| Ճարտասանութիւն առ ձեռն . | 3 | |
| Մենտոր մանկանց Պատ. Բարոյա . | 7 | |
| Յովհաննէս Կաթողիկոս . . . . | 10 | |
| Նարեկ. Աղօթամատոյց Ս. Գրիգորի | 12 | |
| Նոր Ընթերցարան . . . . . | 5 | |
| Ուսումն Պարտուց . . . . . | 6 | |
| Ուսումն Տրամաբանութեան . . | 3 | |
| Պատմութիւն Բարոյական . . . | 7 | |
| Պատմութիւն Ս. Գրոց . . . . | 8 | |
| " Նոր Կտակարանի . . | 7 | |
| " Հայոց . . . . . . | 6 | |
| " Հայաստանեայց Ս. Եկե. | 16 | |
| Սաղմոս յատուկ Դպրոցաց համար . | 6 | |
| Վարժութիւն փոխասաց Մանկանց | 6 | |
| Տրամաբանութիւն Բեշտմանճեան | 18 | |
| Քերական Հայերէն հին ոճով . . | | 20 |
| " Գաղղիարէն . . . | 2 | 20 |
| Քերականութիւն Հայերէն . . . | 4 | |
| " Գաղղիարէն . | 3 | |
| Քրիստոնէական Հայերէն Արաբերէն | 2 | |

ՀՀ Ազգային գրադարան
NL0337437